Պարույր Սևակ

# ՀԱՏԸՆՏԻՐ





Պարոյր Սեւակ

# ՀԱՏԸՆՏԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝
«ՆԱՅԻՐԻ» ԳՐԱՏՈՒՆ-ՏՊԱՐԱՆԻ

Бесплатно выдается
при заказе 4-х книг



# ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայոց գոյապայքարի բովանդակ պատմութեան ընթացքին, գուցե պայմանների հարկադրանքի տակ, թեեւ ուշացած, բայց հասատ գալիս են նրանք եւ փայլատակում հորիզոնի վրայ, որպես լուսատու աստղ, ուղղութիւն տալու, զգաստացնելու ուղեկորոյսներին, շփոթածներին եւ տատանուղնիրին։

Նրանք գալիս են ըստ ժամանակի եւ պահանջի եւ այդ բոլոր ասպարէզներում՝ յեղափոխական, քաղաքական, մարտական, թէ մշակութային...

Ահա այդպիսին եղաւ Պարոյր Սեւակը, որ հայոց բանաստեղծութեան հորիզոնի վրայ, վերջին տասնամեակներում, փայլում է տիրականօրէն, իր խօսքի, խոհի, ոճի նորարարութեամբ, խորութեամբ, պարզութեան գերազանց ցոլարձակումներով եւ ներկայ շփոթ ախարհի մէջ, լուսաւորում հայ ապրող սերունդների մտքերն ու հոգիները, կառչած մնալու մարդկային եւ ազգային մնայուն արժէքներին, ճշմարտութեան եւ արդարութեան։

Այժմ էլ, երբ տասը տարի անցել է իր արկածահար մահուան չարաբաստիկ օրից, դեռ տիրականօրէն իշխում է համայն հայութեան, հայաստան թէ սփիւռք, հոգիների վրայ եւ ամեն օր, որեւէ առիթով, որեւէ վայրում, որպես հանապազօրեայ հաց, իր խօսքը, բառն ու բանը, անում է հայ հոգիներն ու մտքերը։ Սրբում եւ մղում բոլորին արդար եւ խենթ պայքարի, յանուն բոլոր ասւած ու ասելիք ճշմարտութեան եւ հայութեան իրաւունքի, վերականգնման...

Եւ բնական է, որ ամեն մի հայ անհատ, որ գիտակից է նրա արժէքին ու մեծութեան, նրա մահուան 10-րդ տարելիցի առ-

թիւ, որ լրանում է 1981 թ. Յունիս 17-ին, չի կարող անտարբեր մնալ եւ մի որեւէ ձեւով, իր ուժերի սահմաններում, չ'արձագանգել եւ իր յարգանքի տուրքը չմատուցել այդ մեծութեան։

Ահա այդ խորը երախտագիտութեամբ, Նայիրի հրատարակչականը, իր համեստ ուժերով, որոշեց լոյս ընծայել, իրանահայ գաղութում սպառուած ու շատ փնտրուած նրա «Անլռելի զանգակատուն» կոթողական գործը ու նաեւ մէկ «հատընտիր» հատոր, ընտրուած նրա զանազան՝ մէկը միւսից գերազանց ափսատութիւններից։

«Նայիրի» հրատարակչական

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Պարոյր Սեւակ (Ղազարեան) ծնւել է 1924 թ. Յունւար 26-ին Ջանախչի գիւղում, գիւղացի ընտանիքում։

Նախնական եւ միջնակարգ կրթութիւնը ստանում է գիւղում։ 1945 թւին աւարտում է Երեւանի Համալսարանի բանասիրական ֆակուլտէտը։ Մի քանի տարի աշխատում է Երեւանում, յետագային անցնում է Մոսկւայ ուսանելու ուր աւարտում է Մ. Գորկու անւան գրական ինստիտուտը եւ աշխատանքի անցնում նոյն համալսարանում, որպէս աւագ դասախօս։

1967 թւին Հայաստանում, «Սայեաթ Նովա» աշխատասիրութեան համար ստանում է դոքտորայի աստիճան։

Պ. Սեւակը պաշտամունքի հասնելու չափ սէր ունէր գրականութեան հանդէպ։ Գրել էր սկսել վաղ պատանի տարիքից երբ հազիւ 11 տարեկան էր։

Ունի բազմաթիւ գործեր, որոնցից մեծ մասը մի քանի անգամ տպագրւել են եւ այժմ էլ անպատանելի են, թէ Մայր Հայաստանում եւ թէ սփիւռքում։

Մահանում է 1971 թւի Յունիսի 17 ին մեքենայի արկածից։

Յիշենք նրա գործերն ըստ թւականների հերթականութեան.—

| | | |
|---|---|---|
| 1— | Անմահները հրամայում են | 1948 թ. |
| 2— | Անհաշտ մտերմութիւն | 1953 թ. |
| 3— | Սիրոյ ճանապարհ | 1954 թ. |
| 4— | Նորից քեզ հետ | 1957 թ. |
| 5— | Անլռելի զանգակատուն | 1959 թ. |
| 6— | Երբ մրցում է ամբողջ երկիրը | 1961 թ. |
| 7— | Մարդը ափի մէջ | 1963 թ. |
| 8— | Սայեաթ Նովա | 1969 թ. |
| 9— | Եղիցի լոյս | 1969 թ. |
| 10— | Ձեր ծանօթները (մանկական) | 1971 թ. |

Իր երկերի ժողովածուն 6 հատորներով հրատարակւեց

1972—74 թ. թ. Երեւանում։

Սփիւռքում եւս բազմաթիւ հրատարակութիւններ է ունեցել իր գործերը, յատկապէս «Անլռելի զանգակատուն» պօէմը։

Իր գործերը թարգմանուել են բազմաթիւ լեզուների եւ ինքն էլ ունի զանազան թարգմանութիւններ ռուս եւ եւրոպացի բանաստեղծներից։

Պարոյր Սեւակը ոչ միայն բանաստեղծ էր, այլ՝ առաջնորդ, նորարար, նոր գլուխ բացող, սերունդ ստեղծող, փիլիսոփայ, գիտնական։ Նոր ակոս է բացել մեր գրականութեան եւ յատկապէս բանաստեղծութեան մէջ։ Մէկ խօսքով այն էր՝ ինչ ամեն մի ազգ 100 տարին մէկ անգամ է ունենում։

Իր բանաստեղծութիւնները կարդացուում են մէկ շունչով, չնայած որ գրել է առանց յանգի եւ չափի, բայց հոգի ու ապրում կայ նրա գրւածքների մէջ։

Նոր ըմբռնելով հայոց հին ու աւանդական բարքերը, սովորութիւններն ու ասացւածքները, մեծապէս օգտւել է իր ստեղծագործութիւնների մէջ, նրանց տալով նոր ուժ ու թափ, նոր համ ու հոտ, նորացնելով եւ թարմացնելով հրամցնում է իր ընթերցողներին։

Ոչ միայն բանաստեղծ էր, այլ գրախօսող, ուսումնասիրող, գրաքննադատ, փիլիսոփայ դասախօս, թարգմանիչ։ Մէկ խօսքով նա մէկն էր իր իսկ երգած «մեծերից», ովքեր «ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնւում են նրանք ճիշտ ժամանակին» եւ «նոր օրեցք ու կարգ սահմանում»։

Պարոյր Սեւակը շատ բան տւեց հայրենի գրականութեան ու մշակոյթին եւ դեռեւս շատ աւելին էլ կարող էր տալ, եթէ վրայ չհասնէր անհեթեթ եւ եղերական մահը։։։

Եթէ մեռնի՛լ...
թո՛ղ որ մեռնեմ
հուր կայծակից՝
Միանգամի՛ց,
մի վայրկեանո՛ւմ,
յանկարծակի՛,

# ԱՒՐՈՅ ՃԱՆԱՊԱՐՀ

## ԸՆԿԱԾՆԵՐԸ

Կռիւներում ընկան նրանք·
Ամեն մէկը՝ մի տան երազ,
Ամեն մէկը՝ մի մօր որդի,
Ամեն մէկը՝ մի աղջկայ
Երազանքը անապական,
Կնոջ՝ սէրը, հօր՝ ապագան...
Ամեն մէկը՝ անգիր մի վէպ,
Ամեն մէկը անգին մի կեանք...

Ամեն մէկը ընկաւ ա՛յլ կերպ.
Մերթ՝ ջրի մէջ, մերթ՝ հողի տակ,
Մէկը սրով, տասը՝ հրով.
Մէկը՝ արդէն յայտնի հերոս,
Տասը՝ հերոս դեռ չդարձած,
Մէկը՝ իր մօր արցունքներով
Թաց նամակը դեռ չընթերցած,
Տասը՝ նամակ սպասելիս,
Կարօտելիս, երազելիս...

Բայց զոհի՛ պէս չընկան նրանք։
Ընկան նրանք իբրեւ մարտի՛կ,
Ընկան նրանք իբրեւ մարդի՛կ,
Որ սովոր են մահը վանել
Իրենց կեանքով՝ յանուն կեանքի,
Որ սովոր են զրկանք տանել՝
Ընդդէմ ցաւի ու զրկանքի·
Որ պատրաստ են յանուն սիրոյ
Սիրուց առնել ատելու թափ·
Եւ անպարտ են ատելութեամբ։
Որ հզօր են հենց այդ սիրով·
Զոհի՛ նման չընկան նրանք։
Ընկան նրանք իբրեւ մարտի՛կ,

Որ փուլ չգայ էլ ապարանճ,
Խաղաղ մնայ ամեն երդիկ,
Եւ ծխանի ծուխը բարակ
Վե՛ր բարձրանայ պրա՛կ-պրա՛կ,
Քամուց թերթի լուրթ երկնքում.
Որ էլ ոչ մի ընտանիքում
Անտէրացած ոչ մի աթոռ
Չաղաղակի դատարկութեամբ
Թէյի ժամին, ճաշի պահին.
Որ արկերի դղրդոցին
Ու հրդեհի ահեղ բոցին
Վոխարինեն արծաթ բահի
Չրնգոցը երկնքի տակ
Եւ կարոսի շտուկը տաք,

Նրանք ընկան կռիւներում,
Բայց ապրում է հոգին նրանց
Ապրողների հոգիներում.
Չի՛ մեղմացել ցաւը կրած,
Աչելութի՛ւնը փրփրած
Եւ յաղթութեան տե՛ղչը խորին՝
Ի գիտութիւն ա՛յն բոլորի,
Որ նայում են շիրմին նրանց
Միայն իբրեւ մի բլուրի,
Որ հարթւում է կամաց-կամաց,—
Անմիտի պէս մոռանալով,
Որ եթէ չար թշնամու դէմ
Ապրողները իրենց ուժով
Ու զէնքով են անպարտելի,
Ընկածները իրենց յուշո՛վ,
Վրէժո՛վ են սարսափելի...

(1947)
*Երևան*

✡ ✡ ✡

Դու fո խաղողի ճմաճ ես եղել·
Կոտրատել են fեզ, հողի մէջ թաղել,
Բայց երբ աճցել են ցրտերը ձմռաճ,
Հողի մէջ թաղուած վարդերիդ ճմաճ,
Դու ճոr մի ուժով ճորից ըճձիուղել,
Կորուած ճիուղերդ ես վերսից ուղղել,
Եւ եթէ կրկից կորուել ես՝ արդէճ
Ողկոյզների տակ այճ ադամաճդէ,
Որ ճաfճրfել են fո fաղցրութիւճից,
Մինչ դառճութիւճդ··· դարձել է գիճի···

(1950)
*Երևան*

# ԵՐԵՒԱՆԻՆ

## Ա

Նա փոխւում է ամեն վայրկեան՝
Արքունեահաս պատանու պէս,
Ե՛ւ դեռ մանուկ, ե՛ւ առնական,
Արքունեահաս պատանու պէս։

Երէկ՝ խաղում փոշիներում
Լուացւում է այսօր նա, տե՛ս,
Հայելակերպ աւազանում
Արքունեահաս պատանու պէս։

Ինքն իր աչքում երէկ տգեղ,
Ինքն իրենից դժգոհ այնպէս,
Հիմա հրճւում է իրենով՝
Արքունեահաս պատանու պէս։

Արքունեահաս պատանու պէս
Նոր է միայն նա կեանք մտնում,
Նա ինքն իրեն նոր է գտնում
Արքունեահաս պատանու պէս։

Բայց եւ հիմա պա՛րզ է այնպէս
Նրա գալիքն ու ապագան՝
Երբ որ դառնայ նա առնական
Արքունեահաս պատանու պէս։

6. VII. 46
*Զանախչի*

## Բ

Սա պատմելու բան չէ.
Սա զգալո՜ւ բան է...
Ա՛խ, ինչ֊ա՜ն է տանջել
Ինձ իմ երեւանը։

Շէնքերից ես նայում,
Պալատներից վսեմ
Եւ ուզում ես անվերջ
Խոսե՜լ, խոսե՜լ, խոսե՜լ։

Եւ ուզում ես խոսել
Ինչ֊որ ուրի՜շ ոճով,
Բայց կորչում է ասես
Հայերէնը fո ճոխ։

Մի «չխնաղ» է մնում.
Մի «հոյակապ», մի «պերճ»,
Մի մեծ «չնաշխարհիկ».
Մի «վեհ» փոխրիկ եւ՝ վե՛րջ։

Ու ծով հիացումը
Փարատում է, լռում։
Փարատում է այնպէս,
Ինչպէս հեքիաթներում։

Լեզուդ համրանում է,
Լոկ հայացքդ է խոսում,

Կարծես մոռացում ես
Քո մայրենի լեզուն...

Սա պատմելու բան չէ,
Սա զգալո՛ւ բան է։
Դրա համար պիտի
Տեսնել Երեւա՛նը։

(1946)

Գ

Քաղաքամերձ անտառն իր կանաչին
Դանդաղ եւ աննկատ
Դեղին ոսկեթել է ընդելուզում.
Նորքի կտուրներին դդում ու չիր
Արեգակի վերջին
Լիցքերն են ծուլորէն կորզել ուզում.

Յածում՝
Արարատեան տաք հովտի մէջ,
Յորդ անձրեւից յետոյ, Երեւանն է շողում
Աշնանային շոյող արեգակի ներքոյ.
Եւ կամարնե՛րը կոր,
Եւ լորինե՛րը մայթամերձ
Շողշողում են, զինւում մի նոր կախարդանքով՝
Անձրեւաթաց փողոցների հայելու մէջ
Ճանաչելով իրենք իրենց
Ու մնալով խիստ գոհ.

Յածում Երեւանն է,
Որ թռչելով Զանգուն եւ անցնելով այն կողմ՝
Կանգ է առել մի պահ,
Որ տունն առնի, ապա
Նորից ձգւի դէպի Էջմիածին, Փարպի.
Նա՛, որ իր մի ձեռքը Քանաքեռին հպած,
Միւս թեւը իր բաց
Տարածում է դէպի այն լեռը, որ
Հին լեգենդից բացի՝ յայտնի է նոր
Մեր հայկական գերքից.

Երեւանն է ողում իբրեւ հսկայ մագնիս,
Իր կողերից կախած բազում նոր աւաններ՝
Փոքրիկ Երեւաններ,
Որոնք իրար հանդէպ, իբրեւ հարեւաններ,
Նախանձո՞տ չեն, սակայն նախանձախնդի՞ր են.
Ասֆալտ ու տուֆ հագնել,
Երեւանի կողքին ինքնավայել կանգնել —
Նրանց համար ահա թէ ո՛րն է խնդիրը։

Իսկ այդ աւանների անուննե՛րը խօսուն.
Նոր Կիլիկիան ահա,
ահա Արաբկիրը,
Ահա Նոր Արէշը,
Նոր Զէյթունը։
Իւրաքանչիւր աւան
տարբեր մի երկիր է.
Եւ ամեն մի երկիր
Արժանացել հարկի,
Լոկ այստեղ է գտել
վերջին հասցէն,
տունը։

Կարելի է կարծել, որ աշխարհը համայն
Սեղմուել ու փոքրացել
Եւ ձգելով թովիչ այս քաղաքից՝
Նրա շուրջն է սիրով խմբուել հիմա։
Ի՞նչ է, արտասո՞ղ է, զարմանալի՞։
Մի մոռացէք սակայն, որ այս հարցում
Քար զարմանքի բոլոր փակ դռներն է բացում
Տխուր մեր անցեալը —
հին բանալին։

Միճչդեռ ճորը, խնդրե՛մ.
Իբրեւ աւետագէտ եւ իսկական, եւ մեծ,
Խօսում է ո՛չ այնման, որ ցոյց է տալիս.
Երեւանն է ծողում
Աւարառեան բեղուն տաք հովի մէջ։

Երեւանն է ծողում
իբրեւ հսկա՜յ մագնիս…

(1946)

# ՆՈՐԻՑ ՔԵԶ ՅԵՏ

# ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ fաղցրաձո՜ւն,
Իմ բարձրաձո՜ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՛ճծ։
Հների մէջ՝ դու ալեհեր,
Նորերի մէջ՝ ճոր ու ջահել։
Դու՝ խաղողի խչմարուած վազ,
Վշտերդ՝ ջուր, իճիդ աւազ։
Դու՝ բարդենի սաղարթաշաս,
Առուն ի վար փուած փշաս։
Դու՝ կիսաւեր ամրոց ու բերդ,
Մագաղաթեայ մատեանի թերթ։
Դու՝ Զւարթնոց — աւեր տաճար,
Կոմիտասեան ծիրանի ծառ։
Դու՝ ջրաղաց խորունկ ծորում,
Դու՝ հորովել աճուռ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի։
Դու՝ ճե՛ս, ճիզա՛կ, մկո՛ւնդ կոպիս,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ աճգի՛ր վէպ, դու Սասնայ ծո՜ւռ...

Իմ փառապա՛ճծ,
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրաձո՜ւն։
Իմ fաղցրաձո՜ւն։
Դու՝ մրգերի շեմարան,
Ոսկեվազեան գինու մառան։
Դու՝ թաւշէ դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատեան խաղող սեւաչ։
Դու Սեւանի վառուող կոհակ,
Երեւանի սիւն ու խոյակ։

Դու՝ հանգրւան, կանչող փարոս,
Դու հայկական գերբ ու դրօշ·
Խօսուն վկայ կոտորածի
Ու վճիռ աչք ցամքած լացի·
Աղաւնութեան ահեղ ատեան,
Սրի պատեան,
Սիրոյ մատեան—
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան,

## ՄՕՐ ՁԵՌՔԵՐԸ

Այս ձեռքերը՝ մո՜ր ձեռքերը,
Հինաւուրց ու նո՜ր ձեռքերը...

Ինչե՜ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պահակելիս ո՜նց են պարել այս ձեռքերը՝
Ի՜նչ նազանոզով,
Երազանո՜զով։

Ինչե՜ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լոյսը միշտ լոյս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնել,
Նրա արդար կաթով սնել։

Ինչե՜ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լռութե՜մբ,
Համբերութե՜մբ։

Ինչե՜ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Երկինք պարզած սիւն են դառել այս ձեռքերը,
Որ չփլւի իր տան սիւնը՝
Որդին կուից դառնայ տունը։

Ինչե՜ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Միշտ տատի ձեռ են դառել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...
Ինչե՜ր, ինչե՜ր, ինչե՜ր չարժեն այս ձեռքերը՝
Նո՜ւրբ ձեռքերը,
Սո՜ւրբ ձեռքերը։

...Եկէք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած, սնած,
Մեզ աշխարհում շահած, պահած,
Մեզնից երբէք չկշտացած,
Փոշի սրբող, լացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող
ա՛յս ձեռքերը՝
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մեծախի պէս
խա՜ս ձեռքերը...



Մօր ձեռքերը...
Պ. Սեւակի մայրը

## ՉԵՄ ՈՒՇԱՑԵԼ

Ուշացե՞լ եմ։ Թո՛ղ որ այդպէս, թո՛ղ որ, անգի՛ն,
Անծանօթ եմ աղջըկական fո նազանիից։

Անտեղեակ եմ, թէ ինչպէս ես դու ժպտացել,
Տասնըվեցըդ երբ որ նոր է դեռ լրացել։

Թո՛ղ որ ես չեմ ստացողը fո առաջին
Աղջըկական ո՛չ համբոյրը, այլ լոկ պաչի՛։

Որ չգիտեմ, թէ ինչպէս ես դու կարօտել,
Երբ որ fսան-fսանհիանգն ես թողել տեւ։

Թո՛ղ որ, անգի՛ն, հանդիպել եմ ես fեզ այնժամ,
Երբ դու արդէն անկարող ես ապրել բաժան։

Քո անցեալից, անցած կեանքից, որ առանց ինձ
Դու ապրել ես կա՛մ այլոց հետ, կա՛մ առանձին։

Թո՛ղ որ այդպէս,—ուշացել եմ թող գարունից,
Բայց աւելի fիչ չի թովում աշունը ինձ։

Ինչո՞վ է լաւ արշալոյսը մայրամուտից,
Աշնան յասմիկն ինչո՞վ է վատ գարնան պուտից։

Չէ՛, աւելի՛ն։ երբ աշխարհում օրն է մարում,
Ծաղիկները շատ աւելի սուր են բուրում...

24· XII· 53
*Մոսկւա*

*
* *

Մաղի մէջ
Ջո՞ւր կմնայ,
Պաղի մէջ
Հո՞ւր կմնայ,
Այրում եմ
Թէ ածկրակ,
Էլ մոխիր,
Մո՞ւր կմնայ։

*
* *

Ես բոնել ուզեցի,
Եւ դու պուկ տեցիր,
Ես արեւ ուզեցի,
Եւ դու շուք տեցիր։
Իսկ հէնց որ՝ դառնացած՝
Ուզեցի արտասուք,
Արցունքը շատ էր ի՞նչ,
Որ եւ սուգ տեցիր։

*
* *

Նոյն հին վանքն է,
Բայց այլևս սուրբ չի թում այս վանքը։
Նոյն լեզուակն է,
Բայց մի տեսակ կեղծ է հնչում այս զանգը։
Հանգը տեղը, վանկը տեղը՝
Ոտանաւոր է կարծես,
Նոյնիսկ վաղուց անգիր գիտես,
Բայց... կորել է յուզանքը։

*
* *

Իմ արտի սիւնը
Տեղից խախտել են...
Իմ տան արբերը
Ո՞ւր են—գաղթել են...
Փառք ու յաղթանակ
Իզո՜ւր մաղթեցին,—
Չգիտեմ՝ ովքեր,
Բայց ինձ յաղթել են...

*
* *

Տանը լինեմ, լինեմ մայթում՝
Քո ծիծաղն է դեմքիս ցայտում,
Քո ժպիտն է ամեն կողմից
Արեւի պես ճառագայթում։
Ազատ զգամ, զգամ գերւած,—
Միեւնոյնն է, սիրտս իրեն
Միտս զգում է ինչ-որ ացտես
Որոգայթո՛ւմ, որոգայթո՛ւմ։

*
* *

Յիմար ժպիտով
Ծածկում եմ վէրքս—
Ներսից սեւ՛-սեւ՛ է,
Դրսից է ճերկքս...
Ինձս ո՞նց դառնամ
Հեմիաթի տղան
Եւ ինձ ո՞նց ասեմ.
—Արեւայ՛, դու մե՛րկ ես...

*
* *

Ինքը յոպոպն է հոտած,
Կարծում է՝ բոյնն է հոտած։
Սեւջուր առուն ճահճացել՝,
Կարծում է՝ հունն է հոտած։
Եւ հակառակն է լինում.
Ի՞նչ ես ուզում խեղճ թխսից՝
Առողջ ճտեր ո՞նց հանի,
Թէ տակի ձուն է հոտած։

*
* *

Ա՜խ, արդէն ականջ է ծակում
Այս անվերջ զնգոցն ու զանգը,—
Լաւ երգը կրկնել տուր անվերջ՝
Կցնդի ճախկին յուզանքը։
Թէ ջուրը նոյն ափն է ծեծում՝
Լճակ է եւ կամ ճահիճ է,—
Մաֆո՛ւր ջուր, հոտա՛ծ ջուր չկայ,
Գործում է միայն հոսա՜նքը։

*
* *

Հովիտը ինչ-որ տեղի,
Խլեցիր եւ սարաւանդը.
Քեզ ինչ էր այս այրող սէրը,
Վառեցիր եւ կիզող խանդը։
Ուզեցի, որ յավէտ կապուեմ,
Որ սիրով խայտամ ու ծփամ,
Ու կապը դարձրիր կապանք
Եւ տուն կոչեցիր... այս բանտը։

*
* *

Թէ ինձ համար ինչ է պահուած՝
Ինչ-որ էլ կարգին չգիտեմ...
Հազար գեսից թռել — անցել,
Կանգ եմ առել մէկի դէմ,
Կանգ եմ առել, չեմ հասկանում.
Թռչելո՞ւց եմ սարսափում,
Թէ՞ ինձ ոչինչ չի գրաւում
Ու չի ձգում այն ափում։

*
* *

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե չասեմ՝
Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ,
Քա իմ բանը
Ո՞նց կլինի։

*
* *

Թե ինձ այրեց
արտասուքը,
Ինչի՞ս է պետք
էլ ոն ծուխը,
Մարդ է մեռնում
ոն երեսից,
Ինչի՞ս է ոն
սեւ ու սուգը...

*
* *

Մի ամի՞ս է, թէ՞ մի տարի,
թէ՞ մի դար
Այն օրւանից, ինչ այս դռնից
չմտար,
Շեմիից կանգնած՝ այդ ի՞նչ բառ էր
ասացիր,
Մոռացել եմ—մի ամի՛ս չէ,
այլ մի դա՛ր։

*
* *

Դո՛ւ ես ծգում,
Այնինչ ես եմ կսրւում.
Դո՛ւ բռնւում,
Այնինչ ես եմ փեսրւում։
Ի՛նչ էլ անեմ, ի՛նչ էլ չանեմ,
Ա՛յ ֆեզ բաև,
Կուժն ու կուլաև
Իմ գլխից են կոսրւում։

# ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԷՋ

Դո՛ւ՝
երկու տա՜ո,
Դո՛ւ՝
հասարա՜կ մի դերանուն,
Եւ ընդամենն այդ fո երկո՛ւ հատիկ տառով
Այս բովանդակ աշխարհին ես ինձ տէր անում...

Դո՛ւ՝
երկու տա՜ո,
Ու ես գարնան հողի նման
Քո կենսատու ջերմութեանն եմ ընտելանում...

Դո՛ւ՝
երկու տա՜ո,
Եւ ահա ես
Երջանկութեան համն եմ զգում իմ բերանում,
Անջատումին ըմբերանում
Եւ թերանում եմ կատարել հրամանը տառապանքի...

Դո՛ւ՝
երկու տա՜ո,
Ու ես, անգի՛ն,
Ինձանից ինքըս վերանում՝
Փոշիացած հերոսների
Ու ծնելիք հանճարների
Դասակին եմ ընկերանում...

Դո՛ւ՝
երկու տա՜ռ,
Ու երբ յանկարծ
Թողնում ես ինձ ու հեռանում՝
Լիւած տան պէս ճեղք եմ տալիս,
Ծեփըս թափում, աննէրանում,
Եւ կսկիծը, ցեցի նման.
Բոյն է դնում իմ սիւնի մէջ,
Ջեղուձի մէջ ու գերանում...

Դո՛ւ՝
երկու տա՜ռ,
Դո՛ւ՝
հասարա՜կ մի դերանուն...

## ԱՌԱՋԻՆ ՍԷՐԸ

Պէ՛տ չէ, սիրելի՞ս·
Զո՞ւր ես երդւում,
Առաձգ երդմաձ էլ ես հաւատում եմ,
Որ հիմա օրըդ մի դար է տեւում,
Որ փուշ կարոսը ֆեզ ծւատում է,
Որ գիշերձ ի լոյս չես ֆձում յաճախ,
Որ իմ աճուձճ ես կրկրձում յաճախ,
Որ աղջըկակաձ ֆո մաֆուր բարձիճ
Թեֆւած ես տեսձում մի ծերուկ արծիւ
(Անգըղ էլ լինի արծիւ է թում),
Որ ֆեզ աշխարհում ոչի՞ձչ չի թովում,
Որ առաձգ սիրուս կեաճքըդ կորած է,
Որ...

Գիտե՛մ, չա՞ըս·
Զո՞ւր ես երդւում։

Բայց գիտեմ եւ այճ,
Ինչ դո՛ւ չգիտես·

Առաջիճ սէրը, ինչպէս որ հացը,
Ի՞ձչ էլ որ ածես՝ միշտ կուս է գձում...

## ԼՈՒՍՆԱԶԱՐ ԿԱՐՕՏ

Սկսւում է գիշերն արդէն։

Եւ աստղերը,
Որ ողջ ցերեկ խոր ֆուն մտան,
Հիմա իրենց ճառագայթէ
Սուր փշերն են ոգնու ճմաւ ճորից ցցում՝
Ընդդէմ մթան։

Եւ անպատշպան իմ կարօտը,
Որ անցել է խոր ընդյատակ
Ու չի ուզում ճորից տրել շղթաների ու կապանքի,
Իմ կարօտը մատնւում է ֆո անունից։
Լրտեսի՛ պէս նա մատնում է տառապանքին։

Մեծ ֆաղաքը լեթարգիական ֆուն է մտնում,
Իսկ ես՝
լուսնո՛ց,
Ես՝
լուսնահա՞ր,
Շեղ-սայթաֆուն կտուրներով
Ու ֆիւերով ատամնաբաց,
Մինչեւ անգամ շանթարգելով,
Ահա ճորից էզ եմ գալիս՝
Կեանքըս կրկին վտանգելով։

Երբ յանկարծ դու ֆո հեռից նկատէիր
Ու ծայն տայիր՝
Ճչալու պէս «ա՛խ» անելով՝
Իմ վտանգւած կեանքի համար վախենալով,
Գիտե՞ս՝ ինչո՛վ կվերջանար,
Իմ ցանկալի՛ս։

Գիտե՛ս·
Մահո՞վ է վերջանում,
Երբ լուսնոտին ձայն են տալիս·

Բայց ես բնա՛ւ երկիւղ չունեմ,
Թէ կրնկեմ ցած
Եւ իմ արեամբ հալեցնելով ձիւնը մայթում՝
Դռնապանին գէթ կազատեմ ձիւն բերելուց,
Այդ չի՛ լինի,
Որովհետեւ ձայն չե՞ս տայ դու,
Եւ դա—
        ո՛չ թէ բարութիւնից,
Այլ··· պարզապէս չսիրելո՞ւց···
. . . . . .

22. III. 59
*Մոսկւա*

## ԳԼԽԱՊՏՈՅՏ

Դու իմ վերջի՜ն՝ թիւրիմացաբար,
Եւ իմ միա՜կը՝ ճակատագրով…

Սիրոյ բովանդակ կոչականները մանկական են միտս,
Մինչդեռ ես արդէն ապրել եմ այնման,
Որ իմ տարիքում
Դեղձին տասն անգամ մեռած կլիներ։
Իսկ ինչպէ՞ս ես դու։
Ջէ՞ որ չեմ տեսել ես այնքա՜ն տարի,
Որքան տեսել եմ։
Եւ աչերիս մէջ կայ անլցելի մի դատարկութիւն,
Քանի որ չկաս
Դո՛ւ—
Իմ վերջի՜ն՝ թիւրիմացաբար,
Եւ իմ միա՜կը՝ ճակատագրով։

Իմ երթուղիներից
Կախուած է հիմա մի ամբո՜ղջ աշխարհ՝
Մի գունդուկծի՛կ,
Բառերի մի պա՜ռս,
Որ իր բզզոցով գլխապտոյտ է յարուցում իմ մէջ։
Եթէ երբեւէ բառերն այդ պիտի իմ բերնից թռչեն՝
Թող թռչեն սիրո՛վ,
Մի՛միայն սիրով
Եւ մի ճախրանքով աստուածաշնչեան,
Որի մէջ կայ գոլ անապատայինն,
Աւազների սողք ու մտապատրանք։
Մի՞թէ ձո հեռից՝
Քո անտառների խոնաւ օդի մէջ,
Անվերջ չես լսում խօսքերս չասուած։
Իսկ թէ լսում ես խօսքերս չասուած՝

Ջե՞ս զգում արդեօք մի գլխապտոյս,
Որ, թուում է ինձ, պիտի որ զգաս
Սրբօրէն յղի դեռահաս կանայք,
Որոնցից մէկին,
Մի՛միայն մէկին
Կարողանայի՜ մտովին ասել.
«Դո՜ւ—
Իմ վերջի՜նը՝ թիւրիմացաբար,
Եւ իմ միա՜կը՝ ճակատագրով»։

Քիչ եմ օգտուել մենք բարութիւնից,
Եւ դրանից չէ՞, որ հետզհետէ
Բարի եմ դառնում,
Եւ այնքա՜ն բարի,
Որ խղճում եմ ես... մենակութեանս էլ.
Նա էլ է տանջուել ու յոգնել։ Մեղք է։
Եկ ամեն մէկըս բացենք մեր փեղկը,
Որ նա դուրս թռչի իր փակ վանդակից,
Եւ կամ հանդիպենք գէթ այնտեղ... այնտեղ,
Ուր հանդիպում են այգն ու գիշերը,
Իսկ հանդիպո՞ւմ են նրանք երբեւէ, —
Ես ի՜նչ իմանամ։ Գուցէ գիտես դո՞ւ,
Դո՛ւ—
Իմ վերջի՜նը՝ թիւրիմացաբար,
Եւ իմ միա՜կը՝ ճակատագրով։

Ու ծիւն է գալիս,
Ինչ-որ չե՜րմ մի ծիւն.
Հիւսիսն է յղում հարաւին ողջոյն։
Եւ ծեանն մէջ ինչ-որ բուրմունք կայ գարնան,
Հեռաւո՜ր մի բան.

Մի յիշողութի՛ւն
Արի բարութեամբ հոգեբուժական
Չեն մեռնում, ճիշտ է, բայց եւ չեն ապրում,
Ինչպէս չի մեռնում, բայց եւ չի ապրում
Սէ՛րս—
վերջի՜նըս՝ թիւրիմացաբար,
Բայց եւ միա՜կըս՝ ճակատագրով:

Արի՛ իմ ներըս մեզնից բարձրանանք՝
Թոյլ տանք արարքներ իմ ճաժխտումի.
Փոխադարձաբար իրար նեղացնենք
Ու վիրաւորենք փոխադարձաբար,
Որ... կարօտն իմը հատնի իրեն հետ,
Ու տառապանքը իմ իրեն ների,
Ես էլ հաւատամ, որ դու չես եղել
Ո՛չ իմ միակը՝ ճակատագրո՜վ,
Ո՛չ իմ վերջինը՝ թիւրիմացաբա՜ր...

26. I. 62
*Երեւան*

## ՊԱՏԱՀԱԲԱՐ ԵՆ ՊԱՏԱՀՈՒՄ ԿԵԱՆՔՈՒՄ

Մի՛շտ էլ սիրածին պատահաբար են պատահում կեանքում
Ու հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբա՛ր…

Թէ կուզես՝ լռի՛ր,
Թէ կուզես՝ ոռնա՛յ,
Թէ կուզես՝ ծամիր սեփական լեզուդ,
Թէ կուզես՝ խցիր բերանըդ բարձով,
Թէ կուզես՝ ոտքով հարւածիր բարձին.
Հաւատացեալ ես՝ հայհոյիր աստծուն.
Հաւատացեալ չես՝ աստծուն հաւատայ.
Թէ կուզես՝ ուզիր է՛լ չուզել — իզո՛ւր,
Թէ կուզես՝ ուզիր է՛լ չապրել — իզո՛ւր…
Ու, երբ կուզես, ապրելն այս է հէնց,
Ու սէրն իսկական հէնց այս է որ կայ.

— Պատահաբար ես պատահում կեանքում,
Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս…

26. 1. 62
*Երևան*

Քամին է երգում ինչ-որ եղանակ,
Որ Բեթհովենին պատիւ կբերէր։

Մութ հորիզոնին աղօս այգալոյս՝
Մի ռեմբրանդեան նորայայտ նկար։

Շէքսպիրին է կեանքը ծեռ առնում՝
Իր ողբերգական դրամաներով…

Իսկ մե՜ծ՝ ե՛ս ու դո՛ւ… աւետս եմ խաղում
Եւ… մի այնպիսի՜ համոզուածութեամբ,

Որ Սերվանտէսի հետոսն էլ չուներ…

20. III. 59
*Մոսկւա*

## ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՞ւշ-ո՞ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնւում են նրանք ճի՛շտ ժամանակին։
Եւ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց։

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնւած՝
Սերում են նրանք եւ ա՛յն վայրերից,
Որ էլ չէ՞ր կարող ապրել քարայրում։

Սերում են նրանք եւ ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում։
Սերում են նրանք եւ ա՛յն պատանուց,
Որ սիրահարւեց իր իսկ պատկերին։

Սերում են նրանք բոլո՞ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թէ անե՛ն մտածածն իրենց,
Ի՞նչ փույթ թէ Մեռնեն ժամանակից շուտ:

Անվտանգ՝ ինչպէս հրդեհն արեւի
Անվնաս՝ ինչպէս օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետութիւններին
Մինչեւ իսկ իրենց կամքի հակառակ։

Արքաների հետ խօսում են «դու»-ով,
Եթէ, իհարկէ, լսում են նրանց,
Իսկ թէ չեն լսում՝ մէ՞կ է, չե՛ն լռի,
Կխօսեն նոյնիսկ իրենց կոշկի՛ հետ։

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝
Յայտարարում է եւ օրենքից դուրս։
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժուար ու մեռնում են հետս...

9. X .61
*Երևան*

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿԵԱՆՔԸ

Արարատի պես—
Ոտերը՝ հովտի ջերմութեամբ վառած,
Կատարը՝ սառած։

Տիեզերական հրթիռի նման—
Բոցը՝ դէպի ես,
Գլուխը՝ առաջ։

Շրթերի վրայ՝ համրածայն բառեր,
Իսկ սրտում՝ դղիրդ,
Իսկ հոգում՝ շառաչ…

. . . . . .

Թո՛ղ ձրա կեանքը միճչեւ իսկ լիճի
Մի շուտասելուկ եւ կամ հանելուկ,
Միայն թէ դառնաւն խօսքերն էլ… առած…



Պ. Սեւակը հոր՝ Ռաֆայէլ ամիի ու կրտսեր որդու՝ Կորիւնի հետ

## ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌԸ

Պոկված անտառից՝
Մենակ ու մոայլ,
Մի ծառ է ցցել բարձունքի վրայ։

Ինչպե՞ս չի սիրում անտառը նրան,
Ինչպե՞ս է ծաղրում,
Փրփչում վրան,
Ի՞նչ է թե հսկան
Այս թզուկների
կամքից
ու
կեանքից
Չի՛ կարողանում իրեն ենթարկել,
Ի՞նչ է թե նրանք չե՛ն կարողանում
Իրենց նեղուածքում սրան բանտարկել…

Եւ չի՛ հասկանում անտառը յիմար,
Թէ ծառն այդ ինչ է անտառի համար։

Կաղնի՞ն՝
Անտառի կանաչ շանթարգե՞լ…

21. IV .59
*Մոսկւա*

## ՈՍԿԻՆ ՎԵՐՍՏԻՆ ՈՍԿԻ Է ՄՆՈՒՄ

Շրթերիս վրայ խոսքեր են դողում՝
    խոսքեր արտառո՛ց,
    Իմաստազրկա՛ծ,
    Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատեաններուի մէջ,
Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր։

    Ուզում եմ ասել.
    —Գթասի՛րս եղէք,
    Եղէք ողորմա՛ծ,
Մարդու նկատմամբ մա՛րդ եղէք, մարդի՛կ։

Ու երբ չգործած մեղքերի համար
Մարդը հայցում է մեղքի թողութիւն
    Ու ներողութիւն՝
    Ոչնչի՝ համար,—
Գոնէ գթասիրտ-ողորմած եղէք,
Անգութներուն մէջ մի՛ եղէք յամառ...

Շրթերիս վրայ խոսքեր են դողում՝
    խոսքեր արտառո՛ց,
    Իմաստազրկա՛ծ,
    Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատեաններուի մէջ,
Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր։
    Հնացա՛ծ խոսքեր,
    Հնացա՛ծ,
Ինչպէս ոսկին է հիմա,
Որով աո ու ծախ արդէն չեն անում,

Սակայն դրացից ոսկին ո՛չ մի տեղ
Երբեք չի դարձել ժանգոտած թիթեղ.

Ոսկին վերսին ոսկի՛ է մնում...

1. XI. 58
*Մոսկվա*

## ՄԻԱՆԳԱՄԻՑ

Ասում են, թէ միանգամից կեանքում ոչի՜նչ չի կատարւում.
Միանգամից ո՛չ մի կարպետ եւ ո՛չ մի գորգ չի պատրւում,
Միանգամից բերդ չի շինւում ու չի ֆանդւում միանգամից,
Միանգամից ծիւն չի գալիս եւ չի փչում անգամ ամիսն։

Մի՛րգ չի հասնում միանգամից, ո՜ւր մնաց թէ՝ խնկօֆանեան,
Զո՛յգ չեն կազմում միանգամից, ո՜ւր մնաց թէ՝ երեմեան։
Միանգամից չեն կտցանում եւ չեն զգում ջրի կարիք,
Ո՛չ այսօրն է անցեալ դառնում, ո՛չ էլ վաղն է դառնում գալիք։

Այս ամենը ճիշտ է, հարկա՛ւ,
Հէնց այսպէս է, ինչպէս որ կայ։
Սակայն եթէ իմ կեանքի մէջ գէթ հարցնէիր մի՛ անգամ ինձ,
Թէ ես ի՞նչ եմ գերադասում,
Ի՞նչ եմ ուզում
Ու երազում,
Ես կասէի.
—Ինչ լինում է՝ թող որ լինի միանգամի՜ց...

28. I. 62
*Երեւան*

# ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԷՋ

Իբրեւ սկիզբ ընդամենը ես այս կասեմ.

Աշխարհում կայ ջահելութի՛ւն,
Կայ կեա՛նք,
Կայ սէ՛ր,
Կան տղաներ եւ աղջիկնե՛ր.
Կայ շէ՛կ, կայ սե՛ւ.

Ես մի աղջիկ՝
Սեւ աչքերով, սեւ մազերով,
Ինձ գերել է, խելքից հանել իր նազերով,

Գալիս է նա եւ շատ յանախ
Ջեռքս բռնում, ափըս բացում,
Սեւ աչքերը մերթ՝ կկոցում,
Մերթ՝ լայն բացում,
Մերթ փակում է,—
Սկըսւում է... գուշակո՞ւմը.

—«Ապո՛ւ-ապո՛ւ, կապո՛ւ-կապո՛ւ...
Եկ մի տեսնենք՝ ի՞նչ կայ ափում...».

—«Աթո՛ւ-աթո՛ւ, հա՛ թուհ-հա՛ թուհ...
Տեսնենք՝ տղան ի՞նչ է ատում...».

—«Անա՛մ-փերո՛ւ, չանա՛մ-փերո՛ւ...».

Եւ մի օր էլ չեմ համբերում.
—Գիտե՛մ, գիտե՛մ,
Գուշակ է՛լ ես, կախարդ է՛լ ես.
Ջէ՞ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես։
Բայց իմ ափը ի՞նչ է տալիս։
Ինքդ գիտես, որ մի ափը
Միևչեւ անգամ ծա՛փ չի տալիս։
Ախար ի՞նչ կայ այդ ափի մէջ։
Կուզե՞ս
դառնամ
մարդ՝ ափի մէջ...

Մարդկանց առաջ եւ fn առաջ
Ահաւասիկ ինքս եմ բացում
Ինչ որ ունեմ—ինչ որ չունեմ
Իմ հոգո՛ւ մէջ.
Մարդկանց առաջ եւ fn առաջ
Ահաւասիկ ինքս եմ բացում,
Ինչպէս մանուկն օրորոցում՝
Երբ ժպտում է...

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ

Ես յոգնել եմ մանրամանդակ պաղ խօսքերից։
Լաւ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...



Մի տեսարան Պ. Սեւակի թաղումից



Պ. Սեւակի գերեզմանը հայրենի գիւղում

## Մ Ե Ռ Ն Ե Լ

Եթէ մեռնե՜լ…
Թո՛ղ որ մեռնեմ
հուր-կայծակից՝
Միանգամի՛ց,
մի վայրկեանո՛ւմ,
յանկարծակի՛,

Այնմա՜ն արդար,
խղճիս ձայնին մի՛շտ ունկընդիր,
Որ՝ համաձայն բիբլիական հին լեգենդին՝
Հանգիստ անցնեմ եւ ասեղի ճեղքիկ ծակից…

Եթէ մեռնե՜լ…
Թող սպանե՛մ,
թող կործանե՛մ
Այնպէս ապրած եւ բան արած,
Որ ճորածին մանուկների տեսով ճորից
վերածնեմ՝
Իմ անունո՛վ կնճեռ նրանց…
Եթէ գամել՝
փարոսի՜ պէս,
Առնամամել՝
հերոսի՜ պէս,
Ու frfrել՝
դրօշի՜ պէս…

Եթէ մեռնե՜լ…
Բայց առայժմ ապրե՛լ է պէտք։

## ԵՐԳԵԼ

Ա՜խ, թե երգելիս
Զրնգալ, ինչպես բահը ջրտուխի
Ինչպես մանգաղը ցորենի արտում,
Դղրդալ, ինչպես ջաղացի ջրտուն,
Եւ լռել, ինչպես աստերի շոգին։

Իսկ դուխ լսե՞լ էխ՝
Ինչպես է երգում խամին նեղ ձորում,
Մեղրի կաթիլը ինչպես է ծորում,
Ինչպես է խոտը կրծում ճագարը,
Ինչպես է լիզում հորթն աղաքարը,
Ինչպես է երգում կախաւն իր «կղա»ն,
Ինչպես է երգում խաղացող տղան...

Դուխ չէ՞խ մտածել.
Կարծես Էոլեան մի նոր ճնար է
Սիւնից-սիւն ձգուող հեռագրի լարը։
Ա՜խ, եթե գտնել
Այդպես երգելու դիւրին հնարը...
Ա՜խ, եթե երգով լալ այնպես, ինչպես ծառերը խեժով,—
արցունքո՜վ բուժող,—
Եւ սպիանալ, ինչպես ջրերը կանաչ ջրմուռով,—
անցած մրմուռո՜վ...
Երգել ջրի պես՝ միշտ գահավիժող,
Նեղլիկ խարափից բաց հովիտ խուժող՝
Անգիտակ իր իսկ ահեղ մոունչից,
Մերթ էլ փոխարկուած տարտամ մրմունջի՝
դանդաղ նեղուելով
ու ներս մտնելով
իրենի՛ց ծնուած
իրենո՛վ սնուած

խարդախ սառույցից,—
երգել չրի պես՝
Մերթ էպիական մանրամասնութեամբ,
ու մերթ թռուցիկ...

Իսկ երբ երգել
Ինչպես ալիքը փոթորկած ծովո՞ւմ,
Եւ նաւագակցել,
Ինչպես կաթիլը մութ ֆառանձաւո՞ւմ։

Իսկ դուք լսե՞լ էք՝
Լցած սափորից ի՞նչ նաւագով է
պաղ ջուրը չռում.
Ի՞նչ անկրկնելի եղանակով է
թեյնիկը եռում...

Ա՜խ, երբ հնչել գովերգի նման՝
երբ մանուկների բոպիկ ոտներից թեկուզ պղտորուած՝
Բարի առուն է գոհունակ ճողփում.
Ա՜խ, երբ հնչել եղերգի նման
Երբ սիրած կինը իր յանկարծ գոհուած մարդուն է ողբում։
Ա՜խ, երբ երգել եղեգնի նման՝
Երբ վեր է կենում ֆուռն առած ֆամիլն—
ցանկացած ժամից...

Իսկ թէ տրուել՝
ալազի՛ նման,
եւ ոչ թէ վազի։
Իսկ թէ օրօրուել՝
օրորոցի՛ պէս եւ ոչ թէ պատի,
եւ այն ցողի՛ պէս,
որ ուռճանում է մայրական կաթից։

Եթէ գալարուել՝
ոչ թէ օձի պէս,
այլ ճիկ բոցի՛ պէս։
Եթէ դալարուել՝
աղջըկայ ճկուն իրանի նման։
Եթէ խելառուել՝
աւելի լաւ է անյաջող սիրուց։
Եթէ ոլորուել՝
այն թելի նման,
որ շուլալուում է կախարդիչ կնոջ
վզի կոճակում։
Եթէ գլորուել՝
այն լուրի նման,
որ գերւած երկրից
սեփական բախտի տէր է հոչակում։
Եթէ մոլորուել՝
այն տուղտի նման,
որ կանաչում է ծառի փչակում...
Եթէ ենթարկուել՝
ինչպէս երակը արեան մղումին.
Եթէ ուղարկուել՝
աստղերից եկած պայծառ լոյսի՛ պէս.
Եթէ հողարկուել՝
ապա յոյսի՛ պէս.
Եթէ ընդգրկուել՝
զօրասիւնի մէջ, որ ուսրկացած երկիր է
փրկում
եւ ոչ թէ մարդկանց լեզուից է զրկում.
Եթէ վիճարկուել՝
վիճարկուել իբրեւ խոր ճշմարտութիւն.

Ու երբ զարկել՝
տագնապի ժամին ահազանգի պես.
Ու երբ զրկել՝
ապա սուս փառից, ոչ թե ամօթից.
Ու երբ լլկել՝
բաժանման ցաւից, ոչ թե թշնամուց.
Ու երբ լալկել՝
արհամարհանքից եւ ոչ թե վախից.
Ու երբ ծլկել՝
ինչպես անձրեւը ճաճճրված արտում.

Իսկ թե իմանալ՝
ինչպես արեւը իր ծագման պահը
Ու թե զարմանալ՝
ո՛չ թե լաւ բանից, այլ միայն վատի՛ց.
Թե ընդարմանալ՝
որպեսզի նորի՛ց, կրկի՛ն թարմանալ,
Թե ընդդիմանալ՝
նաեւ անցողակի յաջողութեանը.
Ու թե դիմանալ՝
ապա դիմանալ
ժամանակների խիստ ճնշութեանը...

Երգե՛լ ու... մեռնե՛լ,
Ու երբ մի օր կասկած յարուցել,
Ապա բուրաւէս այն հոտերի՛ պէս,
Որ մի ժամանակ սուր են զգացել,
Դրա համար էլ այդ չեն զգացում.
Ու երբ մի օր դժւար հասկացել՝
Ապա հինաւուրց այն տոտեմի՛ պէս,
Որ մի ժամանակ լաւ է հասկացում։

Ու երբ մաշուել՝
Ապա յեսանուող մի դանակի՛ պէս·
Երբ ես քաշուել՝
Յաղթանակ տարած մի բանակի՛ պէս·
Երբ չյիշուել՝
Զքնաղ լեգենդի հեղինակի՛ պէս…
Ու երբ յիշուել՝
Ժողովրդական եղանակի՛ պէս…

## ԱՏՈՒՄ ԵՄ

Ատում եմ ծիւնը՝
Թէ նա տեղում է ամառւայ կէսին,
Եւ մահն եմ ատում՝
Թէ հիւր է գալիս աղջկատեսին.
Մահից ոչ պակաս՝
Եւ ա՛յն ֆողարկւած մէնատրնտեսին,—
Նրա՛ն ու նրա՛նց,
Ովքեր ուրիշի շէն տունն են քանդում՝
Իրենց պէտք եղած գերանի համար,
Ովքեր ուրիշի ծառերն են չարդում՝
Մի բուռ չհասած ծիրանի համար,
Ովքեր համայնքի ծովից են խօսում՝
Բայց դէպի իրենց լճակն են հոսում...

Ատում եմ նաեւ այն խելօք սուսիկ-փուսիկութիւնը,
Որտեղ դժւար է տարբերել անգամ երեսն ասատից:
Եւ այն հարկադի՛ր, ոչ թէ ի ծնէ կուզիկութիւնը,
Որ սպացւում է... ցած առաստաղից:

Ատում եմ նաեւ այն նեղ կօշիկը,
Որ աքցանի պէս ոտքերդ է բռնում,
Իսկ հոգուս վրայ կոշտուկ է դառնում...

Ա՛յն գործն եմ ատում,
Որ ոչ թէ գործ է, այլ ծանրր յանցանք,
Ա՛յն փորձն եմ ատում,
Որ մարդկանց գլխին դառնում է փորձանք,
Ա՛յն դաւանանքը,
Որ վերջ ի վերջոյ փոխւում է դաւի,
Գլխացաւանքը,
Որ փոխարկւում է սուր գլխացաւի...

Խաւարն եմ ատում, երբ խաւարում
Ո՛չ միտք է ծնւում, եւ ո՛չ էլ գաւակ։
Եւ լոյսն եմ ատում, թէկուզեւ պայծառ,
Թէ չի հանդուրժում միջնեւ իսկ շուք...

Ի՞նչ խօսքեր ասեմ այն ձեռագրին,
Որ չի հասկացւում, բայց կարդացւում է։
Ասե՞մ, թէ խղճամ այն տարեգրին,
Որ ցիւր է սարքում,
Ոչ թէ հաւաքում։
Խղճա՞մ, թէ ատեմ այն տարագրին,
Որ միշտ ապրում է... իր հայրենիքում...

Թո՛ւի, ինչքա՛ն բան կայ կեանքում ատելի,—
Ես չգիտէի...

## ՉԵՄ ՅԱՐԳՈՒՄ

Մինչ տարին ունի տասներկու ամիս ու չորս եղանակ,
Տասներկու անգամ սա եղանակ է մի օրում փոխում,
Եթե դուք պետ էք եւ դիցուք, նոյնիսկ հաշիւ էք ծխում,
Նա էլ է ծխում, որպէսզի յանկարծ... դուք չնեղանաք։
Ի՞նչ էլ անագեն՝ նա է պարողը,
Ի՞նչ էլ կարել տան՝ նա է կարողը,
Ո՞ր ծառն էլ ցոյց տան՝ նա է քարողը։
Յարգո՞ւմ էք նրան։

Իսկ հապա սրա՞ն,
Որ ասես լինի առածի պարան.
Հապա փո՛րձ արա ու ցա՛խ դիր վրան...

Չեմ յարգում շանն էլ, որին չար տէրը
Անտեղի տեղը որքան ծեծում է,
Այնքան նա լիզում տիրոջ ոտերը
Իրեն տրորո՛ղ-ջարդո՛ղ ոտերը,
Եւ կծելու տեղ լոկ կաղկանձում է...

Եկէք միասին չյարգենք նրա՛նց,
Ովքեր սերտում են եւ ոչ թէ դասում,
Ճառո՛ւմ են — բնաւ չե՛ն կտռտասում.
Ովքեր չեն ջոկում ո՛չ թացը չորից,
Ո՛չ էլ տարբերում անդունդը ձորից.
Ովքեր գրածի տանն են ընթերցում,
Ովքեր ճնածին մեռած են կարծում,

Ովքեր կարծում են
Ծուխը՝ հրաբուխ,
Իսկ լացը՝ հարբուխ...

Ջեմ յարգում նաեւ ա՛յն նորութիւնը,
Որ վաղեմութեան նոր տարբերակն է,
Ա՛յն չորութիւնը,
Որ չի տարբերւում անգթութիւնից,
Որտեղ աճում է եղեգն ու չրմուռ,
Եւ յիմարաւուն ա՛յն բարութիւնը,
Որ մոռացում է կսկիծ ու մրմուռ...

Յարգած չունենամ ա՛յն ծերութիւնն էլ,
Որ իմաստութեան նոյնիսկ բո՛յր չունի,
Յարգած չունենամ ա՛յն ծոութիւնն էլ,
Որ Սասնայ ծռից մի նըո՛յլ չունի,
Եւ հնաոաւոր ա՛յն յարութիւնը,
Որ աւարտւում է լոկ... համբարձումո՛վ,
Ո՛չ թէ մարդկանց մէջ վերադարձումով...

Ե՛րբ մի անգամ չյարգեմ նրանց,
Ովքեր մտնում են հոտած գաղջ անկիւն,
Երբ կարող էին թարմ օդում մնալ,
Թէկուզեւ այնտեղ մի փոքր մրսել
(Այնտեղ եմ հասել
Երբեմնըն ես է՛լ)...
Ովքեր մթնում են,
Երբ կարող էին միշտ մնալ լուսէ,
(Ինձ էլ երբեմնըն խաւարն է գրկում)...
Ովքեր վատնում են
Իրենց ուժերը փսփրսուքի մէջ,
Մինչ կարող էին բարձրաձայն խօսել
(Երբեմնըն նաեւ ես ի՛նձ չեմ յարգում)...

Երբեմնըն նաեւ ես ի՛նձ չեմ յարգում...

## ՎԻՃՈՒՄ ԵՄ

Ես վիճում եմ,
մէ՞կ է՝ ո՛ւմ հետ,
Իմբրս ի՞նձ հետ,
Թէ՞ ուրիշի։
Իսկ դու մի պահ ակա՛նջ արա
Ու լա՛ւ յիշիր։

Ես վիճում եմ եւ աստղերից լաւերի՛ հետ,
Եթէ նրանք տալիս են մեզ աղօ՛տ մի լոյս,
Բայց ո՛չ կրակ…

Ես վիճում եմ կանաչների ծովերի՛ հետ,
Եթէ նրանք դատում փտում,
Բայց չեն մտնում
Ո՛չ մի մարագ։

Ես վիճում եմ գաւակի հետ,
Ա՛յն գաւակի,
Որ իր մօրը փող է տալիս դատարանով…

Ես վիճում եմ աւագի հետ,
Ա՛յն աւագի,
Որ կրտսերից իմբը պիտի խելք հաւաքի,
Մինչդեռ նրանք իր ետեւից
Քարշ է տալիս հաստ պարանով…

Ես վիճում եմ շաքի հետ,
Ա՛յն շաքի,
Որ արեւից թուղթ է վառում։

Ես վիճում եմ նռագի հետ,
Ա՛յն նռագի,
Որ բոլորին զգուշացրել

Բայց եւ այնպէս չի դադարում...

Պիտի վիճեմ
Եւ երգի՛ դէմ,
Թէ բոնի են երգել տալիս խեղճ երգողից.
Եւ բերի՛ դէմ,
Թէ չի սնում բերդ ու բարիք հաւաքողից.
Եւ վէրի՛ դէմ,
Թէ չի բուժում, այլ վարակում.
Եւ ներկի՛ դէմ,
Թէ ծածկում է, չի՛ նորոգում...

Ես չվիճե՞մ
Ա՛յն կրճի դէմ,
Որ չի ծնում մի նոր որդի,
Այլ պարզապէս զուր վատնում է.
Ա՛յն գրկի դէմ՝ յուդայական,
Որ մատնում է...

Ասէ՛ք. ինչպէ՞ս դէմ չխօսեմ
Ա՛յն պիտակից,
Որ չի սազում, բայց կպչում է եւ չի պոկւում.
Ա՛յն շիտակից,
Որ դիմակներ փոխելով է մտահոգւում.
Ա՛յն դիտակից,
Որ ճնած է.
Ա՛յն կտակից,
Որ գնւած է...

Նորի՛ց վիճեմ՝
ա՛յն բախտի հետ
Որ գալիս է, գալը բարի՛,

Սակայն ո՞ւր է—տե՛ղն է պարապ։

Նորի՛ց վիճեմ՝
ա՛յն թխպի հետ,
Որ կուտակւում բոլոր տարին,
Բայց չի դառնում տեղատարափ...

Վիճեմ նաեւ ա՛յն մութի դէմ,
Որ կուրացնո՛ւմ—ա՛չք չի տոյում,—
Մթնա՛ծ վիճեմ.
Ա՛յն բութի դէմ,
Որ կարծում է՝ շեշտ է դարձել,—
Շեշտա՛ծ վիճեմ.
Ա՛յն կուտի դէմ,
Որ ցորեն էր մի ժամանակ,
Սրտո՛ւռ ցորեն,—
Վիճեմ լացո՛վ.
Ա՛յն ճութի դէմ,
Որ չի ուսւում,
Ոչ էլ դառնում արդար գիճի,—
Հարբա՛ծ վիճեմ.
Ա՛յն փուտի դէմ,
Որ իճիճ իրեն սերտ է կարծում,—
Իզո՛ւր վիճեմ.
Ա՛յն տուտի դէմ,
Որ տո՛ւս չուճի՝
Որ աճծայր է այս վէճի՛ պէս,—
Վիճեմ ամվե՛րջ...

Վիճեմ նաեւ ա՛յն վէճի դէմ,
Որի բերած օգո՞ւտն է շատ, թէ՞ վնասը՝
Ես չգիտե՛մ...

## ՍԱՐՍՌՈՒՄ ԵՄ

Սարսրռում եմ
Հալւող-հալւող fn հպումից
Ու պաղ fամուց,
Եւ ա՛յն մsfից,
Թէ կարող եմ fեզ կորցրնել…

Թրթռում եմ
Բաց աչfերով խարխափումից,
Փակ թնամուց
Եւ ա՛յն մsfից,
Որ կարող եմ cաs cոյելուց
Թոչնակի պէս fեզ մեռցրնել…

Դողդողում եմ
Որդո՛ւս վրայ,
Եւ fn սիրո՛յ,
Բախտի՜ վրայ իմ sարագիր ժողովրդի…

Թփրsում եմ
Սրsի՜ նման…

## Գժհում եմ

Եւ ինձ լսելով՝
Կարող են ասել.
«Գժւե՞լ է, ի՞նչ է»։
Իսկ ես էլ կասեմ.
«Այո՛, գժւե՛լ եմ,
Ինչո՞ւ չգժւել»։

Իսկ գժւելով չե՞ն սիրում ու ատում։
Իսկ գժւելուց չէ՞ փայլը ճարճատում։
Առանց գժւելու՝ չկա՛յ շահած մարս։
Առանց գժւելու՝ չե՛ն ծնի նոր մարդ։
Մինչեւ չգժւի՝ ջուրը չի՛ եռայ,
Կե՛ղեւ չի պատռի հասիկը նոռն։
Ծառե՞րն են փթթում՝
Գժւա՛ծ են աննուռս։
Երկի՞րն է պտտում՝
Գժւա՛ծ է աննուռս...

Սերմերը մինչեւ կարգին չգժւեն՝
Բե՛րք չեն դառնալու։
Թաթերը մինչեւ կարգին չգժւեն՝
Ձե՛ռք չեն դառնալու։

Բառերն էլ մինչեւ կարգին չգժւեն՝
Ե՛րգ չեն դառնալու...

Ա՛խ, ուր էր թէ ես միշտ գի՛ժ լինէի...

## ԴԻՄՈՒՄ ԵՄ ՊԱՇԱՆՋԵԼՈՒ ՊԷՍ

Դո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,
Իբրեւ պատասխան նրանց սրսփուն ակնկալիքի.
Դո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոջուն կանչով,
Իբրեւ պատասխան նրանց կարիքի.
Դո՛ւ, որ ոտներդ խճողել ես դեռ անցեալի ցանցով
Մինչեւ ծեռներդ մեկնել ես արդէն կանչող գալիքին,—
Արի՜, Նո՛ր Տարի,
Գալուստդ բարի՜։

Արի՜, Նո՛ր Տարի,
Բայց... այնպէ՛ս արի,
Որ ատոմական այս ահեղ դարի
Գոռ ժամացոյցը ինքն իրենն լարի
Մայրացած հարսի արտասրոփի համաչափութեամբ,
Եւ նրա անտես սլաքները զոյգ
Իրենց վիրաւոր թեւաթափութեամբ
Ոչ թէ ճեզ կրկին
Քարանձաւների անապ խոռոչը մատնացոյց անեն,
Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին
Մեր զոյգ աչքերի հայեացքը տանեն...

Արի՜, Նո՛ր Տարի,
Բայց... այնպէ՛ս արի,
Որ աւելանայ աշխարհի բարին,
Եւ այդ աշխարհի բախտի վրայով
Խնւորէն ծգւած մետաղալարին
Լարախաղացի ծպտւած տեսով Ջա՛րը չպարի՝
Ողջ մարդկութեանը դնելով ծանօթ ծաղրածուի տեղ

Ջիւնն է վար իջնում
Ու ծածկում մայթեր, ծառեր ու թիթեղ։

Իսկ ուրիշ մի տեղ
Աճձրեւն է կրկին
Երկինք ու գետին մէկմէկու հին,
Կարծես թէ հսկայ տաւիղ է շինում,
Որի հոսանուս լարերի վրայ
Իրիկնամուտի տաղտահար ֆամին
Մրսած մատներով
Պիտի նւագի հինաւուրց տաղեր՝
Ի վերայ սիրոյ,
Վասն խնդութեան,
Վասն մարդկային ոգու խենթութեան։

Աճձրեւի տեսով,
Ջեան կնրպարանոով
Այդ դու ես գալիս։
Աւի՜, Նո՛ր Տարի,
Գալուստդ բարի՜։
Բայց... այնպէ՛ս աւի,
Որ աճձրեւը յորդ արբելով տանի
Ոչ միայն կեղտը յոգնած մայթերի,
Այլ նաեւ փոշին ու մուրը հոգու,
Այլեւ խաւար խոհ ու խարդախ խոկում,
Եւ ծոյլը իշնի որոգայթների՛,
Ծանրր ամօթից շիկնած այտերի՛,
Ուրախութիւնից դեղնած—ժանգոտած արտերի՛ վրայ
Եւ իր այդ ներմակ բարութեամբ շոայլ
Մարդուն մարդու դէմ պարզերե՜ս անի...

Աւի՜, Նո՛ր Տարի,
Բայց...այնպէ՛ս աւի,
Եւ ոչ թէ այնպէ՛ս, որ ձիւնը ներմակ

Դառնայ վարակի սաւան ու վերմակ,
Եւ որ անձրեւի ջուրն աստւածածին
Մարդու արիւնը ջրի վերածի,
Ու ճառագա՛յթը, ճառագա՜յթն անբիծ
Մկրտւի իբրեւ մի ահեղ ու պիղծ
Նոր հիւանդութեան դիւային անուն.
Որից մինչեւ իսկ մահն է մահանում...

Արի՜, Նո՛ր Տարի,
Գալուստդ բարի
Եւ արթնացրո՛ւ քո թնդուն քայլքով
Ուշ մնացածին,
Քնով տարւածին.
Տո՛ւր ապաքինում հոգով ցաւածին,
Հիասթափւածին՝ նոր մի հիացում,
Սիրասթափւածին՝ մի նոր միացում,
Ձեռքից հաւատը փախուստ տւածին,
Իբրեւ Նոր Տարւայ բաղձալի նուէր,
Տո՛ւր նոր հաւատի կապակուռ թեւեր,
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,
Մեծին՝ մանուկի անարատութիւն,
Տափարակներին՝ Արարատութիւն,
Իսկ Երկրագնդին՝ մի առատութիւն,
Որ նրա վրայ Քաղցը այսուհետ
Չունենայ ոչ մի կայսրութիւն ու գահ,
Ու սարսափն իրեն թագակիր չզգայ.
Որ ազատութիւնն իր բառէ գունեղ շապիկը ճեղքած
Տրւի ճախրանքի,
Ու Մարդն ազատւի իր հին գերութեան նոր յաճախանքից,
Ու Մարդն այսուհետ ո՛չ մի տեղ երբէք չգունաւորւի.
Եւ որ այլեւս ո՛չ մի ժողովուրդ,

Ո՛չ մի ազգ ու ցեղ
Պատմութեան քափից ու սեւ մրուրից չթունաւորւի,
Դառնայ լիազօ՛ր՝ դառնայ լիիրա՛ւ,—
Ու մենք, վերջապէ՛ս, հասկանա՛նք իրար,
Ամենքըս, բա՛ւ է, հասկանանք իրար,
Նաեւ հասկանա՛նք.
Որ մեր իսկ արեան գնդիկը մանըր
Այս Երկիր կոչուած գնդից աւելի մեծ է ու ծանըր…

## ՀԱՒԱՏՈՒՄ ԵՄ

Յաճախ սիրում եմ,
Երբ մարդկայնօրէն սիրտըս գերում են։

Յաճախ լռում եմ,
Երբ ճիշդ ասածըս դիտմամբ ծռում են։

Նաեւ խղճում եմ,
Եթէ զղջում են։

Հիասթափւում եմ,
Եթէ խաբւում են։

Նաեւ ատում եմ,
Եթէ ատում են։

Բայց ամենի՛ց խոր
Ես հաւատո՛ւմ եմ։

Ո՛չ միայն գիտեմ.
Ես հաւատո՛ւմ եմ
Երկնի բացխուփիկ հողարկութեանը,
Օվկիանոսների յաւերժ կրկնուող խաղարկութեանը,
Հաւ ու թոչունի աճբեկանելի ձւարկութեանը։

Ո՛չ միայն գիտեմ.
Ես հաւատո՛ւմ եմ,
Որ անհնար է արեւը բանտել,
Երկնակամարի զարդերը խանդել,
Խմորի նման հունցել ու գնդել
Կապոյտը ծովի,
Աստղի լուսնին բոնել վոնդել

## Երկրից ծաւի…

Ինչո՞ւ թափըրնեմ.
Ես ճանապհում եմ ու գիտեմ մարդուց։
Ի՞նչ ասես չկայ նրա փակ սրտում։

Գիտի կործանե՛լ,
Բայց եւ… գործ աներ՞լ,
Մատնութիւն գրած նո՛յն իր ձեռերով՝
Աշխարհը լցնել շոայլ բերէրով։

Նո՛յն այդ ձեռերով՝
Ե՛ւ նրագ մարել,
Ե՛ւ խարոյկ վառել։

Նո՛յն այդ ձեռերով՝
Ե՛ւ դանակ խրել,
Ե՛ւ վէպեր գրել։

Նա գիտի զակրե՛լ
Ու զրկե՞լ գիտի,
Բայց գիտի գրկե՛լ
Ու փրկե՞լ գիտի։

Նա գիտի կեղծե՛լ
Ու արբապղծե՛լ,
Առաւել եւս՝
Գիտի ստեղծե՞լ։
Ես նրան յաճախ դատափետում եմ,
Երբեմըն նրան նոյնիսկ ատում եմ,
Բայց, ամենից շատ, խոր հաւատո՞ւմ եմ։
Ես հաւատում եմ նրա բնութեան ո՛չ թերութեանը՝

Ստորութեա՛նը
Ու չարութեա՛նը,
Այլ խորութեա՛նը
Ու բարութեա՛նը.
Ո՛չ ծերութեանը,
Այլ ճորութեա՛նը՝
Զաւակի տեսով աճվերջ կրկրնուող այդ յարութեանը,—

Ես հաւատում եմ կենդանի մարդուն,
Առաւել՝ նրա ծնելիք որդուն,

Ես հաւատում եմ նրա ապուրջին.
Նա որտեղ որ է Մարս էլ կը թռչի,—
Նոր է սկըսում տիեզերական ճամբորդութիւնը,
Եւ վեներայի լանջին կը կառչի,—
Ես գիտեմ նրա տղամարդկային շանորդութիւնը...

Ես հաւատում եմ նրա ծով խելքին
Եւ նոյնիսկ՝ նրա հոտառութեանը,
Ամե՛ն ինչ տեսնող աչերի ցոլքին
Եւ նոյնիսկ՝ նրանց մթարութեանը,
Ես հաւատում եմ նրա մատների
Յար անհատնելի
ճարտարութեանը,
Նրա ոտների
արդարութեանը.
Մինչեւ իսկ եթէ ճամբից էլ հանեն՝
Էլի՛ ճար կ՛անեն,
Տեղ կը հասցրնեն...

Ես հաւատում եմ հաւատի՛ն մարդու՝
Իմ ա՛յս հաւատին...

## ԱՂԱՉՈՒՄ ԵՄ

Աղաչում եմ.—
Մի՛ վրդովւեէ, երէ ասեն
Փառասէրին հէնց փառասէ՞ր,
Ո՛չ թէ համեստ.
Սրիկային՝ հէնց սրիկա՞յ,
Ո՛չ թէ ազնիւ.
Հեռակային՝ հէնց հեռակա՞յ,
Ո՛չ թէ ներկայ....

Աղաչում եմ.—
Մի՛ վախեցէէ անկեղծ խօսքից.
Անկեղծ խօսքը չի սպանում,
Փակ խոցեր է միայն բանում։

Թէ սոված էէ եւ երեխայ՝
Մի՛ վախեցէէ լաց լինելուց.
Դե՛հ, բանի դեռ նա չի լալիս՝
Ծիծ չե՛ն տալիս։

Մի՛ վախեցէէ
ժանգոտ թասից ժանգ ճերելուց.
Նա դրանից չի փչանայ։

Մի՛ վախեցէէ
կեղծի մասին ճիշտ գրելուց
Նա դրանից կ'չանայ։

Աղաչում եմ.—
Եւ թւաբա՞ն եղէէ մի ֆիչ,
Բայց պայմանով այս ամօթիչ.
Ո՛չ թէ ճշտին սուս գումարէէ.
Այլ բաժանէէ սուտը ճշտից.

Ո՛չ թե վշտից գութ գումարէ,
Այլ բաժանէ գութը վշտից։
Եւ պարծեցէ ո՛չ թե հարցով·
Հպարտացէ լոկ լուծումո՜վ՝
Փակագծի ճիշտ բացումով,
Մնացորդով
Ու ֆանորդով…

Աղաչում եմ·—
Եղէ ճաեւ ֆիչ հոգեբան·

Երբ որդին տրտում երգով
Իր ծնողի մահն է սգում,
Աղաչում եմ, մի՛ ընդհատէ,
Ի՞նչ է թե նա… լա՛ւ չի երգում…

Աղաչում եմ·—
Այս եւ նման այլ հարցերում
Երբեւիցէ ինձ չաղաչե՜լ…

9—10. VI. 57
*Մոսկւա*

## ԵՐԿՄՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

— «Լինե՞լ-չլինե՞լ, — այս է խնդիրը»···

Եթե վաուում է մօրդ թոնդիրը,
Հայրենի ծուխը երդից փնչում է,
Էլ ի՞նչ խնդիր է·
Ուրեմըն՝ լինե՛լ։

Թե տապալուում է չար հարձակումը,
Թե անխուսափ է ծլարձակումը,
Թե հարկաւոր է նոր աղաց շինել·
Ուրեմըն՝ լինե՛լ։
Եթե բազմազան,
Թէկուզեւ դաժան
Գազանները անգամ մնում են գազան,
Ոչ թե օրէցօր դառնում ընտանի·
Եթե վերսին աղջիկ-պատանի
Ի՛նչ էլ որ լինի՝ սիրահարուում են,
Իրար ձեռք բռնում, իրար փարուում են,
Կազմում ընտանիք·
Եթե մայրական կաթից ուռչում են
Նորահարսների կանգուն ծոցերը,
Եւ կենդանութեան կայտառ բոցերը
Ու կեանքի ծուխը նորից փնչում են, —
Էլ ինչո՞ւ ինչ-որ խնդիր յօրինել,
Նախորոշուած է երբ նախընտիրը։

Ի՛նչ էլ որ լինի, անպատճառ լինե՛լ, —
Եթե խնդիր կայ՝ այս է խնդիրը՝···

28. V· 57
26. XI· 57
*Մոսկուա*

## ՄԻ ՊԱՀ ՄԵԾԱՄՏՈՒՆ ԵՄ

Ա՛խ, ի՜նչ բախտ է կեանքում լինել
Ամենքի պէս,
Ամենքի հետ.
Գիշերները հանգիստ ճնել՝
Ամենքի պէս,
Ամենքի հետ,
Լինել աղա՛ղդ,
Լինել հանդա՛րտ՝
Ամենքի պէս,
Ամենքի հետ.
Կեանքից նայել պա՛ղ ու անթա՛րթ՝
Ամենքի պէս,
Ամենքի հետ,
Չմտածե՛լ վաղւայ մասին՝
Ամենքի պէս,
Ամենքի հետ,
Կեանքդ մատնե՛լ ինքնահոսի՝
Ամենքի պէս,
Ամենքի հետ...

## ՌԵՏԻՆ ՉԵՄ—ԹՈՒՂԹ ԵՄ

## ԱԿԱՆՋԻ ԲԵՐ ԱՍԵՄ

Ա՜խ, դժբախտաբար, ռետինի՛ց չեմ ես,
Որ ձգես՝ ձգւեմ,
Թողնես՝ կարճանամ,
Ինչքան ճմրթես՝
Թողնելուց յետոյ
Շուտ վերըստանամ իմ տեսքը նախկին։

Ես, աւելի շուտ, թղթի եմ նման.
Քաշես՝ կպատռես,
Ճմրթես՝ պրծա՜ւ—
Իմ նախկին տեսքը չի՜ վերականգնի
Եւ ո՛չ մի արդուկ։

Կեանքի հետքերը վրաս են մնում
Եւ անց չեն կենում,
Ինչպէս տառերը՝ մամլուած թղթից…

## ՀԱՄԲԻՋ ԵՄ ԴԱՐՁԵԼ

Համրիչ եմ դարձել ես ձեր մատներից.
Քաշում — ես տալիս,
Հաշիւ էլ աճում
Ու դեռ ուզում էլ,
Որ միճչեւ աճգամ ձա՞յնըս դուրս չգայ,
Որ չըխկըխկա՞մ...

## ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ

Ես էլ հաւատոյ հանգանակ ունեմ.
Որ կարճ լինելով՝
Դիւրին է յիշուում.

—Լաւ է չունենալ կեանքում տուն ու տեղ,
Քան թէ աւետաստում լինել... ցնփեսայ...

ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ

## ԵՐԳ ԵՌԱՁԱՅՆ

### ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ

Ախ, իմ հայրենի՜ք...

Իմ ամբողջ կեանքում լեզուդ եմ սերտում
Եւ չեմ սովորել անսխալ խօսել,
Անսխալ խօսել քո մասին քեզ հետ.
Շփոթւում եմ միշտ անանց յուզմունքից...

Երբ վաղ գարնանըդ կկուդ է կուում,
Ինձ ամեն անգամ այնպէս է թւում,
Թէ թարգմանում է իր թլւատ լեզւով
Շնորհաւորման իմ խօսքը կակազ.
Նա քո գարունն է շնորհաւորում
Եւ ի՛մ փոխարէն...

Քո ամառային ստւերներն անգամ
Իրենց լռութեամբ ինձ են թարգմանում՝
Երազելով հիմնը արեւիդ լոյսի.
Ելեւէջում են իւրայատկօրէն՝
Երկարանալով ու կարճանալով
Սեւ բոցերի պէս։
Աշնան կաթուկը այգիներիդ մէջ
Բերք ու բարիքիդ օրհներգումն է իմ՝
Համաշխարհային—մատչելի լեզւով...

Եւ նոյնիսկ այնժամ,
Երբ խօսում եմ ես քո մասին քեզ հետ,
Մինչեւի՛սկ այնժամ
Այլ բան չեմ անում,
Քան թէ խօսքերով չափում եմ միայն իմ լռութիւնը,

Որպէսզի կրկի՛ն հասկանամ ցաւո՛վ,
Թէ այդ լռութեան համեմատութեամբ
Խօսքերն այդ որքա՛ն փոքր են ու չնչին…

Ա՛խ, իմ հայրենի՛ք…

Դու՝
Հազարամեայ իմ ազգանո՛ւնը,
Ես —
այնպէ՛ս ապրել կարողանայի,
Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար
Դու երբեւիցէ անյարմար չզգաս…

Ապրելու կէսն էլ պատւով մեռնելն է։
Ա՛խ, երանի՛ թէ ես այնպէ՛ս մեռնեմ,
Որ դու… ինձ սգաս։

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՛ք…

Ես ոչի՛նչ, ոչի՛նչ քեզ տալ չեմ կարող·
Ինչ էլ տամ կրկին տւածդ եմ տալիս։

Մինչեւիսկ չունեմ պարտքի զգացում·
Ես ոտից-գլո՛ւխ քո պարտքն եմ որ կամ։

Հաւաստիացման խօսք նա է ասում·
Ով ուզում է, որ հաւատան իրեն։

Իսկ ես միտք չունեմ հաւատացնելու·
Ես հաւատն եմ քո,
Քայլո՛ղ հաւատք…

Ա՛խ, իմ հայրենի՛ք...
Ինձ կոչ են անում կեանքդ ճանաչել,—
Աւելո՞րդ ձգտում.
Ես մասն եմ կեանքիդ։

Ես քո մամուռն եմ՝
Հինաւուրց ու նոր քո կամուրջների քարերի վրայ,
Քո աղբիւրների գուռերի կողին։

Եւ քո մրմունն եմ,
Որ չի թարգմանւում ուրիշ մի լեզւի...

Ծուխն եմ երեկւայ քո երդիկների
Եւ քո այսօրւայ ծխնելոյզների ծուխն եմ միմիայն՝
Քո թէժ կրակից թերեւս անմաս,
Բայց ծնւած այդ նոյն կրակից քո թէժ։
Քո ծուխն եմ միայն,
Եւ մթնոլորտին քո շունչն եմ խառնում՝
Այդ ծխի տեսով։
Քո ծուխն եմ միայն.
Խօսել չեմ կարող,
Բայց նկարում եմ կենդանութիւնդ՝
Երկնի կտաւին...

Քո յաւերժական ու մշտափոփոխ բնանկարի
Երանգներից եմ այնպէ՛ս ներկուած,
Ինչպէս երկինքդ՝ արեւմտոցին։
Ջեռիդ հեսերից դաջուած եմ այնպէ՛ս,
Ինչպէս գիշերւայ երկինքդ՝ աստղերով...

Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Ես կեանքիդ համար կեանքս չեմ տալ՝

Ես չեմ մասնակցել եւ ո՛չ մի մարտիդ.
Բայց կես քայլ անգամ չեմ արել կեանքում,
Որ քեզ չբերի.
Քեզնից սկսւում ու քեզ եմ հանգում՝
Շրջագծի պէս...

Վերեւից ցած են ջրերդ հոսում,
Իսկ ես իմ ցածից
Լուռ մագլցում եմ դէպի բարձունքդ՝
Քո տոգի՝ նման...

Ու երբ գարունդ է նորից կրկընւում
Մի հրաշալի էպիգոնութեամբ,
Ջոր ցօղունիդ պէս ծաղկում է իմ մէջ
Նոյն միտքը միայն.
—Թէկուզ անանուն՝
Ինչպէս խոտերդ սարերիդ լանջին,
Եթէ ես օգնեմ կանաչութեանդդ,
Կարող եմ ասել.
«Ե՛ս էլ ապրեցի»...

## ԵՐՐՈՐԴ ԶԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՛ք...

Ես խօսքեր ունեմ քեզ համար պահուած,
Որ չի գտնելու ո՛չ մէկն աշխարհում,
Եւ որ առայժմ ինքս էլ չեմ գտել.

Խօսքերս այդ իմ մէջ ե՛ւ կան, ե՛ւ չկան՝
Ստորերկրեայ ջրերի պէս.

Կարող են այրւել, նաեւ այրում են՝
Ինչպէս խաղողիդ անխառըն օղին։

Մօտիկ են նրանք, բայց նաեւ անհաս,
Ինչպէս այն լեռը,
Որ գերբդ է դարձել…

3. I. 60
*Թիֆլիս*

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու մեր մեծ երթի գաւազանակիր
Եւ մեր պատմութեան մեծագո՜յն դիւան,
Մեր ազնըւութեան գովասանագիր,
Մեր մտի պահեստ, հոգու օթեւան։
Անցեալին պարզած դու մեր լսափող,
Եւ մեր խօսափող՝ գալիքին ուղղած։
Դու մեր արբութիւն՝ կնճռած Մեսրոպով,
Նարեկացիով օծուած ու իղձած։

Դաժան դարերի ամե՛ն մի ժամին
Շա՜տ բան է խլել մեզնից թշնամին։

Բարդելով վէրքին վէրք ու անարգանք
Հեծութեան վրայ մի նոր հեծութիւն՝
Խլել է մեզնից հանգիստ ու յարգանք,
Խլել է մեզնից փառք ու մեծութիւն,
Խլել կեա՛նքը մեր եւ... կեանքի՜ց էլ թանկ
Մեր հո՛ղը, հո՛ղը,
Մեր սուրբ հայրենի՜ս։

Շա՜տ բանից է մեզ զրկել վայրենին։
Մեր կերած հացին fսել է նա ժա՛նգ,
Բայց եւ... դարաւոր բնիկ վայրերի
Կորըստի լեղի կարո՜տն է fսել,
Մեր խումին խառնել մեր սուրբ մայրերի
Արցո՛ւնքը, սակայն... եւ արի՛ւնը սեւ,

Բայց մենք չենք զրկուել... մեր բնրնի համից.
—Քաղցրացել ենք մենք... մեր fաղցր բառով,
Մեր հայրենահամ անուշ բարբառով։

Շա՜տ բանից է մեզ զրկել թշնամին։

Իր ձեռով ևա մեր ձեռերև է հասել,
Հասել է ակաևջ ու ոսևաթաթեր,
Աչքեր է հաևել դաշոյևով իր սուր,
Կտրել է ևաեւ արմատից լեզուև,
Եւ սակայև... իզո՞ւր.
Չի՛ հասւել լեզուև,
Մևացել է ևա՝ հասւելո՞վ աևգամ...

Քե՛զ՝ մեր հայկակաև եւ արամակաև,
Չկարողացաև քեզ խլել մեզևից
Ո՛չ խարդաւաևքով արամէակաև,
Ո՛չ բիւզաևդակաև սիրով աևազևիւ,
Ո՛չ Ահրիմաևի ահեղ ևեւերով,
Ո՛չ Քրիսւոսի մարդ-չմարդութեամբ,
Ո՛չ Մուհամեդի ևմլիչ ոսերով.
Ո՞չ ևշմարսւութեամբ,
Ո՞չ էլ ւսերով.

Չկարողացա՛և քեզ մեզևից խլել.
Եւ պարզ է հիմա, յւսակ ու որոշ,
Որ չե՞ևչ էլ կարող քեզ մեզևից խլել,
Ինչպէս չեև կարող խլել մի դրօշ,
Որ հազարամեայ դաժաև մարսերում
Փողփողացել է միշս էլ... արսերո՞ւմ:

Ո՛չ, քեզ ո՛չ մէկը կուլ ւալ չի՞ կարող:
Ագահ կոկորդում դու խոր ես խրւում:
Ո՛չ, քեզ ո՛չ մէկը փուլ ւալ չի՞ կարող,
Ինչպէս երկիևքը երբէք չի փլւում:

Ջե՜ս խլւի երբեէ,
Ջե՜ս փլւի երբեէ,
Ինչպես արիւնից գո՛յնը չի խլւում…

Եւ ի՞նչ խաչագող դեռ պիտի հասնի,
Որ ֆեզ կամենայ գողանալ մեզնից
(Մի՛ ասա «մեզնից», «աշխարհի՜ց» ասա)
Ջէ՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու,
Այլեւ մասո՜ւնէ ես,
Մասո՛ւնէ ես մի սուրբ,
Անկողոպտելի մասո՜ւնէ սրբազան՝
Դարերի խորհից դարերին հասած։

Մասու՞նէ։ Ինչպէ՞ս թէ։ Մասունէրս ո՜րն է։
Մասունէի տեղը տուփն է կամ հորն է։
Իսկ դու դարաւոր, բայց եւ առոյգ ես,
Գիսաւոր ծուխ ես, բայց եւ խարոյկ ես,
Ինչֆան պարզ՝ նոյնֆան ասպետական ես,
Շատերի մէջ ես, բայց պետական ես,
Եւ դրանով իսկ դու պետֆական ես
Այն պետութեանը, որ վաղը պիտի
Լուսնից ու Մարսից իմն իրեն դիտի…



Պ. Սեւակը եւ նկարիչ Գր. Խանջեանը «Անլռելի զանգակատուն» նկարազարդումների ցուցահանդէսում 1969 թ.

## ԽՕՍՔ ՀԱՒԱՍՏԻՔԻ

Մ. Մաշտոցի ծննդեան 1600—ամեակի առթիւ:

«Ոչ միայն գործենն պարտական են, այլեւ
որ յանձն առնուն»

### Ա

Քեզ հետ այս պահին զրուցել էր պէտք
Միայն նախդըրիւ-ոսկեղենիկով
Եւ պէտք էր գրել այն երկաթագիր տառերով միայն,
Որոնց կերպը դու առել ես գուցէ
Հին գործիքներից մեր դարբիններից
Եւ այն կեռերից ամենատարբեր,
Որոնցից զէն ու զարդ էին կախում...

Բայց Գիւտարարիդ համեմատութեամբ
Ես՝ Դանիէլեան թէրատ այբուբեն
Զուրկ եօթնաղօղանջ ձայնաւորներից,
Չեմ կարող զնգալ
Ու չեմ էլ զնգում,
Այլ պիտի հիմա լոկ բաղաձայնեմ,
Թէ պէ՞տք է արդեօք, որ Քո անունով
Մտքի մի օջախ կամ մի մայրուղի կոչւի աշխարհում,
Երբ Քո անւամբ մի ամբո՛ղջ ազգ է կոչում ինքն իրեն,
Ա՛զգ,
Որ ապրելու մտադրութեամբ մեռել է յաճախ,
Սակայն մեռնելու մտադրութեամբ չի ապրել երբե՛ք՝
Թէկուզեւ մի օր...

Եւ պէ՞տք է արդեօք,
Որ արձաններըդ յառնեն աստ ու անդ,
Երբ ինքըդ Քեզ — քանի՛ դար արդէն —
Քանդակում ես միշտ

Մեր մանկաշխարհի պարզ հոգիներին
Երեսուցելվեց կերպերով աճմանդ։

Պէ՞տ է ուրեմըն…
Ու պէտ է եթէ՝
Քե՛զ… պէտ չէ բնա՜ւ,
Պէտ է… միայն մե՛զ։

## Բ

Դո՛ւ, որ անվարան բնաբարձեցիր կռապաշտներին,
Վերամբնութեամբ պիտի մեզ ներես,
Եթէ խօսում ենք բանդակ-արձանից,
Չի կան արձաններ, որ կուռք չեն դառնում,
Եւ միաստւածներ կան նոր ու նորեկ,
Որ չեն տարբերում կռապաշտներից։
Եւ ա՛յն պատճառով պիտի մեզ ներես,
Որ հնուց անտի սովոր լինելով
Հարկի եւ տուրքի,
Բաժի եւ սակի
Ու վճարելով միշտ ճարահատեալ,
Մենք հոգով լո՛կ հարկ ենք ընդունել՝
Հարկը հոգեկա՜ն։
Եւ Դու՝ եզակի մի հարկահաւաք,
Որ ընտրած է—ոչ ճշանակած,
Ա՛ռ ու մթերի՜ր,
Ա՛ռ ու պատարի՜ր
Տասնըվեցդարեայ հարկը մեր հոգու,
Որպէսզի կրկին վերաբաժանես՝
Մեր ներ օրերին,
Բայց… իբրեւ նպաստ

Եւ ոչ մուրածոյ ողորմաբաժին…

Գ

Աշխարհազբօսիդ համեմատութեամբ
Ես միջեւ անգամ Արաֆս չտեսած տնաբնակը,
Ի լրո՛յ գիտեմ,
Որ ֆեզ ծին տւած բնիկ գաւառում
Կար մի մենաստան՝
«Սուրբ Կարապետ»,
Որի դռները փակ էին ընդմիշտ կանանց սեռի դեմ։

Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Սակայն անօրէն մի նոր օրէնքով
Փակ է մեր առջեւ
Ո՛չ միայն դուռն ու գաւիթը վանքի,
Այլ գաւա՛ռն ամբողջ
Եւ ո՛ղջ մի երկիր,
Որի անունից զրկւած է նոյնիսկ ֆարտեզը հիմա։

Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Եւ ընդդէմ այս բաց անարդարութեան
Առայժմ մենք մեր աչերն ենք փակում,
Բայց փակում այնպէս,
Ինչպէս փակում են մարդիկ մատները,
Եւ ստացւում է դրանից… բռունցք։

Ուստի իզուր է խօսքը երդումի։

Բնիկ գաւառդ հէնց որ ոսխ դնենք՝
Քո Հացեկացը կպեղենք բրչով,
Եւ տարօնական պարզած երկնի տակ
Սրբատաշ վէմը սուրբ թանգարանի ձեւակերպ կառնի,
Եւ դա կդառնայ Նո՛ր Էջմիածին...

Դ

Սակայն... Եւ սակայն
Կա սուրբ Օշական,
Որ ազգի համար մի շատ վաղեմի
Հաւասար է նոր Երուսաղէմի։

Աշուն է հիմա։
Եւ արբաւեղի տանող ծուռումուռ ճանապարհներին
Խաղողի վազն է իր տերեւները փռել ամենուր,
Իր տերեւները, որ շատ են նման
Անյայտ ձիերի սմբակից պոկած ժանգոտ պայտերի։

Այս հողի վրայ օտար սմբակներ չեն դոփում հիմա։
Եւ եթէ կաղնու անտառն է սակաւ այս հողի վրայ,
Ապա խաղողի եւ կաղնու տերեւն իսկապէս անչափ
նման են իրար։

Գաղտնապահութեան համար չեմ ծանել,
Ես գիտեմ սակայն,
Որ օշականեան բանուկ այս ճամփով գայլող ամեն ոք
Անխօս-լռելեայն երդում է տալիս
Մի՛շտ զուգատուիղ ընթանալ Քեզ հետ։
Անձնադատօրէն նա յանձն է առնում
Արդիւնաւորել մի՛միայն այնպէս,
Որ հողագնդի բիւր լեզուներից

Անարտասխելի մնայ յաւիտեան
Մեր այն բարբարը,
Որի գերից կարելի է սուր եղանիներ կռել,
Բայց մեխե՞ր նաեւ՝
Գամելու համար հին ու նորօրեայ պիղատոսներին։

Կանխատեսութեան համար չեմ ծնել,
Ես գիտեմ սակայն,
Որ արբատեղի տանող այս նամբով գայլող ամեն ոք
Եւ վա՛ղը պիտի դառնայ մասնակից
Քո անկտրելի որդանութեանը,
Իր հոգում զգայ Քո մշտակայուն ներկայութիւնը,
Քո իսկութեան հետ իմն իրեն ծուլի՝
Փոխելով գայլն իր մոլորագրնաց,
Բնոնակիր դառնայ մեր բեռ ու բարձին,
Դասալիք լինի բանակից վարձու։
Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք
Աւանդակորոյս իրենց վարքի դէմ
Վերստին պիտի աչքերը բանան։
Հայոց աշխարհի այրերից նրանք,
Ովքեր ծուլաբար նամփայ են ընկել
Ու դեռ ծուլաբար դեգերում են լուռ՝
Օսար հովերի ապտակին հլու։
Պիտի դառնօրէն դարձի գան դարձեալ՝
Խորհե՛ն հայերէն,
Ապրե՛ն հայօրէն...

Ե

Յոռետեսութեան համար չեմ ծնել
Եւ դէմ եմ յիմար լաւատեսութեան,

Սակայն շատերից մեկն էլ ես՝ գիտե՛մ.
Դու էիր, որ մեզ անըսգիւս գիւտովդ ուսուցանեցիր,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար։
Ուստի հաւատայ, ո՛վ Հնարաւոր։
Որ երբ մի օր—աստւա՛ծ չարասցէ—
Գտած հնարըդ դառնայ գործազուրկ,
Ասպարէզ կիջնի մեկն էլ, անկասկած,
Որ սկիզբ կտայ մի նո՛ր սխրանքի։

Թէ ճիշտ է, որ Դու հայր ունենալով՝
Չունեցար որդի,
Ճիշտ է առաւել,
Որ զաւակի տեղ ժառանգներ ունես՝
Սերո՛ւնդ ու սերո՛ւցդ,
Որոնք անըսգիւս գիւտովըդ գիտեն,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար...

Նըջի՛ր ուրեմըն սուրբ հիրիմիդ տակ,
Քանզի արթուն ես մեր հոգիներում։

Չէ՞ որ ինչ-որ տեղ փոխրերս ու Մենըդ
Հաւասարում եմք, դառնում աչակից.
—Դու... գործն ես արել,
Մենք... յանձն եմք առել...

12. IX, 17. IX. 61
*Երեւան*



Պ. Սեւակը միջնեկ որդու՝ Աբմէնի հետ



Պ. Սեւակ (1956 թ.)

# ՊՈԵՄՆԵՐ

# ՈՒՇԱՑԱԾ ԻՄ ՍԷՐ

I

Դու տեսնո՞ւմ ես հիմա, իմ սիրելի՛,
Թէ մեզ ո՛ւր հասցրեց քո ուշացած սէրը,
Քո ուշացա՛ծ սէրը,
Դու չուշացա՛ծ իմ սէր։

Կշտամբանքի խօսքեր ես չեմ ուզում ասել։
Բայց դու ո՞նց թոյլ տուիր,
Որ նա՛ դառնայ տէրըդ,
Ում դու չէիր սիրում
Եւ ում համար
Չէին դողում շրթերդ՝ ինչպէս հիմա,
Չէին շողում աչքերդ՝ ինչպէս հիմա,
Ինչպէս հիմա՝ կուրծքըդ չէր տրոփում կրքով։

Ինչպէ՞ս դու քանդեցիր տունըդ քո իսկ ձեռքով։

Զուր մի՛ արդարանայ։
Սիրոյ հարցում
Չի ճանաչում կեանքը արդարացում։

Զուր մի՛ ասա, թէ դու
Բոլորովին անփորձ աղջիկ էիր այնժամ, —
Սէ՛րը, ո՛չ, չի զգում փորձի կարիք։

Մի՛ մտածիր իզուր,
Թէ կեանքն ինքը քեզ հետ իբըր վարուեց դաժան, —

Կեանքը չի՛ բաժանում չարիք-բարիք։
Եւ մի՛ կարծիր իզուր,
Թէ չբերեց բախտդ։
Բախտ բերելըս ո՞րն է,
Նրանց ծե՛ռ են բերում...

II

Եւ այսպէս է լինում.
Նրբութեան տեղ՝ սիրոյ
Ամանիք նուրբ մեսամոն են գերադասում յանախ։

Եւ այսպէս է լինում.
Տաքութեան տեղ սիրոյ
Ամանիք տաք մուշտակն են գերադասում յանախ։

Ո՞ր յիմարը կասի, թէ վատ բան է
Բարձր աստիճանը,
Փողով լի գրպանը,
Եթէ... սիրոյ հարցում շիրիմ չէ գրպանը։

Երախտապա՞րտ եմ ես դատարկ իմ գրպանից.
Թէ չէ, ինչ իմանաս, աստո՞ծ չանի,
Չէ՞ որ կարող էր նա ինձ էլ գուցէ
Ուրիշների յիմար դրութեան մէջ գցել.
Կարող էին, այո՛, կարող էին ինձ է՛լ
«Աղուէս»-ի տեղ իրենց ուսին գցել.
Իբրեւ մուշտակ՝ կրել,
Իբրեւ ոսկի fորոց՝ կրծքին խրել։
Չէին կարո՞ղ։
Ի՞նչ է,
Նրանք՝ հեսիոսը,

Իսկ ես ձիաւո՞ր եմ.
Նրանք՝ կլոր զերօ,
Իսկ ես միաւո՞ր եմ.
Ախ, չէ՞, կարո՛ղ էին,
Որովհետեւ կեանքում
Մեծագոյնը մեծին միշտ յաղթում է։
Իսկ շատերի համար, անշուշտ, ուրիշ մեծ է
Կահաւորուած-կարգին-շէն տունը։

Ախ, չէ՜. կարո՛ղ էին,
Որովհետեւ կեանքում
Թէպետ յաղթութիւնը միշտ ճորիկն է,
Սակայն հինն էլ կեանքում
Նրանով է կանգուն,
Նրանով է զօրեղ,
Որ նա հին է։
Իսկ «բաղեղնի» կոչումն այնքան է հին կեանքում,
Որքան... իմը կինը։

Բայց արտաքուստ ինձ պէս
Ու ինձ նման կարծես
Նոյն այդ կինը
Անհունօրէն ինձնից եւ տարբեր է այնպէս,
Ինչպէս ճկարներից՝ «ճեգատիւը»։

Եւ ինձ համար բախտ է,
Մեծ պատիւ է,
Որ դու ուրի՜շ կին ես,
Իմ աննի՛նքս,
Որ հեռու ես ամեն մի բաղեղնուց,
Ինչպէս պղտոր ջուրը՝ կարմիր գինուց...

III

Բայց, սիրելի՛ս, քեզ հետ եղել է վատթարը,
Քեզ հետ պատահել է ահաւորը։
Քաղքենութիւն անգամ պակաս մեղաւոր է,
Քան դու՝
Իմ անմե՛ղըս,
Իմ արդա՛րըս։
Նա՝ վատ թէ լաւ՝ կեանքում առեւտուր է անում.
Մի բան՝ տալիս,
Տեղը ուրիշ բան է առնում։
Նրան կարելի է արհամարհել,
Իսկ քեզ... կարելի է քեզ չներե՛լ,
Որովհետեւ նրանք սէր են խաղում,
Իսկ դու... խաղացել ես դու սիրո՛յ հետ.
Որովհետեւ նրանք կեանք են խաղում,
Իսկ դու... խաղացել ես դու կեանքի՛ հետ...

Քեզ ո՞նց ներել, թէ դու
Գնացել ես մարդու
Այնպէս, ինչպէս մի օր քո հեռաւոր տատը,
Երբ որ հարցը ոչ թէ սէրն ու սիրտն են լուծել,
Այլ, ամենից առաջ, մատնեմատը։
Ինչպէ՞ս ներել, թէ դու
Գնացել ես մարդու,
Ինչպէս արեւելքում ընդունուած է եղել
Երկո՛ւ հազար տարի՝
Զաւակի հետ մի լաւ գերդաստանի,
Որի եօթը պորտին ճանաչել է հայրըդ,
Որի եօթը պորտին ճանաչել է մայրըդ,
Ճանաչել են,

Սակայն նրա գերդաստանի՛ն,
Բայց ո՛չ նրան, ում դու
Գնացել ես մարդու։

Գնացել ես մարդու
Եւ... մտածե՛լ,
Թէ սէրն ինքը,
Եթէ կեանքում նա կայ,
Յետոյ մի օր կգայ,
Թո՛ղ որ առաջնեկի՝
Քեզ պէս ու քեզ նման մի աղջըկայ,
Թո՛ղ որ երկրորդ մանկան՝
Իր հօր քթից թռած մի նոր ճէկլիկի
Ծննդի հետ, — մե՛կ է՝
Միայն թէ գայ...

Սակայն սէրը փառք չէ,
Ոչ էլ յաջողութիւն,
Որ յետոյ գայ
Եւ կամ
Բնաւ չգայ։
Հի՛ւր չէ,
Որ մերթ ընդ մերթ այցելի ձեր տունը,
Մերթ պատճառի հաճոյք
Ու մերթ՝ տհաճութիւն,
Խանգարելով անուշ ձեր ետճաշեայ քունը։
Ախ, չէ՛.
Սէրը հի՛ւր չէ,
Տանը հի՛ւր չէ սէրը։
Թէ բանն այդտեղ հասաւ՝
Նա տանտէ՛ր է։

Հիմա դու լաւ գիտես,
Իմ սիրելի՛,
Որ սիրոյ հետ խաղալ չի՜ կարելի.
Ո՛չ նա խաղալիք է,
Ո՛չ էլ մանուկ ես դու։
Իսկ թէ խաղալիք է՝
Նա չի ջարդւում իմը.
Հետը խաղացողին իմն է այնպէ՛ս ջարդում,
Ինչպէս որ նա քեզ է ջարդել հիմա...
Մի՞թէ արդէն պարզ չէ եւ ե՛զ համար,
Որ կարող է սէրը... վրէժխնդի՜ր լինել,
Վրէժ լուծել՝
Իրեն անտեսելո՜ւ համար.
Տառապալից սիրով չսիրողին գինել,
Ինչպէս որ քեզ՝ հիմա...

IV

Ես սառոյցի նման կհալչէի
Քաղքենական տաքուկ ու գաղջ օդում,
Եւ ինձ... ինձ չէր փրկի
Եւ ո՛չ մի սառնարան՝
Վերջին «մարկաս» վրաս։

Ես թռնամո՛ւս անգամ չեմ կամենում
Տնաբոյս նիւղ լինել արմատներու՝
Լուսամուտի գոգին,
Կրճուճի մէջ կաւէ,
Եւ կամ լինել ոսկէ—չգործածուող գաւա՜ր։

Ջէ՛, ես սառոյցի պէս կհալչէի
Քաղքենական տաքուկ ու գաղջ օդում։

Բայց… ես ո՞նց եմ ուզում
Ու երազում,
Անգի՛ն,
Քո ոտքերը տեսնել իմ գրկաբաց շեմքին,
Քեզ մէկընդմիշտ տեսնել իմ տան աղքատ ու հին
Եւ հաւատալ, որ դո՛ւ,
Դո՛ւ ես տանտիրուհին։

Բա՛րձր,
Բա՛րձր է հնչում.
«Իմ սիրելի՛»,
«Իմ սէ՛ր»։
Բայց ես ո՞նց եմ ուզում
Ու երազում,
Անգի՛ն,
Քեզ շշուկով, անձա՛յն մի շշուկով ասել՝
Քեզ շշնջալ.
«Իմ կի՛ն»…

V

Իսկ դու ուրիշինն ես,
Իսկ դու ուրիշինն ես,
Դո՛ւ — ուրիշի՛ն։

Դո՛ւ, իմ հարազա՛տը,
Մոտի՛կ հարազատը,
Եւ — ուրիշի՛ն…
Ա՜խ, ուրիշին թող որ մէկ ուրիշը լինէր,
Չէ՞ր կարելի, ասա՛։
Ա՜խ, դու այդ ինչպէ՞ս ես ուրիշինը եղել,
Իմ սիրելի՛, ասա՛…

Եւ ճա ով է՝ գիտե՞մ։
Պարզ է. ճա ո՛չ կարիճ,
Եւ ո՛չ էլ իժ է ճա։
Գուցէ վաս չէ այճման,
Գուցէ լաւն է աճգամ,
Բայց ինձ համար օսա՞ր—ուրի՞շ է ճա...

VI

Ինձ բոճեցի յաճկարծ ես այն բաճում,
Որ ոսճերս յաճախ ինձ, ակամայ,
Աճվերջ այգիներից—այգիներ են տաճում։
Իսկ դուք մի՛ շտապէք յաճցաճքի մէջ բոճել։

Այգիներ եմ գնում ո՛չ թէ ճրա համար,
Որ շրջում են այնտեղ կանայք ամե՞ն ոճի,

Կանայք՝
Նման ճրքին ճենապակու.
Հիանալ ես ուզում, ուրիշ ոչի՞նչ...

Կանայք՝
Նման շեղ սիրամարգի.
Իրենք՝ աճգոյն, միճչդեռ ճրանց հագի՞ն...

Կանայք՝
Նման դոան, որ չեն փակում.
Կողպէք բաց աճելու ո՛չ մի հակում...

Եւ աղջիկնե՞ր.
Աչերս այնպէ՛ս վճիտ,
Որ լեռնայինն ջրին եթէ ասես՝

«Չինչ ես աղջկական աչերի պես»,
Չուրը հիացմունքից կլճացայ մի պահ.
Շո՛յւած կզգայ այնպէ՛ս,
Կզգայ այնպէ՛ս հպարտ։

Եւ աղջիկներ բազո՛ւմ—
Այնպէս նազո՛ւն,
Նազո՛ւկ,
Որ ամե՛ն մի պախրայ,
Ամեն եղնի՛կ,
Այծեա՛մ
Յնծութիւնից պիտի շիկնի ներքուստ,
Եթէ յանկարծ լսի իր հասցէին.
«Ասես աղջիկ լինի, ահա թէ ի՛նչ»։
Եւ աղջիկնե՛ր—
Այնքա՛ն կախարդիչ ու թովիչ
(Նրանց թովչանքն արդեօք ի՞նչ մակդիրով չափես),
Եւ աղջիկնե՛ր—
Թովիչ՝
աղջկա՛յ պէս...

Բայց այգի են տանում ոչ թէ նրանք՝
Ո՛չ թէ այս բոց կանայք,
Աղջիկներն այս կրակ,
Ո՛չ էլ անծանօթին
Իբրեւ մօտիկ,
Վերջ ի վերջոյ «դու»-ով անուանելու յոյսը...

VII

Սակայն ճիշտ է, որ ես այգիներ եմ գնում,

Եւ ճիշտ է, որ այնտեղ կանգա՛յի չեն ինձ տանում.

Մանուկներն են տանում, երեխե՛րը։

Լայն ծառուղի։
Աւազ, որ եւ շէկ է,
Ինչպէս այս թմբլիկը, ա՛յ, այս մէկը,
Որ իր գլխին,
Ասես
Թասակի պէս,
Անվտանգ արեւն է մազերի տեղ կրում։
Ինչպէս եւ այն մե՛կը,
Այն մե՛կը, տես,
Որ աւազին, մատով, ինչ-որ բան է գրում։
Ժպտուն դէմքը նրա,
Նրա ձեռ ու ոտը
Այնպէս պեպենոտ է,
Որ ուզում ես լալ աուի ջրով այս ջինջ.
Քեզ թւում է տղան ոչ թէ պեպենոտ է,
Այլ որ նրա դէմքը,
Նրա ձեռ ու ոտը
Այս աւազն է ճախճել, ուրիշ ոչինչ։

Իսկ հապա ա՛յս մէկը...
Ա՛խ, այս երեխե՛րը...

Ամեն մէկըս ունի իր մեծ թուլութիւնը.
Մէկին՝ բարութիւնը,
Մէկին՝ մայրութիւնը,
Մէկին՝ խմիչքները,
Մէկին՝ սէրը կանանց։
Ինձ մոս մանուկների տիրութիւն է.

Ինչ֊ման ինձ յիշում եմ՝
Հպատա՜կն եմ նրանց

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.
Մարդիկ ուրիշ բան չեն, բան թէ մանուկ՝
Մանուկ—հասակ առած,
Մանուկ—տարեց դառած
Եւ, վերջապես նաեւ մանուկ֊ծերուկ։

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.—
Մեր մէջ ամեն լաւ բան մանկականն է,
Ուստի «մանկականն» է լաւի ածականը.
Այդպես չի՜ կարելի կոչել ժխտականը...

Իսկ դուք նկատե՞լ էք,
Բոլոր մանուկները
Ե՛ւ նման են իրար,
Ե՛ւ իրարից տարբեր։
Չէ՞ք նկատել արդեօք, որ աշխարհում
Տգեղ մանո՞ւկ, երբէ՛ք.
Աշխարհումըս բոլո՜ր մանուկներն են սիրուն...
...Ու ես թափառում եմ այգիներում,
Որ վերսին լսեմ զանգ֊ծիծաղը նրանց,
Տեսնեմ ինքնամոռաց—տարուած խաղը նրանց,
Տեսնեմ,
Թէ ինչպես են կաւից տնակ շինում։
Գօսի շինում խոտից.
Տեսնեմ,
Թէ ինչպես են իրենք իրենց գինում
Լաց լինելով ստից.
Լսեմ,
Թէ ոնց նրանք բլբլում են անվերջ

Ու մօր հոգին հանգում.
—«Իսկ այս ի՞նչ է, մա՛մա»...
Լսե՛մ,
Թէ հալւելով՝
Ի՞նչ սիրով է նրանց մայրը պատասխանում,
Մերթ էլ.
—«Բաւական է, դէ մի՛ հանիր համը»...
Տեսնե՛մ,
Թէ ինչպէս են մէկը մէկի առաջ
Իրենց հայրիկներով հպարտանում.
Սրանց ինժեներ է,
Նրանց օդաչու է,
Որ... երկրից ի՞նչ անգամ անց է կենում...

Այստեղ ես հասկանում,
Զգում ու հասկանում ամբողջ սրտով,
Որ դու ի՞նչ էլ լինես՝
Ճարտարապե՛տ,
Վարպե՛տ,
Միլիցիոնե՛ր,—
Դու ամենի՞ց առաջ՝
Այս ամենից առաջ եւ կամ յետոյ՝
Պարտաւոր ես կեանքում...«հայրի՛կ» լինել...
Եւ խենթ մի ցանկութիւն
Լափլիզում է fո սիրտն ու հոգին
Որ fե՛զ,
Եւ fե՛զ,
Եւ fե՞զ
«Հայրիկ» կոչի ձայնը ինչ-որ մէկի։

Ինչո՞ւ ինչ-որ մէկի։

Ո՛չ թե ինչ-որ մեկի,
Այլ, սիրելի՜ս, ծայնը մե՛ր մանկիկի...

VIII

Մենք ինչքա՜ն ենք տխրել՝ երազելով,
Ես աղջիկ եմ ուզում,
Իսկ դու՝ տղայ,
Ես աղջիկ եմ ուզում՝ ֆո՛ մազերով,
Դու տղայ ես ուզում՝ ի՛նձ պես թխաչ...

Ես աղջիկ եմ ուզում,
Որ ճեզ նման լինի.—
Քեզ պես՝ կախարդանքով իրեն զինի.
Քո հասակի նման՝ մանրանկար հասակ,
Ինչպես ֆո դեմքի շուրջ՝ լուսապսակ.
Լինի ճեզ պես նազո՛ւկ,
Քեզ պես նազո՜ւն,
Եւ ճեզ նման զգաստ,
Ե՛ւ երազուն.
Ու երբ ժպտայ ճեզ պես՝
Բացի արշալոյսը.
Ու երբ նայի ճեզ պես՝
Վառի մարած յոյսը.
Երբ ծիծաղի ճեզ պես՝
Զգաս—
Կեանքն է զնգում.
Ու երբ սիրի—
Զգաս՝
Արժէ՜ ապրել կեանքում,
Ամե՛ն ինչով նման,

Թուլութիւնո՞վ անգամ,
Քե՛զ պէս,
Միայն... ինչ պէս դառնութիւննե՞ր չզգայ...

Իսկ դու «չէ՛» ես ասում.
Դու տղայ ես ուզում:

Թո՛ղ nr իր հոր նման տգեղ լինի, ոչի՞նչ,
Բայց թող աստղով լինի՝ իր հոր նման:
Մor հոգու հետ, ոչի՞նչ, իր հոր նման
Թող նա մեկ-մեկ խաղայ,
Չարութիւններ անի,
Բայց թող՝ իր հոր նման՝ երբե՞f երես չառնի
Թո՛ղ nr՝ իր հոր նման՝ շա՞տ բան տեսնի կեանքում,
Բայց թող՝ իր հոր նման՝ մի՛ts էլ մնայ կանգուն,
Թ՛ող նա իր հոր նման՝ մեղկութիւնը ատի.
Փոfրոգութիւն, fծնանf իr հո՛r նման դատի.
Իր հոr նման՝ երբեf չշլանայ փառfից,
Թող շլանայ, լաւ է, աղջիկների fայլfի՛ց.
Իր հոr նման՝ թող nr յափշտակի՛, տարի՛,
Բայց, երբ ժամը հասնի, հո՛r պէս սիրահարի,
Հո՛r պէս կարողանայ ատել, սիրել,
Կարողանայ fե՛զ պէս բախտի տիրել...

Ես ինչպե՞ս եմ ուզում
Ինձ հա՛յr տեսնել,
Դու ինչպե՞ս ես ուզում
Քեզ մա՛յr տեսնել...

IX

Բայց դու արդեն... արդեն մայր ես վաղուց.

Բակում fո տղան է հիմա խաղում...

...Ես ո՛չ փոfրոգի եմ,
Ո՛չ տգէտ եմ,
Սակայն աrի եւ տես, որ խանդոտ եմ։

Ես խանդոտ եմ, ինչպէս գարնան գետը՝
Ամեն ջրի հանդէպ,
Ինչպէս արեգակից խանձուած խոտը՝
Ամեն հրի հանդէպ։

Ի՞նչ փոյթ, թէ խանդելու չունեմ տեղիf,
Բայց իրաւո՞ւնf...
Ջէ՞ որ ամբողջովին fոնն եմ։
Քո՞նն եմ,
Բայց ո՛չ իբրեւ կրծfիդ թառած ծաղիկ·
Քո՞նն եմ,
Սակայն իբրեւ ո՛չ պատռուած fաղաf,
Ո՛չ էլ հարձակումով մէկէն շահուած fաղաf։
Քոնն եմ ամբողջովին՝
Ա՛յն տան նման,
Ուր դու ե՛ւ տանտէր ես այդ տան համար,
Ե՛ւ տան միա՛կ-միա՛կ բնակիչը։
Ջէ՞ որ ես այլ բան չեմ,
Ես լոկ սիրոյ ճիչ եմ՝
Խօսուն կասկածներիդ լուռ փարատման համար։
Քոնն եմ իմ անցեալո՛վ,
Իմ ներկայո՛վ,
Երազներո՛վ բոլոր,
Ապագայո՛վ·
Քոնն եմ ամբողջովի՛ն,

Իմ սիրելի՛ս։
Սա իրաւունք մի՞թէ ինձ չի տալիս
Գէթ այսքանից յետոյ պահանջելու,
Որ իրաւունք չունես ինձ տանջելու,
Որ դու պիտի լինես ի՛մը՝ անվերապա՜հ,
Ի՛մը՝ ոտից-գլո՜ւխ,
Ի՛մը՝ ամբողջովի՜ն.
Որ fո գոռովագին սիրոյ ծովին
Ես տէր լինեմ,
Ինչպէս ծովի հին աստւածը՝
Ինքը Պոսէյդոնը.
Որ դու ամբողջովին ի՛մը լինես այնպէս.
Ինչպէս ես եմ fոնը.
Որ մի կաթիլ անգամ դու չգրես,
Էլ չեմ ասում՝ սիրե՜ս...

Էլ չեմ ասում՝ սիրե՞ս...

Բայց ես գիտեմ, թէ դու ո՜նց ես երկրպագում,
Ո՜նց ես պատռում... նրան,
Որ կոչում է fեզ «մայր»։
Ու ես, որ ո՛չ կոյր եմ,
Ո՛չ էլ յիմար,
Միշտ մի հարցի առաջ աչք եմ փակում.—
Ո՞վ է առաջինը fո մեծ հոգում.
Ե՞ս եմ արդեօք, թէ նա,
Ու վա՜յ թէ նա...
Եւ ի՜նչ էլ որ լինի՝
Ես չ'եմ խանդում նրան,
Ա՛խ, չէ՜, ես լոկ fեզ եմ որդուս համար խանդում.
Չէ՞ որ նա լոկ fոնն է եւ... իմը չէ։

Ու ես ո՛նց կուզեի,
Ո՛նց կուզեիր եւ դու,
Որ նա լիներ ի՛մը,
Որ ինձ «հայրի՛կ» կանչեր,
«Հայրիկ» այնպե՛ս կոչեր,
Այնպե՛ս գոչեր,
Որ աշխա՛րհը լսեր հօր անունը։

Բայց նա քոնն է միայն եւ իմը չէ։

Ցաւն էլ այստեղ է, որ... խորանում է...

X

Հօ ասեղ չէ սէրը, որ կորցնես,
Իսկ թէ ասեղ է նա՝ կթաքցընե՞ս
Ինչ-որ բարձիկի մէջ կամ տոպրակում։
Եթէ ասեղ է նա՝
Աչք է ծակում...

Դե՛հ, ո՞ւմ լաւ յայտնի չէ մեր իսկ թուլութիւնը․
Մենք բոլորս էլ մի քիչ փսփուք ենք սիրում։
Իսկ գեղեցիկ սեռի դրութիւնը
Շա՛տ է նախանձելի այս հարցերում։
Ոմանց համար արդէն դա մի թուլութիւն է,
Ինչպես ջուր խմելը, հաց ուտելը...
Պատկերացրէք հիմա դուք մեր դրութիւնը։
Պարզ է․ յայտնի դարձաւ եւ մեր սէրը։
Ուրիշները դարձան կիսով նրա տէրը․
Ե՛ւ այս, ե՛ւ այն կողմից տնտղեցին նրան,
Մերթ թաղեցին նրան,
Մերթ պեղեցին նրան։

Ուրիշ խօսքով ասած՝
Նա մի դրօշ դարձաւ,
Որ ո՛չ թէ ձեռքից-ձեռք — բերնից բերա՜ն անցաւ...

Չէ՛, ասե՜ղ չէ սէրը, որ թաքցրնես,
Իսկ թէ ասեղ է նա՝
Աչք է ծակում.
Իսկ թէ ասեղ է նա,
Հէնց թաքցրնես՝
Քո ցանկութեանն ընդդէմ կհագցրնես
Պոչին երկա՜ր մի թել,
Որ երեւա՛յ իսկոյն։
Մենք ասեղը թելել բնաւ չենք էլ փորձել։
Բայց ի՜նչ...
Դուրս է գալիս՝
Յիմար բան ենք գործել.
Կարելի է, ինչ խօսք, սիրահարւել
Միայն...հարկաւոր էր խելօք վարւել,
Սուսի՜կ-փուսի՜կ այնպէս...

Աստւա՛ծ վկայ, այսպէս
Չէ՞ որ կարելի է անգամ խելագարւե՜լ։
Ախար իմ ի՜նչ գործն է՝ մարդիկ ո՞նց են անում,
Իմ ի՜նչ գործն է.
Մարդիկ շա՛տ բաներ են անում,
Հազար ու մի տեսակ վա՛տ բաներ են անում։
Ես գործ ունեմ մարդկա՜նց,
Ո՛չ թէ ամեն կարգի նրանց արարքի հետ.
Ես գործ ունեմ սիրո՜յ,
Ո՛չ թէ թաքուն կապի հրայրքի հետ.
Միայն աղբիւրի՜ հետ յաւերժախօս ու չինչ,

Եւ ո՛չ հոսանքի հետ հեղեղային,
Եւ ո՛չ երբեք մօր հետ այն տղայի,
Որին չար ընկերն է խաղում դաղում.
—«է՜յ, բի՛ն...»

XI

Ու մեր սէրը բացուեց,
Բերնէ-բերան անցաւ.
Օրւայ հետոս դարձաւ
Ու նիւթ օրակարգի.

...Ու ես էլ իմ կարգին
Խօսք տուեցի, անգի՛ն,
Այսուհետեւ էլ քեզ ...քե՛զ... չսիրե՜լ,
Իբրեւ հոգուս վրայ,
Սրտիս տիրել...

Ա՜խ, սրտի տեղ երբէ լինէր լեզո՜ւն,
Որ խոստացաւ հանգիստ քեզ չսիրել։
Հասկանո՞ւմ ես, թէ ես ինչ եմ ասում,
Հասկանո՞ւմ ես արդեօք, քե՛զ... չսիրե՜լ...

Գուցէ գիտակցաբար ես ստեցի՞,
Գլուխս ազատեցի՞։
Չէ՜, պարզապէս
Կարծես ընդունւած է ժողովներում
Ուրի՛շ տեսակ խօսել,
Ինչպէս ընդունւած է, ժողովներում՝
Նոյնն արեցի ես էլ...

Բայց եւ այնպէս հիմա ա՛յլ լեզուով ես խօսում

Այս տողերը։
Բարեկամնե՛ր,
Անգի՜ն,
Այսօր ես յուզել ու արցնդել եմ։
Բարեկամնե՛ր,
Անգի՜ն,
Չէ՞ որ խօսք եմ տալ էլ չսիրել,
Չէ՞ որ խոստացել եմ իբխել հոգուս վրայ,
Սրտիս տիրել...

Խոստացել եմ։
Սակայն
Եթէ բան դուրս չգա՞յ...
Թո՛ղ որ ասեն, թէ սա
Սովետական մարդուն բնա՜ւ սազական չէ,
Թո՛ղ որ ասեն, անգի՜ն,
Որ մեր սէրը կեանքում բնա՜ւ տիպական չէ,
Թո՛ղ որ այդպէս։
Սակայն
Չէ՞ որ կեանքում նա կայ,
Չէ՞ որ արժան գտան նրան նիստի տանել,
Քննարկումից յետոյ կէսլուրջ ու կէսկատակ
Չէ՞ որ խորհուրդ տին,
—«Կարելի՜՜՜ է անել...»։

Ո՛չ։ Միայն ո՜չ այնպէս, ինչպէս յարմար գտան։
Ես գործ ունեմ մարդկա՜նց,
Ո՛չ թէ ամեն կարգի նրանց խորհրդի հետ.
Ո՛չ թէ թախտ կապի,
Ես գործ ունեմ միայն սիրոյ ու արտի՜ հետ...

XII

Հիմա դու տենչում ես, իմ սիրելի՛,
Թէ մեզ ո՞ւր հասցրեց քո ուշացած սէրը,
Քո ուշացա՛ծ սէրը,
Դու չուշացա՞ծ իմ սէր,

Դատափետում ես քեզ
Ու խստօրէն դատում
Նրա՛ համար, որ դու
«Ընտանիք ես քանդում»։
Բախտի ի՞նչ չար կատակ
Եւ ի՞նչ ծաղր է յիմար,
Դո՛ւ, որ հենց ծնւել ես ընտանիքի համար,
Սուրբ օջախի՛,
Սիրոյ քո տանիքի՛ համար,
«Ընտանի՞ք ես քանդում»…
Եւ դու պարտաւոր ես փրկե՞լ մի ընտանիք,
Որ շա՜տ վաղուց արդէն կործանւել է ինքը.
Յանուն կործանւածի կործանումի մատնել
Ուրի՞շ մի ընտանիք։

Ո՞ւր է այստեղ խիղճը,
Դատողութի՛ւնն ուր է,
Ո՞ւր է առողջ միտքը.
Յանուն փլւած մի տան՝
Մէկ այլ տանիք քանդել,
Եւ ինչպիսի՜ տանիք…

Եւ մի՞թէ քեզ դատող,
Դատափետող մարդիկ չեն իմանում,

Որ դու… հեղո՞ւկ չես դու,
Որ fո ձեւր փոխես այն ամանում,
Որտեղ որ fեզ կածեն…
Մի՞թե միևչեւ հիմա ոմանք չեն հասկացել·
Դու կենդանի՛ մարդ ես,
Ամենամա՞րդ մարդը,
Սիրո՞ղ մարդը,
Քեզ չի կարող ձեւ տալ ամեն կուժ ու կուլայ,
Եւ որ չորստոանի «մարդ» կոչւածը կեանքում
Շա՞տ աւելի բարդ է,
Քան թե հազարատատո, թեկուզ սրբագործւած, մի Ֆորմուլայ…

Եւ դու ինչպէ՞ս հիմա բերան իսկ չբանաս,
Ինչպէ՞ս դու նրանց դէմ չըմբոստանաս,
Եթե շա՛տ լաւ գիտես·
Բոլո՞ր օրէնքները նրա՛ համար են լոկ,
Որ պատսպանեն կեանքում մարդկայի՛նը,
Մարդո՞ւն,
Եւ որ բոլոր տեսակ օրէնքներից բացի
Կայ մի օրէնք եւրս—եւ շա՞տ խելօք·
Բոլոր օրէնքների ո՛չ թե տառն են կարդում,
Այլ հոգի՞ւնը լոկ…
Եւ դու ինչպէ՞ս հիմա բերան իսկ չբանաս,
Ինչպէ՞ս դու նրանց դէմ չըմբոստանաս,
Ինչպէ՞ս չասես, որ fեզ
Պէտք է սուրբ ընտանի՞ք,
Բայց ո՛չ ընտանիքի ծաղրանկար,
Պէտք է օջա՞խ մաքուր,
Սիրոյ գողտրիկ տանի՞ք,
Ուր չի կարող լինել ոչ մի կարիք

Խաղալ «լաւ ընտանիք»·
Մի յա՛րկ,
Ուր հա՜րկ չկայ
Խաղալ, թէ «սրա պէս լաւ յարկ չկա՜յ»·
Մի յա՛րկ,
Ուր իսկապէս չկայ կեղտի ճտոյլ,
Եւ ո՛չ երբէք մի յարկ,
Որտեղ մութ անկիւն են կեղտը էտում՝
Յանուն ըն-տա-նե-կա՜ն սուրբ մաք-րու-թեա՜ն...
Ա՛խ, չէ՜·
Քո մեծ սրտով
Դու սովոր չես նման մի փոքրութեան...

Ու ցաւում է հիմա մեր վիրաւոր հոգին,
Նա ցաւում է հիմա՝ ատամի՛ պէս։

Մենք ե՛ւ երջանիկ ենք,
Ե՛ւ պատժուած հիմա,
Դու՝ Եւայի՛ նման,
Իսկ ես՝ Ադամի՜ պէս։

Ա՜խ ցաւում է հոգիդ ճրա՛ համար,
Որ ապծոյ գործած հին սխալից յետոյ,
Եւ քանի՜ դար յետոյ,
Այս անապատած մարդիկ նաեւ հիմա
Մեր նկատմամբ, կեա՛նքս, նոյն սխալն են գործում,
Մեզ պատժում են... գտած երջանկութեա՜ն համար։
Թո՛ղ որ դրախտ պէտք չէ·
Մենք մեր ձեռքերով ենք այդ ստեղծել փորձում։
Բայց դէ ինչի՞ համար,
Ախար ինչի՞ համար

Պնդել, որ դու ընդմիշտ նոյն դժոխո՛ւմ մնաս։
Բայց դէ ինչի՞ համար,
Ախար ինչի՞ համար
Մի նոր դժոխք սարքել ե՛ւ ինձ, ե՛ւ էնց համար,
Նոյնպէս վարուել նաեւ ֆո մանկան հօ՝
Մեզանից ոչ պակաս դժբախտի հետ...

Ա՛խ, ի՞նչ հետս է
Խաղալ մարդկանց խեղճ բախտի հետ...

XIII

Ես լա՛ւ գիտեմ.
Այստեղ հերոսութիւն է պէտք։
Հերոսութիւն է պէտք՝
Ինչպէս երէկ կուում։

Փորոգութիւն կեանքում ես չեմ արել երբէք,
Մահւան հանդէպ վախից չեմ կորանում-կեռւում։
Ճանաչում եմ եւ ե՛զ.
Մենք հեռու չենք հիմա
Հերոսական խայլից։ Բոլորովի՛ն։
Ինքդ Զոյայից ես անհուսօրէն նման,
Իսկ ես շատ եմ սիրում Մատրոսովին։
Սակայն այստեղ մահով բա՞ն չես շահի,
Իզո՛ւր բան է հիմա դիմել մահի։
Նա չի կարող այստեղ ցոյց տալ մեզ օգնութիւն։
Երէկ՝ կուում մահը հերոսութիւն էր մեծ,
Այսօր՝ անհետելի փորոգութիւն։
Երէկ այնտեղ մահով շահում էիր դու կեանք,
Մահը նոր կեանք դարձնում,
Այսօր այստեղ մահով,

Քո մի՜ հատիկ մահով,
Երեք կեանք ես կորցնում.—
Երկու՝ ամբողջովին, ու երկու՝ կէս.
Փոխրիկ որդիդ՝ կիսո՛վ,
Նրա հայրը՝ կիսո՛վ,
Ամբողջովի՜ն՝ դու ինձ,
Ու ես էլ՝ քեզ...

Իսկ թէ փոթորիկ է սա մի բաժակ ջրո՞ւմ,
Թո՛ղ որ այդպէս,
Սակայն նա կեա՜նք է կործանում:

Իսկ թէ մի հարց է սա,
Որ փակ նիստից պիտի լայն ասպարէզ գտնի՞.
Իսկ թէ մի հարց է սա,
Որի մասին պիտի ամբո՛ղջ ծայնով խօսի:
Խօսի բա՜ռ եւ բա՛ց,
Եւ ո՛չ լոկ մերպէսի,
Այլեւ բոլո՜ր նրանց,
Բոլոր նրա՛նց մասին,
Ովքեր կէս լրջօրէն ու կէս կատակ
Վաղը մեր նմանին խորհուրդ կտան.
—«Կարելի՜՞ է անբուծ,
Մարդը մարդ է, գար չէ...»:

Չէ՜, նման խորհուրդը մեզ համար չէ:
Չէ՜, նման խորհուրդը մեզ յարմար չէ,
Մեր ախտարհի՛ն նման ու յարմար չէ:
Թէկուզ նրա՛ համար մեզ յարմար չէ,
Որ մարդն, այո՛, մարդ է, մարդը գար չէ,
Թէկուզ նրա՛ համար մեզ յարմար չէ,

Մեր աշխարհի՛ն նման ու յարմար չէ,
Որ նա մեր աշխարհն է,
Որ նա Սպարտա՞ չէ,
Որտեղ դաստում էին ու խիստ պատժում գողին
Ո՛չ յափշտակութեան,
Ո՛չ էլ գողութեան մեջ խառնվելու համար,
Այլ լոկ անբաւարար ճարպկութե՞ն՝
Բռնվելո՛ւ համար։
Իսկ մենք չէ՞ որ դեմ ենք ամեն տարողութե՞ն,
Ամե՛ն չափսի գողի,
Եւ առաւել եւս՝ լա՛ւ գողութեան,
Եւ առաւել եւս՝ ճարպի՛կ գողի...

XIV

Իսկ ի՞նչ անել հիմա։
Անուղղելի-յիմար
Սիրտս ահա նորից
Կուրծքս այնպէ՛ս թակում,
Այնպէ՞ս է տկտկում,
Կարծես թէ Մօրգէի այբուբէնով
Ամենքից է դիմում մի զուսպ էնով,
Ամենքից է տալիս իր նոյն հարցը յիմար.
—«Իսկ ի՞նչ անել հիմա»...

Սիրտս մոլեգնօրէն կուրծքս է ծեծում,
Ինչ-որ մէկն էլ
դուռն է ծեծում յուշիկ։
Յարբածի պէս ելնում,

Գնում դուռն եմ բացում:
Դուռն եմ բացում —
Եւ ի՜նչ.
Դո՛ւ ես, իմ աննգի՜նըս,
Դու իմ տունն ես եկել,
Որ որոնած ժամին վեր չկենաս
Ու մորթողի նման դուրս չգնաս, —
Որ չգնա՛ս,
Մնա՜ս,
Ընդմի՛շտ մնաս...

Ու ես լուռ նայում եմ fո աչերին,
Սիրո՛վ, ցաւո՛վ լեցուն,
Տագնապներո՜վ լեցուն
Այս աչերին։

Մի՛ տագնապիր. ոչի՜նչ, առանձին բան չկայ՛.
Թո՛ղ nr fո մանկիկը իմն անուանի «fեոի»,
Բայց նա «fոյրի՜կ» կասի վաղը մեր աղջկա՛ն...

1952—53
*Մոսկւա*





# ԵՐԳ ԵՐԳՈՑ

## ԳԼՈՒԽ Ա.

> ...Խնդրեցի զնա՝ եւ ոչ գտի,
> կոչեցի զնա՝ եւ ոչ ետ ինձ զձայն...
> ...Իւղ թափեալ է անուն քո...
> «ԵՐԳ ԵՐԳՈՑ»

1. Գարունն այս անգամ ձմռանը եկաւ,
Այն էլ հիւսիսում.
Ես բոլորովի՜ն չէի սպասում.
Ձմեռն այս վկայ։
Քեզ չփընտրեցի՛, չըորոնեցի՛
Եւ… գտայ յանկա՜րծ,
Ինչպէս դու մի օր անունդ ես գտել,
Օ Սուլամի՜թա։

2. Օ Սո՜ւլ…
Սուլամի՛…
Օ Սուլամի՜թա.
Քո բիբլիական անունն եմ սիրում,
Սիրում եմ, այն էլ բիբլիակա՛ն սիրով,
Որ երբ իր նեղլիկ բառէ շապիկն է աշխատում հագնել,
Թւում է հիմա հեթանոսակա՛ն՝
Նոյնիսկ անպարկե՜շտ,
Բայց… նրա՛ աչքում,
Ում համար սիրոյ արքութիւնն արդէն
Դարձել է հագուստ տօնակա՛ն օրւայ,
Մինչ նա իմ միա՛կ շապիկն է. մաշ̃…

3. Եւ ես սիրում եմ քեզ ամբողջովի՜ն։
Իսկ ի՞նչ ես, ի՞նչ ես դու ամբողջովին,
Եթէ ոչ մարմին,
Ու նաեւ արիւն։

Իսկ մնացածը՝ բառեր են միայն,
Պա՞ղ-արհեստակա՞ն ու ճապա՛ղ լեզւի
Մի թարգմանութի՞ւն,
Իսկ ես խօսում եմ մայրենի՛ լեզւով՝
Աղամի՛ ճման
Ու Եւայի՛ հետ։

4. Օ Սուլամի՛թա, օ Սուլամի՛թա.
Մենի՛ք, կարծեմ, արդէն խնձորը կերանի՛ք,
Քանզի ձա, ով որ մեզով է տրւում,
Տրւում է, անշուշտ, մարմնից առաւել...
Ո՞ւր է դրախտը,
Եթէ ոչ՝ միայն ֆո թարթիչների հովանու ներքոյ.
Քո
դեռ փակ
ծոցում,
որի դռները,
Արդէն թակում են
Եւ Երկո՛ւ կողմից.
Քո սիրտը՝ ներսի՛ց,
Իմ ձեռքը՝ դրսի՛ց...

5. Օ Սուլամի՛թա, բա՛ց արա դուրդ։
Ես ֆեզ չե՛մ փնտրել, ֆեզ չե՛մ որոնել,
Չե՛մ էլ հարցրրել ես պահակներից
Քո
Իմ չունեցած-չիմացած հասցէն։
Ես ճամփորդի պէս,
Ու մոլորւածի
Հասել եմ դուրդ,
Որ ես բախում է իմ ձեռքը դրսից,

Քո սիրտը՝ ներսից,
Ընդունիր հիւրիդ,
Որ կդառնայ տէ՛ր,
Բայց նաեւ՝ ծառա՛յ…

6. Եւ թո՛յլ տուր խօսել.
Գրկելուց առաջ,
Փարուելուց առաջ,
Թոյլ տուր ինձ նայել
Մի փոքր հեռուից,
Եւ թո՛յլ տուր կրկնել՝
Համբոյրից առաջ,
Համբոյրի նմանը
Կրկնել անուրդ
—Օ Սո՛ւլ…
Սուլամի՛…
Օ Սուլամի՛թա…

ԳԼՈՒԽ Բ

…Գեղեցիկ ես իբրեւ զԵրուսաղէմ…
«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

1. Օ Սուլամի՛թա.
Հապա ո՛ւր արի, որ ես ինձ տեսնեմ։

2. Գեղեցիկ ես դու, ինչպէս բոլորը,
Որոնց սիրում են,
Եւ ո՛չ աւելի ու ո՛չ էլ պակաս։
Ի՞նչդ է գեղեցիկ՝ ուրի՛շը կասի,
Միայն թե ինձ համար դու գեղեցի ես,
Ինչպէս բոլորը, որոնց սիրում են։

Եւ կախարդիչ ես, ինչպէս բոլորը,
Որոնց չեն տիրել։
Բ՛ւ ացսովոր ես,
Քանի որ ճոր ես,
Բ՛ւ սովորական՝ քանի որ դու էլ
Երբէք չես կարող չսիրած մնալ։

3· դու սեւ ես՝ ինչպէս ֆո ժողովրդի դարաւոր բախտը,
Եւ սեւութեան մէջ՝ այնքա՛ն լուսաւոր,
Որքան լուսաւոր ացուն է տալ ֆո ժողովուրդը։
Սեւ ես աչերդ՝ իմ աչերի պէս,
Եւ գիտես նայել այնպէ՛ս տրտմօրէն,
Որքան տրտում է սիրտս ա՛յն պահին,
Երբ ինձ թւում է, թէ չե՛ս սիրելու։

4· Սեւ ես վարսերդ, ինչքան ճերմակ է
Դեռ փակ կուրծքը ֆո,
Աւելի՛ ճերմակ
Միտս ացհալ ձիւնից իմ Արարատի,
Որ փրկեց Նոյին,
Ուրեմնը՝ եւ ֆե՛զ,
Ի՛նձ ու... մեր սէ՛րը·
Աւելի՛ ճերմակ, քանի որ նրանց
Իմ աչերի պէս եւ ո՛չ մի սեւ աչք
Դեռ չի ստեղել ացգամ հայացֆո՛վ։

5· Մի՛ լինիր այսքան... այսքան սպիտակ·
Բացի՛ր հայացքիս եւ աչերիս դէմ,
Նաեւ մատների՛ս,
Իւրաքանչիւրը՝ միս դարձած մի ոտ։
Արեւառութի՛ւն ընդունիր մի քիչ

Իմ հայացքի՛ տակ,
Նաեւ մատների՛ս։

6. Քո կրծքի նման ճերմակ են նաեւ քո ատամները։
Եթէ պարկեշտ ես՝
Մի՛ ժպտայ երբէք…

7. Օ Սուլամի՛թա·
Այդպէս ամաչկոտ շուռ մի եկ ինձնից,
Բայց շիկնի՛ր, շիկնի՛ր,
Որ իմ նեղ խցում
Արեւածագի պատրանքն զգամ ես։

Շիկնի՛ր ու թո՛յլ տուր,
Որ հետըդ խօսեմ՝
Փարուելուց առաջ·
Փարուելուց առաջ՝
Մի փոքըր հեռուից
Քեզ նայեմ այնպէս,
Կարծես առաջին անգամ եմ տեսնում։

8. Ա՛խ, այդ քո շիկնած այտերը մաքուր՝
Քո թուխ մազերով լուսապսակուած։
Եւ քո շուրթե՛րը…
Ինչո՞ւ է թւում,
Թէ քո այտերին — առաջի՛ն անգամ —
Հպուելը նոյնքա՛ն դժուար է հիմա,
Որքան որ հնում հաւատափոխման — դարձի բերումը,
Եւ քեզ համբուրելն — առաջի՛ն անգամ
Նո՛յնն է, ինչ մի նոր տաճա՞ր աւերել,
Թէ՞ հիմնադրել մի եկեղեցի…

9. Քո պարանոցը՝
Ազնիւ մարմարէ մի վե՜հ աշտարակ,
Որտեղից — դարե՜ր — մարդիկ են կախւել՝
Ինձ նմանե՜րը...
Նման երջանիկ կախաղանի դէմ
Ես չե՛մ բողոքում։

10. Օ Սուլամի՜թա.
Դու ամաչելուց շրջւում ես ինձնից։
Ա՜հ, fո կոնքերը fնար են լարւած։
Դու չե՞ս կամենում, որ ամբողջ գիշեր
Քնարը հնչի,
Որ իմ մատները ողջ գիշերն ի լոյս
Սաղմոսնե՜ր երգեն.
«Օ Սո՜ւլ...
Սուլամի՛...
Օ Սուլամի՜թա...»

11. Օ Սուլամի՜թա.
Տեսնո՞ւմ ես, թէ fեզ ինչպէս եմ սիրում.
Առասպելական fո նախապապի՝
Սողոմոնի՛ պէս։
Նրա արիւնից մի՞թէ մի կաթիլ
Յորձանք չի տալիս fո երակներում։
Որտեղի՞ց հապա
Նրա արիւնը օսարի՛ս ursում՝
Ի՛մ ursում, որ fեզ
Սիրում է այսպէս՝
Աստւածաշնչեան ա՛յնտեսակ սիրով,
Որ երբ իր բառէ շապիկն է հագնում,
Թւում է այսօր հեթանոսական՝

Նույնիսկ անպարկե՛շտ,
Բայց... նրա՛ աչքին,
Ում համար սիրոյ սրբութիւնն արդէն
Դարձել է հագուստ տօնակա՛ն օրւայ։
Իսկ նա իմ միա՛կ շապիկն է. մսէ՛։

12. Ես քեզ սիրում եմ քո նախապապի՝
Սողոմոնի՛ պէս,
Որ մի արքայ էր,
Մինչդեռ ես...
Գիտե՞ս,
Ես ինչ-որ չափով նո՛յնպէս արքայ եմ։
Ո՛չ նրա համար, որ ունեցել եմ
Հարճեր ու կանայք,
Ո՛չ էլ նրանով, որ ես կարող եմ
Երգ երգոց թողնել։
Եթէ ինձ համար թագուհի ես դու,
Ի՞նչ եմ ե՛ս հապա,
Ինչպէ՞ս ի՛նձ կոչել, եթէ ոչ արքայ,—
Այլ կերպ չի՛ լինում.
Թագուհիները ե՞րբ են պատկանել մանկլաւիկների...

## ԳԼՈՒԽ Գ.

**Մուծէք ինձ ի տուն գինւոյ...**
**Վասնզի խանդակաթ եմ սիրով...**
**«ԵՐԳ ԵՐԳՈՑ»**

1. Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ,
Դուստրե՛ր Հիւսիսի.

Ի՛նձ էլ սնուցէք կազդուրիչ գինով,
Քանի որ սիրուց ես նւաղում եմ։

2· Ես նւաղում եմ, իսկ կրծքիս ներքոյ
Կախուած է նաեւ ծաղրաբար մի բեռ՝
Սեփական սի՛րտըս։
Նա ծա՜նր է դարձել,
Եւ... ծանրր այնքա՛ն,
Որ հազիւ մի ցուլ իր մէջքին տանի։
Իսկ միևչեւ անգամ երէկ ցուլ եմ ես,
Այդ բեռը գոնէ մէջքի՛ս չեմ կրում,
Որ դիւրին լինէր։
Այդ ծաղրութիւնը ներսումս է կախուած։
Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛շ աղջիկներ,
Ինձ էլ սնուցէք կազդուրիչ գինով,
Քանի որ—տեսէ՛ք—նկում եմ արդէն
Սեփական սրտիս ծաղրութեան ներքոյ։

3· Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛շ աղջիկներ,
Դուստրե՛ր Հիւսիսի։
Երուսաղէմում երբեւէ չեղած
Երուսաղէմի դուստրը սեւահեր
Ինձ չի պատկանում։
Նա կայ եւ չկայ՝ ինչպէս երկինքը,
Իմն է—իմը չէ՝ ինչպէս որ ինքը...

4· Ողջ գիշերն ի լոյս իմ մահճակալին
Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակայն։
Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենեակում
Կանչում եմ նրան, եւ ձայն չի տալիս։
Եւ դուրս եմ գալիս,

Որ փողոցներո՛ւմ որոնեմ նրան։

5. Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ,
Դուստրե՞ր Հիւսիսի։
Երուսաղէմում երբեւէ չեղած
Երուսաղէմի դստերն եմ փնտրում,
Փնտրում եմ նրան ես փողոցներում,
Փնտրում եմ նրան նաեւ ձեր դէմքին,
Գտնում եմ մի մա՛ս, մի շող՛, մի շո՛ղ,
Իսկ իրեն՝ բնա՛ւ։

6. Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛շ աղջիկներ,
Թէ պատահաբար հանդիպէք նրան՝
Երուսաղէմի թխահեր դստեր,
Ի՞նչ պիտի ասէք։
Երդւեցնում եմ ձեզ. ասացէք նրան,
Որ ես հիւանդ եմ կարեվեր սիրով։

7. Ասացէք նրան, որ սիրում եմ ես
Նրա անծանօթ մօրը սիրելի,
Նրա դարաւոր արիւնն եմ յարգում,
Ինչպէս յարգում են յղիութիւնը։

8. Երդւեցնում եմ ձեզ. ասացէք նրան,
Որ սէրն իմ հին է ու վաղրնջական՝
Իր բազմադարեան
Հրեական արեան
Եւ նոր՝
Նոր զարթնած իր արտի՛ նման,—
Հին ու նոր՝
Ինչպէս առաւօտն իմը։

9. Դուք լսո՞ւմ էք ինձ, խարտեա՛շ աղջիկներ։
Դուք գիտէ՞ք արդեօք. թէ ի՞նչ եմ ուզում,
Որ ասէք նրան՝ այդ սեւահերին.
Երդւեցնում եմ ձեզ, ասացէ՛ք նրան.
Ուզում եմ լինի նա սէրն իմ վերջի՛ն,
Իսկ ես էլ՝ նրա առաջի՛ն սէրը։

10. Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ.
Թէ իմ փոխարէն դուք պատահաբար հանդիպէք նրան՝
Երուսաղէմի մրայօն դստեր,
ասացէք, որ նա մի փակ այգի է,
Այգու մէջտեղում՝ դռնփակ հնձան,
Բուրող հնձանում՝ եռացող գինի,
Իսկ դուք, բարիներ, սնուցում էք ինձ
Ուրի՞շ մի գինով,
Որպէսզի սիրոյ անյագ ծարաւից
Ես չնւաղեմ։

11. Երդւեցնում եմ ձեզ. ասացէք նաեւ,
Որ երբ յանկարծ նա ինձ որոնի,
Երբ իմ դուռը նա բախի յետոյ,
Եւ նոյնիսկ կանչի՛,
Ինձ ձա՛յն տայ սիրով՝
Կլսի միայն
Իր խզւող ձայնի արձագանքը թոյլ.
Կեանքի եւ սիրոյ եզերքին ընկած
Խեցին կա՛յ,
Սակայն...
Անփոփոխ խեցու խեղճ բնակիչը
Յափշտակւած է օտար գազանից
Եւ կամ թաղւած է իր քարէ բնում...

12. Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ.
Թէ յանկարծ տեսնէք Երուսաղէմի սեւակըն դստեր,
Աւելացըրէք,
Որ առայժըմ ես ննջում եմ անուժ.
Բայց դեռ արթուն է սիրտըս նւաղուն։
Թող նա շտապի՛,
Թէ չէ՝ կուշանա՛յ,
Թէ չէ՝ կլսի
Ոչ թէ իմ կանչը,
Այլ վերջին ճի՛չը...

ԳԼՈՒԽ Դ

Ահեակ նորա ընդ գլխով իմով, և՛ւ աջ
նորա պատեսցէ զինեւ...
«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

1. Եւ դու չուշացա՛ր.
Դու շտապեցի՛ր,
Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՛թա...

2. Իմ Սուլամի՛թա.
Եկար վազեվազ՝
Եռամեայ կայտառ զամբիկի նման,
Եւ զամբիկի պէս գեղեցիկ՝ եկա՛ր։

3. Եկա՛ր... եւ իսկոյն, իմ Սուլամի՛թա,
Հազարամեակներն իմ ու քո միջեւ ասես ջնջւեցին...
Ես այգի չունեմ,
Որ հիմա քեզ պէս դալար վազերից

Կողերիդ համար մահիճ պատրաստեմ
Ես այգի չունեմ... եւ այգի՛ս չեկար։

4. Մայթե՛ր կաց հիմա
Ու գոռ բաղաքե՛ր.
Շեմե՛ր բազմայարկ,
Նրանցից մեկում՝
Սենեակ մի ցեղլիկ,
Դու այնտե՛ղ եկար։

5. Եկար փարուեցիր՝
Քո ամբողջութե՛մբ։
Մամուռն է այդպես քարերին փարում,
Եւ արշալոյսի գոյները՝ երկնին։
Ու ես այդ պահին զգայուն էի՝
Ինչպես ո՛ւշը,
Եւ մաքուր էի՝
Ինձ վրայ յառած հայեացքի՛դ նման։

6. Եւ դու բացուեցի՛ր...
Այդպես բացում է մահճում երեխան,
Մթնում՝ ծաղիկը։
Ու ես այդ պահին՝
Քո անմեղութեան բոյրերից արբեի՝
Մոռացայ իմ ողջ անցեալը հարուստ
Ու երջանկացայ իմ... աղքատութե՛մբ։

7. Ու տրուեցի՛ր դու
Ծնելով ցորից։
Այդպես տրում է հողն արմատներին,
Իր հունին՝ ջուրը։
Ու ես հասկացայ, որ ես ո՛չ մի տեղ

Այնման չեմ զգում իմ գոյութիւնը,
Որման ես՛ գրկում։

8. Ես այլ բան չէի,
Քան մի ապակի
Որ թափանցիկ է—լոյսը չի բեկում։
Եկար ու նրան ամալգամ դարձար,
Եւ ինձ դարձրիր դու մի հայելի,
Ուր անդրադարձաւ սէրդ երիտասարդ...

9. Իմ սէրերն իրար ե՛ւ նման էին,
Ե՛ւ նման չէին,
ինչպէս աշխարհի մեծ քաղաքները։
Եկաւ սէրը ես
Եւ ծննդավա՛յր դարձաւ ինձ համար...

10. Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՛թա։
Գիշերը կարծես իր սկիզբն առաւ
Քո թուխ վարսերից
Ու ծաւալելով՝
Վերցսին եկաւ խառնըւեց նրանց.
Երկինքը նորից
Զբաղւեց աստղեր տեղաշարժելով,
Բայց մենք չտեսանք ո՛չ այս, եւ ո՛չ այն.
Քո գլխի տակ էր իմ ձախը դրուած,
Եւ ես մէջքն էի պատել իմ աջով.
Չկա՛ր ժամանակ,
Չկա՛ր նաեւ միտք.
Կար շնչառութի՛ւն,

Որ շատ էր նման
Օվկիանոսների տուրեւառութեա՜ն...

ԳԼՈՒԽ Ե

Ես նընջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ...
Դիր գիս իբրեւ զկնիք ի վերայ սրտի
Քո... վասնզի հզօր է իբրեւ զմահ սէր...
«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

Լաւ է երկու, քան զմի.. զի եթէ
նընջեսցեն երկուք՝ ջեռուցանիեն
զմիմեանս, իսկ մին՝ զիա՞րդ ջեռուցցէ..
«ԺՈՂՈՎՈՂ»

1. Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՜թա։
Ես այլ բան չէի,
Քան մի ապակի,
Որ թափանցիկ է—լոյսը չի բեկում։
Եկար ու դարձար նրան ամալգամ,
Եւ ինձ դարձրիր դու մի հայելի,
Ուր անդրադարձաւ սէրդ երփներանգ։
Հիմա դու չկա՜ս,
Ու ես վերըսին
Ահա հայելուց ապակի դարձայ՝
Մի սովորակա՜ն—աննե՜րկ ապակի,
Որ թափանցիկ է—լոյսը չի բեկում...

2. Ինձ արդեն վաղո՜ւց այնպես է թւում,
Թէ ես նընջում եմ, իսկ սիրտս արթուն է։
Եւ փնտրում եմ քեզ,

Սակայն չեմ գտնում,
Ու կանչում եմ ես,
Բայց ձայն չես տալիս.
Տարածութիւնն է ընկած մեր միջեւ,
Ինչպէս մի սահմա՛ն,
Որ բաժանում է
Երկու թշնամի երկիր մէկմէկուց։
Իսկ մենք — թշնամի՞...

3. Գարունը նորից
Իր վտանգաւոր ճարոզն է կարդում,
Կոչեր է անում ինչ-որ նոր սիրոյ,
Եւ չի հասկանում,
Որ վտանգաւոր իր ճարոզի դէմ
Թէ ես արթուն եմ՝ իմ սիրտն է ճնած։

4. Հեռու ես, հեռո՜ւ,
Ու ձայն չես տայ ինձ՝ որճան էլ ձայն տամ։
Գիտե՛մ, որ չկա՜ս,
Ու չե՜մ գտնի ես՝ որճա՛ն էլ փնտրեմ։
Բայց... մի՞թէ արտին բան կհասկացնես։
Նորից ակամայ ելնում եմ փողոց,
Սանրող հայեացքով իմ շուրջն եմ նայում։
Մայթերը լի են ժպիտ-ծիծաղով,
«Ներողութիւն»-ով ու «համեցէ՛ք»-ով,
«Ցտեսութիւն»-ով ու «բարեւ»-ներով.
Բոլո՛րն այստեղ են — իրենց տեղերում,
Միայն դո՛ւ չկաս — իմ սիրտն է թափուր...

5. Եւ ո՜ր հասկացայ,
Որ ես էլ, գիտե՞ս, ես էլ եմ նախանձ։

Նախանձում եմ ես սիրող զոյգերի՜ն,
Շրջում են գրկած, ձեռ-ձեռ֊ի, կիպ-կից։
Մենակ եմ լոկ ե՛ս։
Դո՛ւ չկաս, լոկ դո՜ւ։

6։ Ջեռիս ափերը հալւել են ուզում։
Ո՞ւր է կրակը։
Քո ձե՜ռ֊ը չկայ։
Մատներս ուզում են լոյս ու ջող յուշցել։
Ո՞ւր են ուսերդ։
Եւ լանջդ ո՞ւր է։

7։ Եւ ամենուրեք ծաղիկ են ծախում,
Սիրա՛ծ ծաղիկդ։
Ես ո՞ւմ նւիրեմ։

8։ Հեռախօսայիս խցերն ազատ են,
Եւ խօսափողի կեռերը բոլոր
Ջորս կողմից ինձ են հարցական նայում։
Ո՞ւմ զանգահարեմ, երբ դու չկաս։

9։ Ու ես պատւած եմ
Մեր անցած օրւայ յուշերով այնպէս
Ինչպէս Պոմպէյը՝ սառած լաւայով։

10։ Եւ ինձ վրայ են լոյս ու ստւերդ՝
Ա՛յժըմ եւ ընդմի՜շտ։
Ա՛յժըմ եւ ընդմի՜շտ
Այդ fո ստւերից ու լոյսից՝ արդէն
Շերտաւոր եմ ես,
Ինչպէս յովազը։

11. Ա՛խ, երանի՜ թէ
Իմ տառապանքը բոնագրաւեն
Եւ անմիջապէս հանեն աճուրդի՝
Ցանկացա՜ծ գնով։
Եւ ո՜ւր էր յանկարծ ձեռբակալէին
Ու տային դատի
Կարոս յորջորջած այս յանցապարտին։
Իսկ այս յուշե՜րը,
Որ կենդանի են կենդանի մարդուց,
Ինչո՞ւ չեն կարող
Յանկարծ ենթարկե՛լ աւտոպղէսի...

12. Իմ Սո՛ւլ...
Սուլամի՛...
Իմ Սուլամի՜թա.
Առանց ձեզ ապրելն այնքան է հիմա
Անհասկանալի ու տարօրինակ,
Որքան սառոյցի կամ ծիւնի վրայ
Վառուող խարոյկը։
Ու ես ապրում եմ՝
Այդպէ՛ս վառելով։

13. Դու կարծես չկաս
Ու չես լինելու,
Այլեւս ինձ համար մեռած ես կարծես։
Սակայն ես գիտեմ
Որ դու անմահ ես,
Ինչպէս անմահ է կրակն աշխարհում.
Այստեղ կհանգչի,
Կվառուի այլուր։

Եւ դու — ինձ համար — չե՜ս մեռնի երբէք,
Ինչպէս չի մեռել

Քո նախա-նախա-նախամայրիկը,
Որ քո սիրելի անունն էր կրում,
իմ Սուլամի՜թա։

14․ Եւ ուզում եմ ես փոքրիս մոռանալ,
Ահաւոր փոքրը իմ ամբո՜ղջ կեանքի,
Եւ ի հակառակ՝ անկասկա՛ծ ասել,
Որ կմոռանայ շունը տիրոջը,
Տառն՝ իր ծաղկելը,
Ցուլն՝ իր բառաչը,
Եւ ժամապահն՝ իր նշանաբանը,
Սակայն ո՛չ ես՝ քե՜զ,
Իմ Սո՛ւլ…
Սուլամի…
Իմ Սուլամի՜թա…

1957 Դեկտեմբեր, 1960 Մայիս
*Մոսկւա*



Պ. Սեւակը Աւագ որդու՝ Հրաչիկի հետ

Ֆամուսհդ Խաչատուր ՍՕՍ

«ԵՒ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ...»

Ա

Մենք կայինք նաեւ Նրանի՛ց առաջ,
Եւ դարե՜ր առաջ։

Մենք բռնութիւնից խոյս էինք տալիս՝
Բեղուն դաշտերին գերադասելով լեռները քարոտ.
Իսկ մեզ ոտնկոխ հետապնդողին դիտապաստ անում
Եւ դրանով իսկ անուն ստանում՝
Կոչելով մեզ Հայկ։

Մենք անշունչ քարը դարձնում էինք ձուկ,
Ձո՛ւկ,
Որ անջրդի լեռնաքարերի շիկացած հողից
Իր փորը վառած՝
Կիսաբաց բերնով
Երկընքից անջուր
Գոնէ անձրեւի շիթ էր պահանջում։

Լեռը ծակելով՝
Մենք նրա միջից ջուր էինք տանում

Ու շոայլ բաճում
Մեր այգիների այրի արգանդից։

Իսկ ամուլ կաւից տալիս էիճ մեճ
Ջեւը վառսանդի
Եւ կոչում կարաս,
Որի մէջ յեսոյ լողացնում էիճ գարին մեր մաճուր,
Եւ մկրտութեան այդ ջուրը դեղից
Հարբածութիւնից ճոյնիսկ առաւել
Զարմանիճ էր ազդում այն գոռոզներից,
Որ մեզ այնուհետ
Չէին հանդրգնում կոչել «բարբարոս»,

Մեճ յամառ ոսկուն ստիպում էիճ նաեւ մայրանալ՝
Դառնալ դիցուհու արձան անթերի,
Եւ այդ հլութիւնն անծնաւոր ոսկու
Անւանում էիճ Մայր զգաստութեանց՝ Մեծըն Անահիտ։

Մեճ տալիս էիճ անյատակ վիհից մի ճոր խորութիւն,
Երկնամուխ կիրճից՝ բարձրութիւն մի ճոր
Եւ... կոչում Դառնի...

Մեճ կայիճ նաեւ Նրանի՛ց առաջ։
Մեր արհաւերի եւ իշխանների արածի վրայ չարածը դրած՝
Նրանց գործն էիճ դեռ շարունակում
Լարերի վրայ բամբ բամբիռների
Եւ... դա անւանում Երգ Վիպասանաց...

Արշակները մեր՝
Հայրենի հողից ոտով շփելով,
Լոկ հպարտութեան խօսքերով էին շուրթերը բանում
Եւ ըմբերանում տիրակալներից։

Մուշեղները մեր՝
Օսար զորութեանց ընդդիմանալիս
Նրանց հարեմը գերի առնելով
Ու ձեռ չտալով եւ ոչ մի կնոջ՝
Առնականութեան եւ վեհանձնութեան դաս էին տալիս,
Այնպիսի՛ մի դաս,
Որ ոսոխն անգամ անգիր էր անում...

Մենք կայինք նաեւ Նրանի՛ց առաջ։

Մենք աստղերն էինք մեր աչքով զննում,
Արփալոյս էինք թելերով հինում,
Տաճարից ելնում ու թատրոն գնում,
Վայելում նաեւ հանոյքը վսեմ
Մեր այն պարուհի-կախաւողների,
Որոնց մարմինը նւագ էր լուծ
Եւ որոնք նաեւ «երգեին ձեռամբ»...

Բ

Այո՛ մենք կայինք Նրանից առաջ։

Սակայն ափխարհի լայնքի վրայով
Մի չտեսնըւած մրրիկ էր անցել։

Հրեայ մի գունաս՝
Փըւած իր երկրից,
Օսարականի ու հիւրի տեսով,
Ինքն իրեն տարաւ ափխարհից-ափխարհ,

Զօրաւոր էին աստւածները հին,
Այնքան զօրաւոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում։

Իսկ խեղճ ու աղքատ այդ երբայեցին
Եկաւ շաղ տալու խոստումներ օդում,
Եկաւ գիճավատ գեղեցիկ ստով…

Միամիտ էին աստուածները հին,
Միամիտ այնքա՛ն,
Որ ծառաւն իրենց յագեցնում էին լոկ արեամբ զոհի
Եւ իրենց խաղցը՝ նոյն զոհի մսով։

Իսկ երբայեցին եկաւ ասելու·
«Այս է մարմինն իմ· առէք ու կերէք։
Այս է արիւնն իմ· ըմպեցէք սիրով»…

Ուղղամիտ էին աստուածները հին,
Ուղղամիտ էին՝
Պարզ դերձակի պէս·
Իրենց հաւատի հանդերձը նրանք
Միշտ ձեւում էին ճիշտ կեանքի վրայ։

Իսկ երբայեցին եկաւ կարելու
Մի համընդհանուր — կախարդիչ հանդերձ,
Որով պիտի որ հաւասարէին
Ե՛ւ վտիտ ու գեր,
Ե՛ւ հաստ ու բարակ…

Ճշտախօս էին աստուածները հին,
Ճշտախօս էին՝
Երեխայի պէս·
Մարդկանց մարդ էին նրանք անվանում,
Իսկ իրենց՝ աստուած։

Իսկ երբայեցին ասաց· «Մարդ եմ ես»,

Եւ… դարձաւ ասւած՝
«Մարդ եմ» ասելով…

…Զօրաւոր էին ասւածները հին,
Այնքա՛ն զօրաւոր,
Որ անկեղծ էին ու չէին ստում։
Իսկ պատմութեան մէջ կան ժամանակներ,
Երբ ով չի ստում՝ պիտի կործանուի՛…

Գ

Եւ կործանուեցին ասւածներց հին։

Մարդիկ,
Որ երէկ ունէին տարբեր ասւածներ բազում,
Պարտաւոր էին հիմա ունենալ
Միայն մի՛ ասւած,
Բոլո՛րը՝ լոկ մի՛, միայն մի՛ ասւած։
Եւ չգիտէին,
Թէ ո՞վ է այդ Մին
Եւ ի՞նչ է ուզում…

Աւամազդների, Միհրերի տեղակ,
Բոցբեղ-բոցմորուք շէկ Վահագներին փոխարինելու
Եկաւ մի հրեայ սեւմորուք-սեւբեղ,
Եւ Աստղիկների, Անահիտների ու Նանէների
Երէկւայ տեղում այսօր հաստատց
Իր մօրը դալո՞ւկ, թէ՞ ամօթահար։
Եւ խօսում էին նրանք մի լեզուով,
Որ չէ՛ր հասկացւում։

Մեհեանների տեղ ու բագիններին,

Նրանց դեռ տաք-տաք մոխիրի վրայ,
Հասակ նետեցին
Դեռեւըս անձեփ եւ փայտակտուր աղօթատեղիք՝
Իրենց խաչերը սուր մխրճելով
Նախ՝ արտերի՛ մէջ,
Ապա՝ երկընքի՛...
Ատրուշանների խուրձ-խուրձ բոցերի առատութեան տեղ
Կենտ-կենտ հասկերի չար աղքատութեամբ
Պաղ-պաղ մոմերն են ուզում դառնալ հաց մի նոր հաւատի,
Որ իրեն կոչում կամաւորութիւն,
Բայց տարածւում է բռնութեամբ անքող...

...Առանց հաւատի կեանքում դիւրին չէ նոյնիսկ մեռնելը,
Իսկ ապրելն... արդէն անկարելի է։

Մարդուց խլեցին իր հաւատը հին,
Իսկ հաւատը նոր հաստատւեց խօսքո՛վ,
Մի՛միայն խօսքով.
—Դեռ նորը չկա՛ր։

Աւերւեց հինը ու փլատակւեց,
Իսկ նորը միայն կառուցւեց խօսքո՛վ,
Մի՛միայն խօսքով.
—Դեռ նորը չկա՛ր։

Եւ այսպէս՝
Յանկարծ ու դանդաղօրէն
Ամե՛ն ինչ շրջւեց,
Տակն ի վեր եղաւ,
Եւ կարգի բերել չէր կարող ոչ ոք.
—Ինքը շրջողն իսկ չէ՛ր կարող էլ, չէ՛։

Եւ այսպէս՝
կեանքից մնաց մի «մեղայ»,
Որ պիտի ևաեւ... բարձր չհնչէր:
Եւ այսպէս՝
Անցաւ ողջ հարի՛ւր տարի,
Որ կարճ է թւում, երբ գիրք ես կարդում,
Իսկ երբ ապրում ես եւ ամեն րոպէ
Զգում ես մաշկի՛դ, զգում ես սրտո՛վ,
Ուղեղիդ բոլո՛ր ծալքերով՝

այնժամ...

## Դ

Հէնց այսպէս էիմ մենք ապրում այնժամ։

Հայաստան կոչած աշխարհն էլ արդէն
Լոկ անունով էր Հայաստան կոչւում։

Զոհւած արջառի տաքուկ սրտի պէս
Մեր հողն էր կիսւած
Ու բոնի խաււած
Երկու շիկացած ու սուր շամփուրի,
Որոնցից մէկը պարսիկն էր բռնել կրակի վրայ,
Միւսը բռնել էր մոմերի վրայ նենգ բիւզանդացին։

Խորովւում էիմ։
Արցունքի տեղակ
Մեր ճնճղներն էին կաթում-կաթկթում,
Ասես կամենում իրենց խորովող կրակը մարել։
Սակայն ճնճղներից—այդ ո՛վ չգիտի—չի՛ մարում կրակ,
Այլ բորբոքւում է մոլութեամբ մի նոր։

Մե՛ր հողի վրայ,
Մե՛ր երկընքի տակ
Մենք դարձել էինք օտարի գաղութ։
Նոյնիսկ մեր հօրը երկրպագելու
Եւ կամ թէ որդուն պագելու համար
Այլ արքունիքից պիտի խնդրէինք մի թոյլտուութիւն,
Որ եթէ հասնէր՝
Պարտաւոր էինք համարել շնորհ
Եւ շնորհակալ մնալ յաւիտեան։

Հայաստան կոչուած աշխարհը կիսուած
Նստել էր արդէն
Իրար չկպած ծայրերի վրայ ա՛յն աթոռների,
Որոնց տակ անտակ անդունդն էր բացւում։

Իսկ մեր մարմնաւոր տէրերը բոլոր
Ունէին լոկ մի մտահոգութիւն,
Լոկ մի խոհ բարձր՝
Իրենց աթո՛ռը,
Գահո՛յքը իրենց
Եւ իրենց բա՜րձը։

Միա՜յն չզըրկուել իրենց վերադաս տիրոջ շնորհից,—
Զսպանակի պէս
Այս միտքն էր նրանց վեր ու վար նետում։
Միա՜յն թէ կառչել ու նստած մնալ
Իրար չկպած ծայրերի վրայ այ՛ն աթոռների,
Որոնց տակ անտակ վիհն էր որոճում...

Աւերակուել էր երկիրը հայոց։
Ու եթէ նրա տէրերը տանու
Գէթ ունենային ազնուութիւնը իրենց նախորդի՝

Նրա պես պիտի մոռային նորէն·
«Աւերակացըս ո՞ւմ թագաւորեմ»…

Ե

Քաջերի սահմանն իրենց զէնքն է հէնց։
Քաջեր մի՛շտ էլ կան,
Զէ՞նք է հարկաւոր։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Պէտք է ասպարէ՞զ,
Որ նո՛յնպէս չկար։

Կար միայն պարի՞սպ,
Որ տարածւում էր աշխարհից-աշխարհ։
Եւ կային նաեւ ազնիւ ճակատներ,
Որոնցով երբէք պարիսպ չե՞ս քանդի…

Աշխարհի վրայ իշխում էր արդէն մի ճշմարտութիւն,
Որ հարի՞ւր տարի,
Հարիւրծի՛գ տարի
Չէր կարողանում իր ճշտութիւնը կարգին հաստատել·
Մի ճշմարտութի՛ւն,
Որ ամեն վայրկեան
Կամայ-ակամայ հերքում էր իրեն՝
Անվերջ բացելով իր մերկութիւնը
Եւ իսկութիւնը։

Իսկ իսկութի՞ւնը…

Յիսուսը,
Որ մի հրեայ էր ազնիւ,
Արդէն տա՞ս վաղուց դարձել էր իրօք

Մի բիւզանդացի խորամանկ ու նենգ·
Եւ նոր հաւատի եղեմ-դրախտի պահուճաճիի տակ
Հին Բիւզանդիոնը նոր հնարներով
Իր օտարակուլ դժոխքն էր տանում ուրիշ երկրներ,
Իր կայսերական մականն էր զարկում աշխարհի մէջքին,
Ա՛յն խեղճ աշխարհի,
Որ զարկի ցաւից նոյնիսկ տնքալու իրաւունք չուներ,
Եւ տնքոցի տեղ
Դեռ «ալելո՛ւյ» պիտի որոտար։

Իսկ իսկութի՛ւնը…

Հաւասարութեան ու եղբայրութեան ազնիւ խարոզով
Ուրիշի տուն ու երկիր էր մտնում
Օտար վարք ու բարք,
Օտար ծէս ու կարգ։

Իսկ իսկութիւն չէ՞,
Որ զօրից յետոյ
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
Եւ ինչ չի կարող ո՛չ մի զօր անել՝
Լեզուն է անում։

Իսկ իսկութի՛ւնը…

Նոր գաղափարը էլ գաղափար չէր,
Այլ մի կաղապար,
Մի նե՛ղ կաղապար,
Որ արդէն հարիւր տարի էր տեւում·
Ո՛չ թէ գաղափար
Այլ մի կաղապար՝

Որ երազն անգամ իր մէջ էր ձեւում·
Ո՛չ թէ գաղափար,
Այլ մի կաղապար՝
Ե՛ւ մարմնի համար,
Որ շնչակտուր հեւում էր, հեւում,
Ե՛ւ հոգու համար,
Որ վաղուց արդէն ազատ չէր թեւում,
Ե՛ւ լեզւի համար…

Գէթ լեզո՛ւն գործէր։
Մինչդեռ մեր լեզո՞ւն…

## Զ

Իրաւունք չկար երգել երգը մեր,
Որ դարեր ի վեր
Հնչել էր լեզուով մեր ոսկեղենիկ·
Ե՛ւ մեն ու մենիկ՝
Սիրոյ խօսքերով,
Ե՛ւ ուրախութեան տաճարների մէջ՝
Գինու հոսքերով,
Ե՛ւ մեր եօթնօրեայ հարսանիքներից՝
Մեր փակ բակերում,
Բաց տանիքներից։
Իրաւունք չկար նաեւ ննջել՝
Ո՛չ վիճի վրայ,
Ո՛չ էլ բամբիռի։
Այս կեանքի համար հոգացի՞ր՝
Պիղծ ես,
Ե՛ւ անօրէն ես,
Ե՛ւ բանադրուած։

«Ամե՜ն ինչ արա յանուն ա՛յն կեանքի,
Որ ճեզնից յետոյ, յետոյ է գալու»…

Թատրո՞ն ես գնում՝
Ուրեմըն պիղծ ես.
կեր ու խո՞ւմ անում՝
Ուրեմըն պիղծ ես։

Պարի՞ նայեցիր
Եւ կամ պարեցի՞ր՝
Ուրեմըն պիղծ ես։
Սիրասթա՞փ եղար,
Նոր սէ՞ր արեցիր՝
Ուրեմըն պիղծ ես։
Այս կեանքի համար գէթ մի՞տ արեցիր՝
Ուրեմըն պիղծ ես։
«Ամե՜ն ինչ արա ա՛յն կեանքի համար,
Որ ճեզնից յետոյ, յետոյ է գալու»…

Եւ այս ամենի՛ց, այսքանի՛ց յետոյ
Իրաւունք չկար մինչեւ իսկ լալու։

Որդո՞ւդ ես սգում՝
Ուրեմըն պիղծ ես,
Ողբում ես օ՞րդ՝
Ուրեմըն պիղծ ես։
Իրենց իսկ տւած ցաւի՞ց ես լալիս՝
Անօրէն ես դու,
Արժանի մահուան։
Դաւանանք կոչւած դաւի՞ց ես լալիս՝
Անօրէն ես դու,
Արժանի մահուան։

«Մտածիր միայն ա՛յն կեանքի մասին,
Որ ճեզնից յետոյ, յետոյ է գալու»...

...Եւ այս ամենի՛ց, այսքանի՛ց յետոյ՝
Իրաւունք չկար մինչեւ իսկ... լալու։

է

Իրաւունք չկար
Արեան փոխարէն գէթ արցունք որել։

Եւ ի՞նչ էր մնում։
Այլ բան չէր մնում,
Քան թէ աղօթել։

Աղօթել նրան՝
Այն նոր աստծուն,
Որ խոստումներից աչք իսկ չէր բացում,
Բայց ողջը՝ այնտե՞ղ,
Բայց ողջը՝ յետո՛յ,
Եւ ոչի՞նչ՝ հիմա,
Եւ ոչի՞նչ՝ ցածում։

Այլ բան չէր մնում,
Քան թէ աղօթել։

Բայց նրանք նոյնիսկ իրենց աստծուն
Աղօթում էին... օսար խօսքերով,
Խօսքեր՝ ոչ պակաս անհասկանալի
Քան իմն այդ աստուած։
...Եւ մարդկանց յոգնած սրտերի վրայ,
Որ երէկ այնպէ՛ս յուզառատ էին,

Այնպէ՛ս զգայիկ,
Իջել էր արդէն աճսարբերութիւն մի կործանարար
Ե՛ւ վաղւայ հանդէպ,
Ե՛ւ ապագայի։

Ոչ ոք չգիտէր՝ վաղն ի՞նչ կբերի։
Եւ ապագայի երաշխիք չկա՛ր։
Բերք չէին տալիս արտերը բերրի։
Նոյնիսկ խոսացեալ երկինքը վերից
Դարձել էր մի կեղծ—անկենդան նկար։

Անդրնդանում էր մի անյայտութիւն,
Անորոշութիւն մի ամենաթամ,
Որ վատ է անգամ որոշեալ մահից։
Մի անյայտութի՛ւն, որ ինձ էր դարձել
Երկրի իրական տիրակալը չար։
Եւ կործանումի սուր հոտ էր փչում
Ո՛չ միայն հացից, ջրից ու հողից,
Այլ նաեւ օդի՛ց ու ֆամո՛ւց անգամ։

Պէտք էր, շա՛տ էր պէտք ինչ-որ բան անել,
Սակայն ի՞նչ անել եւ ինչպէ՞ս, ինչպէ՞ս։

Ու բոլորն էին այդ հարցը տալիս,
Իսկ պատասխանող չկա՛ր ու չկա՛ր...

Ը

Եւ այդ պահին էր, որ աշխարհ եկաւ
Նա՝
Այր մի՝
Մեսրոպ Մաշտոց անունով։

Որտեղի՞ց եկաւ,
Ի՞նչ ակից բխեց։
Եւ ինչպէս եկաւ,
Հոսեց ի՞նչ հունով։

Այդպէս՝ արցունք է ծնւում աչքի մէջ,
Երբ որ աչքի մէջ ընկնում է աւազ։
Այդպէս՝ դառնում է աւազն ապակի,
Եւ ապակին է հայելի դառնում։

Այդպէս՝ արեւը ամենից առաջ
Լուսաւորում է բարձրաբերձ ծառի
Կատարին թառած թռչունի բոյնը։

Այդպէս՝ գոյութեան ահեղ պայքարում
Անփոփոխ պահած իր ներքինն էլի՝
Գազանն է փոխում իր մաշկի գոյնը,
Եւ դա թւում է անսպասելի...

Նրանց ծնունդը միշտ էլ թւում է անսպասելի
Եւ յետոյ մարդկանց դարեր շարունակ զարմանք
պատճառում,
Բայց նրանք կեանքում միշտ էլ ծնւում են լոկ այն
պատճառով,
Որ անչափ շատ են սպասել նրանց։

Ժողովրդի մէջ ննջում են նրանք,
Ինչպէս ջրի մէջ՝ ահեղ գոլորշին,
Ինչպէս ընտանի ախաղաղի մէջ՝
Իր իսկ երբեմնի թռչնութիւնը,
Ինչպէս մանուկի պարապ բերանում՝
Ակռայ — ատամը։

Նրանք ծնւում են իրենց ծնողի անօգնութիւնից,
Որպէսզի դառնան նոր գործողութիւն։
Նրանք ծնւում են ինչ-որ հանճարեղ մի յոգնութիւնից,
Որպէսզի դառնան հանճարեղութիւն։

Նրանք ծնւում են որ ապացուցեն,
Թէ վերջը մի տեղ դառնում է սկիզբ։

Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ հրաշք չկա՛յ,
Կայ միայն կարի՛ք։
Նրանք ծնւում են, որ ապացուցեն,
Թէ այնտեղ է լոկ սխրանքն սկսւում,
Ուր վերջանում է ամե՛ն մի հնար...

Բ

Այսպէս էլ ծնւեց մէկը Նրանցից,
Ծնւեց Նա՝
Այր մի՝
Մաշտոց անունով։
Եւ նա չծնւեց, որ աւելացնի
Հարց տողների բանակն անպակաս։
Նա եկաւ աշխարհ՝ պատասխանելու,
Եւ պատասխանը գտաւ իսկապէս...

...Քաջերի սահմանն իրենց գէնքն է հէնց։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Չէ՞նք է հարկաւոր։

Քաջեր մի՛շտ էլ կան,
Պէտք է ասպարէզ։

Եւ ճա էր ահա, որ ծեւաւորեց
Մի զեճ ժանգախոյս,
Եւ ծովաւորեց
Ասպարէզ մի ճոր,

Ուր թոյլ-ուժեղի,
Շատ ու սակաւի,
Փիչ ու բազումի
Մրցութեան համար ասպարէզ չկա՛յ,
Քանզի ճորատիպ այդ մաֆառմաճ մէջ
Այրուձիի տեղ մտերճ են կուում,
Թանաֆ է յեղուում արեան փոխարէն,
Եւ յաղթանակը կոչւում է մատեան...

Մենք կայինք, այո՛, Նրանից առաջ։
Սակայն Նա ծնեց,
Որ գայ ու դառնայ ինչ-որ ճոր Սկիզբ։

...Նրանից առաջ կային աստւածներ՝
Երկրպագի, սիրոյ, պտղաւորումի,
Ինչպէս փոթորկի, ճաեւ... դպրութեան։

Եթէ բոլորը՝ միևչեւ իսկ ստոյգ,
Վերջինըս սուտ էր, սուտ ստուգատես.
—Աստւած կար, սակայն դպրութիւն չկա՛ր։
Նա՝ հաւատաւորն իր ճոր հաւատի,
Դպրութեան մեր սուտ աստծուն վորպէդեց
Եւ ինքը մնաց ճրա փոխանակ։
Բայց միևչ դպրութեան հին աստւածը մեր
Շարունակ միայն մի գործ էր անում՝
Մարդկանց հոգին էր առնում ու տանում,
Սա եկաւ, որ մեզ հոգի՛ պարգեւի...

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Հզոր թէ տկար՝
Մարմին էինք մենք։

Սակայն Նա եկաւ, որ Հոգի՛ դառնայ,
Շօշափուո՛ղ հոգի,
Եւ աչմե՛ռ հոգի։

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.
Քիչ թէ շատ՝ կար հաց,
Եւ ունէինք ջուր։

Սակայն Նա ծնուեց, որ Սնո՛ւնդ դառնայ։

Ծնուե՛ց, որ ծնե՛նք,
Եկա՛ւ, որ լինե՛նք,
Եւ աչմահացա՛ւ,
Որ աչմահանա՛նք...

## ժ

Կիսւած էր արդէն հայրենիքը մեր,
Եւ յետոյ պիտի այդպէս էլ մնար.
Դարերով յեղյուծ մեր արիւնը սուրբ
Պիտի ապարդիւն կորչեր ու գնար։
Դեռ պիտի գայիք օրեր ահաւոր.
Մեր հողը պիտի մեզ կարօտելուց
Պատէր եղինջով ու փշով խայթիչ.
Իսկ մեր երկիրը՝
Մեր աչխից զրկւած,
Պիտի որ իրն էլ իր զուխից զրկւէր։
Յետոյ պիտի մեզ խաբէին այնպէ՛ս,

Որ հին խաբեբան՝
Նոր բիւզանդացին,
Զարմանար ինքը։
Յետոյ պիտի մեզ…

Միջահատւած էր մեր հողը բնիկ,
Ճեղքւած էր արդէն հայրենիքը մեր։

Եւ Նա չծնուեց ինչ-որ մի մօրից։
Նա հէնց այդ ճեղքից ծառացաւ յանկարծ,
Որ ճեղքը լցնի գէթ ինքն իրենով։
Եւ այդ ճեղքը Նա լց՛րեց ի՜նչպէս·
Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ Նա էր միայն, որ բերեց իրար
Ու միաւորեց… արդէն մեր մտքո՞ւմ։
Եւ այդ օրից վեր
Ու մինչեւ այսօր
Այդ միացումը մնում է անխախտ՝
Ընդդէմ ճչացող այն խախտումների,
Որ բախտն է անում սուսուփո՞ւս այնպէս,
Եւ անում անձայն մի քմծիծաղով,
Որի տակ պիտի ամօթն իր ծածկի,
Բայց իզո՞ւր·
Ծածկել չի՛ կարողանում,
Ինչպէս չի ծածկում ծածկոյթը խոտի
Ճահճի գոլորշին՝ քրտինքն ամօթի…

## ԺԱ

Չունէինք արդէն պետ ու պետութիւն·
Ծաղրանկար էր եղածը արդէն՝
Գծուած ձեռքերով երկու նկարչի,

Որ ատում էին իրար ոչ պակաս,
Քան թէ մենք իրենց։

Յետոյ մենք պիտի գաղութ դառնայինք՝
Գաղութի մարզպան – կառավարիչով։
Յետոյ մեզ պիտի դարեր շարունակ
Տանէին անվերջ անկումից-անկում,
Մեր մէջքի վրայ երկանք աղային
Եւ սիպէին, որ ժպտանք նաեւ։

Յետոյ մենք պիտի մեր շենից զրկուած՝
Քաղաք շինէինք աւերն ուրիշի։
Յետոյ մենք պիտի մեր հերկից զրկուած՝
Հերկէինք օսար կորդ ու առապար։
Յետոյ մենք պիտի մեր ոսնահետի
Դրօսմը դարձրած իւրովի դրօշ՝
Մխէինք բոլոր լայնքերի վրայ
Երկիր կոչեցեալ այն կլոր գնդի,
Որտեղ պիտի որ ամեն նանապարհ
Վերսին բերի իր տեղը նախկին,
Բայց մեզ... հայրենիք չբերե՞ց երբէք...

Չունէինք արդէն պետ ու պետութիւն.
Հայրենեաց գահը փլուածք էր տել։

Եւ նա չծնուեց ինչ-որ մի մօրից.
Նա այդ փլուածից բուսնեց սխրանքով,
Որ այդ փլուածքը ողջանայ նորից։
Եւ այդ փլուածքը իրօք ողջացաւ։
Այն, ինչ-որ անել չկարողացան
Արշակ—վաղարշակ,
Մուշեղ ու Մուշէ,

Սա՛ աւեց միայն՝ անզէն ու անզօրք.
Մեզանից խլուած մեր պետութեան տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղեա՜լ պետութիւն,
Թագաւորութիւն մի հզօրագոր՝
Ո՛չ թէ մեզանից խլուած հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենիս վրայ,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛,
Երբէ՜ք չխլուող հոգիների մէջ։

Եւ այնուհետեւ անվախճան եղաւ
Թագաւորական Նրա տունը մեծ.
Եւ մեր հոգեւոր թագաւորութեան
Գահին բարձրանող ամե՜ն թագաւոր
Ծնեց նո՛յն տնից,
Նո՛յն ցեղից սերեց
Եւ պատով-փառքով-վեհութեամբ կրեց
Նո՛յն տհմանունը՝
Մեսրոպ-Մաշտոցեա՜նք...

## ԺԲ

Այսպէ՛ս ծնեց Նա։
Բախտի հակառա՞կ,
Թէ՞ վայրկեանական նրա զղջումով,
Նա եկաւ, որ մեզ վերադարձրնի
Այն, ինչ խլել էր նոյն բախտը երէկ։

Առանց հաւատի հետս չէ մեռնելը,
Իսկ ապրելն... արդէն անկարելի է։

Եւ մեր կործանուած հին հաւատի տեղ
Մեզ ո՛ր հաւատով զինեց վերսին։
Էժան-ծախուի, անցնող — վատի տեղ
Բերեց չքերուող-անչինչ-հաւատին։
Սուտ ու կեղծիքի ծծակի տեղակ
Մեր մանկանց տուեց անցամաք ստին,
Որով եւ նրանք կրկնամայր եղան.
Ով օրով՝
Նրանք մեծացան տարով,
Ով տարով՝
Նրանք մեծացան դարով, —
Եւ բիրտութեան տեղ փուեց կրթութիւն,
Պարապմունքներով պարապը լցուեց,
Ու մեկ օր անգամ չորեքթաթ չարած
Մի արագոտըն կայտառ ներթութիւն
Ընդոստնեց մեկէն ու վազքի լծուեց։

Մեր փլատակած — փլուզածի տեղ
Նա ո՛ր կերտեց, ո՛ր կառուցեց.
Նաւաբեկածի ու սուզածի տեղ
Անտակ յատակից ո՛ր յարուցեց.
Արգելած երգի զարթ գոյնի տեղ
Խորունկի վրայ տրտումը հիներց.
Անմիս միտումով խանդած բոյնի տեղ
Հոգեբնակման մեր տունը շինեց.
Օտարի զենի ու զօրութեան դէմ
Նո՛ր հզօրութեամբ — ներութե՛ամբ զինեց՝
Զենքով մի նորոգ եւ սխանչելի,
Որի դէմ պիտի դառնայինն անզօր
Նետ ու եաթաղան,
Փող ու տանկեր,

Եւ որ մեր հոգու անբառ կանչերին
Պիտի որոտով միշտ արձագանքէր։

Դա զէնք էր արդեօք,
Թէ՞ լոյս էր, մի լո՛յս,
Որ օտար հողմից երբէք չհանգաւ,
Այլ քանի գնար՝ պիտի որ հանգէր
Անծուխ-զտաքոց անշէջ կրակի
Եւ տառապալից մեր օրերի մէջ
Լինէր կենարար զւարթ կիրակի։

Մեզ սպառնացող վտանգի չափ մեծ
Եւ այդ վտանգից նաեւ ահագին՝
Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնութիւնը կոփեց ու կռեց․
Օտար եկամուտ վարակի դիմաց
Մահ համտես արած մեր ամենիմաց
Առողջութիւնը որմի պէս դրեց․
Դրեց խարդախուած կաթի դէմ՝ մերան,
Քանակի դէմ՝ թեւ,
Թուի դէմ՝ թռիչք,
Արեան դէմ՝ թանաք,
Սրի դէմ՝ գրիչ,
Եւ դարանի դէմ՝ Մատենադարան…

Եւ մենք՝ Նրանով միշտ զինավառուած,
Միասին եղանք՝ գիր ու ցան արուած․
Անվերջ կրելով զարկեր ու հարուած,
Նոյնիսկ յաղթելով ժանտ քանակներից՝
Ժանտերից ժանտին յաղթեցինք կեանքում
Յաղթեցինք դաժան ժամանակներին․
Կանգուն առ կանգուն թաղելով հողում՝

Յառնեցիմք դարձեալ,
Մնացիմք կանգուն.
Անվերջ ընկնելով՝
Վերաթեւեցիմք.
Մեռնելով անվերջ՝
Գոյատեւեցիմք...
Եւ հիմա արդեն այդ մե՛զ չեն պեղում,
Այլ մենք եմք պեղում.
Այդ մե՛զ չեն յիշում,
Այլ մենք եմք յիշում.
Մե՛զ չեն վկայում,
Մենք եմք վկայում՝
Հասնելով ուրիշ ժամանակների,
Երբ մենք՝ տառապած միշտ բանականներից,
Հպարտ եմք արդեն մեր նոր որակով.
Մենք՝ բռնադատված արբանեակութեան,
Հպարտ եմք հիմա այն արբանեակով,
Որի ծիրի մէջ կայ եւ վազքը մեր.
Եւ հպարտ՝ նաեւ հրթիռով այն նոր,
Որի թիռի մէջ կայ հրաբխը մեր...

Այսպէ՛ս ապրեցիմք
Եւ այսե՛ղ հասանք։
Այսպէ՛ս շիթելով՝
Դարձանք գոռ հոսանք։
Մենք՝ հինը հնից,
Նորացա՞ք նորից
Եւ այս ամենը՝
Նրա՛ շնորհիւ...

## ԺԳ

Այսքանից յետոյ ի՞նչ կոչես նրան.
Մեր կեռմանաշատ երթուղու վրայ
Մի նշանացի՞ց,
Մի սի՞ւն,
Կամ թէ ձո՞ղ,
Ինչ-որ գրերի ինչ-որ ստեղծո՞ղ։

Ու եթէ պիտի գիր ու տառ յիշւի,
Ապա Նա ինքն է այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Անում է — հասնում խորհրդանշի,
Եւ...մարդը ձգւում ու դառնում է Մարդ,
Անցողիկ մարտը՝ յաւերժական Մարտ,
Խեղճ տքնութիւնը՝ զօրեղ Տքնութիւն,
Ինքնութիւնն անուժ՝ հուժկու Ինքնութիւն,
Պաշտողը՝ Պաշտող,
Իսկ հայը՝...Մաշտոց։

Մաշտո՛ց...
Այսինքն՝ Ա՛յր մի, որ եկաւ ապացուցելու,
Թէ մի տեղ վերջը դառնում է Սկիզբ։

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,
Թէ հրաշք չկա՛յ,
Այլ կայ լոկ կարի՛ք։

Այսինքն՝ Այր մի, որ ապացուցեց
Եւ կոչ է անում ապացուցելո՛ւ,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսւում,
Ուր վերջանում է ամե՛ն մի հնար...





Պ. Սեւակի իր ձեռքով մշակած պարտէզը



Գ. Սեւակի վիմագիր

# ԷՂԻՍՅԻ ԼՈՅՍ

# ՆՈՐՕՐԵԱՅ ԱՂՕՔՔ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՜տ եմ վախենում
Բիւրաւոր ու բո՛ւթ հաւատացեալից,
Բիւրատեսք ու սո՛ւս հաւատացեալից։
Երբ Աստւած էք՝
Փչեցէ՛ք ձրացց բոլոր մոմերը,
Մարեցէ՛ք ձրացց կանթեղներն ամեն,
Հանգցրէ՛ք ձրացց չահերն այլազան,
Որ... եղիցի լո՜յս։
Եւ ո՜չ մի գաւթում մի՛ ընդունեցէք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացւած է։
Մերժեցէք ձրացց զո՛հն էլ խոստացեալ,
Որ... զոհ չգնայ իմքը հաւատը՝
Մաֆո՜ւր-վսե՜մը,
Անկե՜ղծ-անսո՜ւտը։
Ու թէ Աստւած էք՝
Ամուր փակեցէք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղօթքի դիմաց՝
Անգի՜ր-իմքնահո՜ս-հատւածո՜ւած այն աղօթքների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՜զ։

Եւ — բաւակա՜ն է — հասկացէ՛ք ընդմիջս,
Որ Աստծուն ճո՛յնիսկ հայհոյողները
Շա՜տ աւելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է իմիք հաւատը՝
Խոցա՜ծ-արիւնո՛տ,
Այրո՜ղ-ապտակա՛ծ,
Ցաւա՜ծ-նչացո՛ղ,
Մանո՛ւկ հաւատը,
Որ հայր դառնալու համար է ծնել։
Ու եթէ հայր էք՝
Մի՛ թողէք,
Որ սուտ հաւատացեալներն սպանեն նրան։
— Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է աւելի...

## ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Առաւօս լուսո՜յ,
Առաւօս մի ջին՜ջ,
Ջի՜նջ, ինչպէս…ոչի՛նչ,
Ջի՛նջ, սակայն դեռ պա՜ղ։

Ու ես անյապաղ
Անջատում եմ ինձ
Աշխարհից ծանօթ
Ու պարպում եմ ինձ,
Դարձնում մի անօթ,
Որ լոկ դատարկ չէ,
Այլ նաեւ անօդ։
Եւ… ո՜ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնէ ի՛նձ, միայն ի՜նձ համար,
Որպէսզի նախ ե՛ս
Եւ հենց ի՛նձ վրայ
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթէ լինի այս անգամ սարքին՝
Նո՛ր միայն վստահ յանձնեմ ձե՛զ նաեւ,
Եւ ապրէք այնտեղ դուք մարդավայել։

Ես՝ պատրանազերծ,
Բայց եւ յուսազէն,
Այս դեռ անվաւեր ու նոր աշխարհում
Էլ չե՜մ զբաղւում ու չե՛մ զբաղւի
Ջեղածի վրայ եղածի թերին ի զո՜ւր ճնելով,
Երազի վրայ երեխայաբար անո՛ւրջ դնելով,
Կեղծւած դրամով կեղծ բան գնելով,
Ոչ էլ ճարահաս ու միտումնաւորէն
Մահանալու պէս անվերջ ճնելով։

Ես՝ զարթնած արդեն,
Բայց դեռ անլույս,
Հեղուկով մի կուց,
Որ պարգեւում է ծնհալն անխուսափ,
Նախ զովացնում եմ դեմքն իմ՝ հիւանդի՛,
Իսկ յետոյ՝ ամե՜ն տեսակ հիւանդի՛
Մա՞րդ լինի, երկի՞ր, թէ՞ հաւաս,—մե՜կ է։
Զովացնում նրանց ամենքի դեմքը՝
Իմ ամենաբուժ մատների հետքը
Անչինչ թողնելով սրա ու նրա
Դեռ գոց կոպերի,
Դեռ փակ շուրթերի,
Տակաւին ճնկոս երեսի վրայ։

Ու բոլորի՛դ մէջ,
Անխտիր բոլո՜ր-բոլո՜ր-բոլորի՜դ,
Ինչ-որ սիրելի մի բան եմ գտնում,
Սիրելու ինչ-որ արժանի մի բան,
Որ հաւանաբար
Ա՛յն ժամանակ է ստեղծել արդեն,
Երբ հին չորս ոտից երկուսը
Անդարձ
Մենք կորցրեցինք...

Եւ վեհ բարձունքից աններողութեան
Ես, խարի նման, վար եմ թաւալւում՝
Հասնելով փափուկ ա՛յն ստորոտին,
Որից իչ անդին
Ճահինն է ապրում
Իր յաւերժական ինքնամոռ կեանքով,
Եւ, խարի լեզուով, ասում եմ. «Այբ Բեն»,
Այսինքն՝ «Առեգակ»,
Կամ՝ «Եղիցի լոյս...

# ԼՈՅՍ ԶՒԱՐԹ

Լո՛յս, լո՛յս զւարթ...
Եւ ո՛չ թէ լոյս երեկոյի,
Ի մտանել արեգական,
Այլ լոյս զւարթ արդար գոյի՝
Շաղաոտքն առաւօտի...

... Ծնրադրեալ Բնութիւնն է ելնում ոտի.
Գիշերային ժամերգութիւնն է վերջանում,
Եւ Լուսաբացն է մօտենում դանդաղօրէն,
Իբրեւ հսկիչ մի Լուսարար՝
Մարելով ու հանգցնելով
Ամեն տեսակ լապտեր ու լամպ.
Եւ Արեգակն է բարձրանում
Քրմապետի վսեմութեամբ,
Եւ ծոյլ փռւած ստւերները մարմնամսեղ
Սկսում են կարծես իրենք իրենց մարսել՝
Մսաթափւում-նիհարում են,
Հետզհետէ դառնալով ձիգ
Ու սլացիկ՝
Պարուհու պէս մի թխամորթ.
Արշալոյսն է շարունակում ածել փողը իր ծիրանի,
Որի բոլոր նեղ ծակերից լայն շաղւում է
Ինքը Արդար Արեգակը,
Եւ հնչում է ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստւածների ծննդի հետ,
«Լո՛յս, լո՛յս զւարթ»...

Լո՛յս, լո՛յս զւարթ,
Լոյս զւա՛րթ ու գերազանցի՛կ,
Լոյս երգեցի՛կ ու նւագո՛ւն.
Դու՝ առաքեալ ամենօրեայ,

Որ բերում է միայն հաւաս,
Բայց ի դերեւ հանում-վանում
Եւ fօղածածկ-ծպտեալ յոյսեր։
Դու՝ սուրհանդակ, բայց եւ կաւաս,
Դու՝ հեռախոյզ, բայց եւ մասնիչ,
Բայց ամենից առաջ՝ միտս սէ՛ր
Եւ ամենից յետոյ՝ միտս սէ՛ր...

Լո՛յս, լո՛յս զարթ,
Անձրեւի պէս
Տեղա այնպէ՛ս,
Որ աշխարհում
Լոկ մի՛-միա՛կ ատեր մնայ,
Այն էլ միայն երկնի՛ վրայ՝
Լոկ անձրեւի՛ ատերը կոր՝
Ծիածա՛նը...

Լո՛յս, լո՛յս զարթ,
Այնպէ՛ս գործիր,
Որ նկարիչ fո մատներով
Վառնկներն իսկ, գունազարդուած,
Դառնան կարծես աֆաղաղներ
Ու վերերգեն իրատեսակ՝ ծուղրուղուով՝
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ
Որ հնչել է ատտուածների ծննդի հետ.
«Լո՛յս, լո՛յս զարթ»...

Լո՛յս, լո՛յս զարթ,
Շաղւի՛ր,
Մաղւի՛ր,
Թաղւիր այնպէ՛ս եւ այնքան խո՛ր,
Որ մենք չապրենք՝ ինչպէս ծուկը

Իր մշտամութ-անլուսամուս պետութեան մէջ,
Որ fո հմուս-ամենամուս շողերի տակ
Ծածկամիս չուրն անգամ դառնայ անկեղծ-յուսակ,
Եւ անաղմուկ fո զարկերից ու fո տաfից
Չթրծլուած ամեն երազ իսկոյն ճաfի
Ու վերերգի մինչեւ անգամ ա՛յդ ճաfոցով
Ա՛յն եղանակը պարզ ու բարդ,
Որ հնչել է աստւածների ծննդի հետ,
«Լո՛յս, լո՛յս զարթ»...

## ՄԻՈՏԱՆԻՆ

## ԴԻՄԱԿՆԵՐ

Մի ոտ չուցեմ,
Ուսի եւ ձեր երկուսի տեղ
Երեքս ուցեմ։
Երկու ոտով,
Ինչ դուք չուցէք եւ հետս կոչում էք «յենակներ»,
Ես մայթերս եմ կետադրում,
Որ մարդկայինս կեանքի վէպը դիւրիս կարդայ
Մայթագրեր ըմբերցելու ըմդունակը։
Իսկ երրորդով,
Որի համար ինձ կոչում են միոտանի,
Երրորդով էլ տնտեսում եմ տաս ծախսերըս՝
Ձեր զոյգի տեղ միշտ կենս կօշիկ պատւիրելով։

Չէ՞ք նախանձում...

## ԽԵՂԿԱՏԱԿԸ

—Որտե՞ղ են ապրում ֆամիլներ։
—Պալատների մէջ։
Եւ, աւտո՛ւս, մեր իսկ ռուճգերում։

—Որտե՞ղ է մեռնում լուութիւնը։
—Քարոզների մէջ։
Եւ բռնադատւած մեր իսկ ուղկերում։

—Որտե՞ղ է պահւած արիւնը. մեր տաճ։
—Մեր հին թշնամու եղուցգների տակ,
Մկրատի՜ կարոս կեռ եղուցգներում։

—Որտե՞ղ են մեռնում բոլոր կուռերը։
—Ծափ ու ծնծղայի ծանրութեան ներքոյ,
Նաեւ խուցկերում։

—Իսկ զօրանում է մեր խելքը որտե՞ղ։
—Ո՛չ գանգում,
Այլ մեր վերեռո՜ւմ։

—Իսկ որտե՞ղ է մեր փրկութիւնը։
—Մե՛ր,
Եւ, աւա՜ղ, ո՛չ մեր ձեռքերում...

# ԴԻՄԱԿԱՇԱՆԴԷՍԻ ԳԼԽԱԻՈՐԸ

Լսո՞ւմ էք ինձ։
Բաւակա՜ն է,
Հանեցէ՛ք ձեր դիմակները։
Հանեցէ՛ք,
Որ ֆամու ձեռքով
Ձեզ կարօտած օդն ապտակի
Ձեր իսկական դէմքը տխեղծ
Եւ տղա-տաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դէմքը խեղճ,
Որի ծանօթ նմանութեամբ են յօրինւած
(Մի՜մոռացէք) աստւածները (մի՛ մոռացէք)...

Ամաչեցէ՛ք աստւածներից
Եւ հանեցէ՛ք դիմակներդ,
Բաւակա՜ն է։

Ես չեմ կարող նշել ճշտւած թւականը
Եւ ժամանակը ճշգրիտ,
Բայց եւ այնպէս այս հանդէսը,
Որ սկսւել է տա՜տ վաղուց,
Աւարտի է հասնում արդէն...

Բարոյական այն պարապը,
Որ տաս վաղուց
Ամենքիս մէջ յօրանջում էր
Կարծես անչար եւ անվնաս,

Հիմա արդեն չարչարում է ու տանջում է՝
Վերածելով մի անհատնում գկրտոցի...
Եւ թոյն-փոշին ա՛յն խարտոցի,
Որ բանում է գիշեր ու զօր,
Բանում իմքինն եւ իմքնավար,
Նո՛յն թոյն-փոշին հետզհետէ
Ամե՜ն իմչի վրայ թառում,
Խառնըւում է ամե՜ն իմչի՝
Հացի՛,
Երգի՛,
Մտի՛,
Շնչի՜։
Եւ խարտւածմի հոտ կը փչի
Շուտով արդեն ամե՜ն իմչից՝
Հացի՛ց,
Երգի՛ց,
Մտի՛ց,
Շնչի՜ց...

Հանեցէ՛ք ձեր դիմակները,
Որ գէթ մի փիչ դիւրին շնչե՜լ կարողանամ...

Իմքնե՜րդ ասէ՛.
Բաւական չէ՞
Դուք ձեզանից ձեզ զողանամ
Եւ տեղն ուրիշ մէկին դնէ՛ք ձեր փոխանակ,
Բայց չափազանց ճշտապահ է արեգակը.
Ձեր արթնացումն այնժամ արդեն
Կը նմանուի մի պայթիւնի՜,
Մի պայթիւնի՛,
Ձե՜զ եմ ասում,

Որից յետոյ
Լռութիւնն ու Փոշին պիտի գօտեմարտեն
Չգոյութեան գահի համար...

Ինչ-որ բանի
Ինքը ափսոսում է սպասում,
Ինչպես մի օր, չիմանալով,
Սուսանինան էր մերկ սպասում... ծերուկներին...
Իսկ դուք եկէք, մի՛ սպասէք.
Հանեցէ՛ք ձեր դիմակները,
Ճանաչեցէ՛ք ինքներդ ձեզ
Վերջի՜ն անգամ,
Վերջի՜ց առաջ...

Պարն աւարտւել
Ու խաղն արդէն վերջանում է.
Հանեցէ՛ք ձեր դիմակները.
Ուշացումի ամե՜ն պահից
Իմ վիճակը
Ձեր փոխարէն լրջանում է,
Որովհետեւ ինձ է տրւած, դժբախտաբար,
Յիշեցնելու ձեզ վերսին ու վերջապէս,
Որ ուշացած արթնացումը
Կը նմանւի մի պայթիւնի՜,
Որից յետոյ
Լռութիւնն ու Փոշին պիտի գօտեմարտեն
Չգոյութեան գահի համար...

Դուք առայժմ դեռ լսում էք,
Ուստի նաեւ ի՛նձ լսեցէք
Ու հանեցէ՛ք դիմակներդ.

Աւդէն խաղը վերջացա՜ծ է...

Իսկ եթէ դեռ պիտի խաղաք,
Է՜հ, խաղացէ՛ք, խնդրե՜մ, ինչքան ուրտերդ ուզի,
Խաղ խաղացէք ինքներդդ ձեզ եւ իրար հետ,
Բայց... առանց ինձ։
Ես այլեւս չեմ մասնակցում
Ո՛չ թէ խաղին,
Այլ միշտ իսկ եւ մատաղի՜ն,
Թէ մորթողը
Մարդկայնութիւն-մարդկութիւն է...
Ու ես աւդէն ո՛չ բողոքում,
Ո՛չ ողոքում,
Ո՛չ էլ կոկորդս եմ կեղեքում։
Ինչի՞ համար
Կամ ո՞ւմ։
Հիմա
Ես չանում եմ լոկ... չլինե՛լ՝
Ամբողջովին դառնալ... դիմա՜կ։

## ԱՇԽԱՐՀ... ԱՇԽԱՐՀ... ԴԱՐԱԿԷՍԻ ՊԱՐԳԵՒՆԵՐ

Ո՛չ ու փո՜ւչ աշխարհ,
Որ չես յանձնում իմ տաք ձեռներին,
Որպէսզի փրչոտ մազերդ սանրեմ
Իմ ջերմ մատներով՝
Անմայր մնացած
Մինուճար որդուն սիրող հօ՛ր նման։

Սո՛ւտ ու փո՜ւտ աշխարհ,
Որ իմ մազերն ես հանգուցել ամուր
Ամեն մի ծառին ու ամեն խոտին,
Ամեն էակին մագիլ ու մատին,
Շօշափուկներին, բեղին ու թաթին,
Եւ իրար ձգում փոխադարձօրէն,
Ու ձգձգում ենք նորից ու նորէն,
Որ... ինքրդ ապրես համակցուած,
Իսկ ես էլ...
Իսկ դու
Ե՞րբ ես իմ մասին մի բերան հարցնում,
Ո՛չ ու փո՜ւչ աշխարհ,
Սո՛ւտ ու փո՜ւտ աշխարհ։

Իսկ չե՞ս վախենում, որ յանկարծ... մեռնեմ,
Ես վախենում եմ, շա՜տ եմ վախենում,
Բայց ո՛չ ինձ համար,
Այլ լոկ քե՜զ համար․
Իսկ եթէ յանկարծ իմ մահով խախտուի
Համակցուած այս վիճակը քո,
Ո՞նց պիտի լինես,
Ի՞նչ պիտի անես։
Տե՛ս, որ իմ մահով քեզ չկործանե՜ս,
Սո՛ւտ ու փո՜ւտ աշխարհ,
Փո՛ւչ ու ո՜չ աշխարհ...

# ՍԽԱԼ ԽՕՍՔ ՍԽԱԼԻ ՄԱՍԻՆ

«Ես ոչ ոքի չեմ դիմում,
բայց ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»:
Վ. ՍԱՐՈՅԵԱՆ

Գժւել է գարունը։
Եւ օդը գինով է։
Եւ լոյսի՛ց, լոկ լոյսի՞ց կարող է մայրացնալ,
Կարող է մայրացնալ... մինչեւ իսկ չբե՞ր։
Մինչդեռ ես կրում եմ ուժից վեր այս բեռը՝
Իմ գլխի՛ եւ ուրի՛ այս բեռը,
Որի տակ
Ինձածեւ մարմինըս fարւում եմ ութածեւ։

Քարւում եմ։
Չե՛մ խորհում։
Եւ դա իմ խորհելն է։
Չե՛մ լսում։
Չե՛մ ուզում ընդունել ո՞չ մի ծայն։
Բայց անվերջ լսւում է թե՛ իմ մէջ, թե՛ իմ շուրջ.
«Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»։

...Ինչ-որ բան սխալ է հէնց երկրի առանցքում,
Որ ուղի՛ղ չի անցնում, այլ ինչ-որ թեքութեա՞մբ։

Ինչ-որ բան սխալ է մինչեւ իսկ լոյսի՛ մէջ,
Որ պիտի՛ ունենար ծանրութիւն ու կշիռ։

Թէ կրնձն է սխալ՝ այդ վաղո՞ւց յայտնի է,
Բայց մի տեղ սխալ չէ՞ եւ հաւա՛տ կոչւածը.

Ինչ-որ բան սխալ է ճշմարտի մէջ անգամ.
Եւ ստոյգ կոչւածն է ստուգւել աղերսում։

Ինչ-որ բան սխալ է եւ արեա՛ն, արեա՜ն մէջ·
Ջհեղուէ՛ր, հեղուելիս ինչո՞ւ է մակարդում։

Թէ ձեռճն է գաւաթին երկարում յուսահատ՝
Սխալ է եւ գինի՜ն·
Ջի՛ խցւում կոկորդում։

Սխալ են ջրե՛րն էլ·
Հոսում են վերից վա՛ր,
Վերից վա՜ր,
Վերից վա՜ր՝
Անընդհատ անկում է։

Կօշկատակն է սխալ·
Հողից է մեզ կտրում։

Սխալ է եւ հողը·
Առնչում-ծախւում է։

Սխալ է կրակն էլ·
Ինչի՞ս է մխալը։

Լռութիւնն է սխալ·
Մեր թեւերն է փետրում։
Իսկ անկե՜ղծ խօսելը··· սխալ ու սխա՜լ է։

Իսկ ի՞նչն է տարբերում եւ ի՞նչն է անջատում
Փակուղի աւտածից հորիզոն կոչւածը,
Եթէ սա՝ ոտերդ, նա աչերդ է հատում։

Սխալ է չարդելը,
Բայց չէ՞ որ դրանից
Երկրաչափն է կարծեմ օգտւում արտաճում·

Ձեւե՛րն են բազմանում այդ ջարդում-փշրումից։

Սխալ կայ թերեւս եւ նրա՛նց արարքում,
Որ անկեղծ ձգտում են շտկելու սխալը
Եւ ամեն մի սխալ շտկելիս, ակամայ,
Գործում են նո՛ր սխալ·
Սխալ է ձգտո՛ւմը։

Ինչ-որ բան ու լո՛ւրջ բան, անկասկա՛ծ, սխալ է
Եւ մարդուս մարմնի՛ մէջ·
Մի գլխով ի՞նչ անել,
Երբ այսքա՛ն դժուար է անսխալ ապրելը…

Յետոյ ի՞նչ դուրս եկաւ·
Սխալ է ատե՛լը,
Այրւե՛լը,
Մխա՛լը։

Սխալ է, անկասկա՛ծ, եւ այսպէս դատելը,
Ուստի եւ այս երգը…սխալի՛ց սխալ է…

## ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ

Դու՝ 20րդ եւ, անտարակոյս, յոբելեանական,
Դու՝ հիւլէական,
Կարծես էական
Եւ աւելի քան կարծես բանական
Բայց նաեւ ցոյնքան խելագար դարի
Ո՛վ քաղաքացիդ անզօր ու հզօր,
Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան անդարման ցաւով,
Որ բողբոջում է բջիջներիդ մէջ,
Ծաղկում է անգամ fn զոյգ բիբերում,
Նետարերդ է խեղդում ճիւղերով իր պիրկ
Եւ իր թունաւոր սաղարթն է բերում
Խառնելու գլխիդ մազերին անգամ։

Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան ահարկո՛ւ ցաւով…

Եւ ինչպէ՞ս ապրես միայն անցեալով,
Եթէ ներկադ էլ
Արդէն չի ծախսւում այլ բանի վրայ,
Քան վաղւայ մասին պարապ խորհելու…
Ի՞նչ է սպասւում այս մոլորակին,—
Ի՞նչ պատասխանես։
Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,—
Ինչպէ՞ս իմանաս։
Ի՞նչ է բուսնելու այս թւաւոր հողին։
Եւ ի՞նչ լեզւով են խօսելու այստեղ…
Կրակն ես բնկնել մտքերի ձեռքից։
Ազատո՛ւմ չկայ։ Եւ պրծո՛ւմ չկայ։
Կայ մի վիթխարի՛ անորոշութիւն,
Որ տորիչելեան դատարկութեան պէս

Երբեք չի՛ լցում։

Կայ մի անսահման՝ անուրջություն,
Որ սողոսկում է՝ օդի պես՝ այնտեղ,
Ուր կայ ծակոտիք։

Կայ մի ուրուա՛լ անուրջություն,
Կրկնակաղապար՝ ընկոյզի՛ նման։
Եւ ինչպե՞ս ապրել
Թունոս ու կարծր կաղապարների
Անեռունչ արանքում,
Էլ ինչպե՞ս ապրել…

Աղն էլ է ծանօթ արցունքոտելուն
Ու կուրանալուն՝
Խոնաւութիւնի՛ց,
Ինչպես որ մարդը՝ անուրջութեան
Ովկիանին անափ։
Իսկ ո՞ւր է ցամաքն ու չորութիւնը…

Ցեմենտ կոչուածը
Կարգին շնչում է միայն ջրի՛ մէջ.
Մինչդեռ այդ խեղճը շնչահեղձւում է
Հենց ի՛ր իսկ փոշով,
Ինչպես որ մարդը՝ անուրջութեամբ։
Իսկ ո՞ւր է ջուրը…

Արեւի շողերն ուզում են մտնել
Նաեւ եղնջի թփուտի մէջ թաւ,
Բայց, դաղդուելով, բեկւում են կողքի։
Թող ցոյց տան նոյնիսկ եղնջի՛ թփուտ,
Որ չի ստերւում անուրջութեամբ,

Եւ բնակավայր դու կը դարձընես
Այդ եղջո՜ւյրը...

Թէ ծառ լինեիր՝
Դու կ'արտասուեիր սեպհական խեժով
Եւ fո կեղեւով fեզ շրջափակած՝
Քեզ կը բուժեիր։
Բայց fո արցունքը
Քեզ կրծոտում է... սնդիկի՜ նման,
Եւ այս աշխարհի ցաւերի դիմաց
Դու կեղեւահան ծառ ես մարդածեւ,
Եւ կեղեւահան այդ ծառի վրայ մնում են հիմա
Քիչ թէ շատ առողջ այս fո աչքե՛րը՝
լեցո՜ւն-լեփ-լեցո՛ւն անորոշութեամբ...

Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան ոխերի՜մ ցաւով,
Որ մահդ է տենչում։
Բայց մահ էլ չունես.
Կարգին մեռնելու համար էլ
Պիտի մարդ բախտ ունենայ...

Եւ զուր մի՛ հարցրու. «Ուրեմն ի՞նչ անել»։
Այդ պատասխանը fեզ ե՛ս չեմ տալու։
Ինձնմանները եկել են աշխարհ
Եւ այսուհետեւ աշխարհ են գալու,
Որ իրենց կեանքով ցոյց տան ինչ չանե՜լ։
Այսքա՛նը միայն։
Իսկ մնացածի համար դիմեցեք
Դուք դարձեա՛լ ցաւին,
Անորոշութեան անորո՜շ ցաւին...



ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՁԱՆԱՖՋԻ ԳԻՒՂՈՒՄ — ՆԿԱՐ՝ 1980 Թ.

—Բա՛րեւ,—

Մէկ հատիկ այս բառն եմ ասում՝
Կնճռած անձնագիր ցոյց տալու նման,
Կենսագրութիւն պատմելու նման,
Կամ հարցաթերթիկ լրացնելու պէս։

Եւ կ'ուզենայի՛,
Շա՜տ կ'ուզենայի,
Որ այս բառն իրօք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենի՛ համար։

Եւ կ'ուզենայի՛,
Շա՜տ կ'ուզենայի,
Որ նմանապէս այս բառը լիներ
Նոր եւ իրական մի «Բացի՛ր, Սեզա՜մ»։

—Բա՛րեւ,—

Ասէիր գնացքին,
Նաւին
Կամ օդանաւին,
Ու ներս մտնէիր.
«Բարեւ»-ըդ իբրեւ տոմսակ ընդունէր։

—Բա՛րեւ,—

Ասէիր կնոջն անծանօթ,
Ու նա ինչ սիրէր հենց ո՛չն վայրկեանին

Կամ ներումնահայց ժպիտով ասէր,
Թէ բարեւե՞լ են ինձանից առաջ։

—Բա՛րեւ,—

Ասէիր, եւ պարզ երկինքը
Իսկո՛յն աւծրեւէր, երբ պէտք է դա։

—Բա՛րեւ,—

Ասէիր լռակեաց հողին,
Եւ նա ծլարկէր ու հասկաւորւէր։

—Բա՛րեւ,—

Ասէիր մահի՛ն էլ անգամ,
Եւ նա հասկանար, որ ինձ մօս գալով՝
Իրեն ըտապե՛լ,
Շա՛տ է ըտապել…

—Բա՛րեւը Դառնար իրական ու նոր մի… «Բացի՛ր,
Սեզա՛մ»,

Եւ այն ժամանակ երբ արջին էլ ասէիր

— Բա՛րեւ,—

Նա էլ մի գուցէ հէնց նոյն վայրկեանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
Եւ մի այնպիսի՛ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լաւում է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում։
Այսպէս էլ՝ օձը ծերերի ձեռքին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար պահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի,

Եւ փոթորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մա՛րդ իրօք…

Անկարելի բան աշխարհում չկա՛յ,
Եթէ աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բնաւում դարձել է

—Բա՛ռեւ.

Ուրեմն՝ անձնագիր ցոյց տալու ճամա՛ն,
Կենսագրութիւն պատմելու ճամա՛ն
Կամ հարցաթերթիկ լրացնելու պէս՝

—Բա՛ռեւ,—

Քե՛զ
Ու
Ջե՛զ,
Ծանօ՛թ-անծանօ՛թ իմ սիրելիներ։

Թո՛ղ անկարելին դառնայ կարելի
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենի՛ս համար,
Դառնայ կարելի վաղն ու հէնց հիմա,
Դառնայ կարելի մէ՛կ բառով՝

—Բա՛ռեւ…

Պարտեզը եւ այն բահը, որով աշխատում էր բանաստեղծը

## Սեր

1.

Ես գալիս եմ Սեր էլ մատներով աչքերս
գոցած,
բնազդս ինձ տանում է դեպի նա:

– Լսիր ես:

Ձայներով մարդկանց, ամենուրեք մարդկանց
Շաղ են ընկնում,
խլում գալարում-գալարում, [redacted] ցնծում-ցնծում:

– Լսում ես:

Բոլոր վիրավոր մարդիկ մոտ են գալիս
Ձայներին գնում [redacted]
սրտերի խոցն իրենց վիրակապելու,
խոցից անչափ արյուն են հոսում իրենց.

– Լսում ես..

Մի էջ բանաստեղծի ձեռագրերից

## ՍԷՐԸ ՆՈՐԻՑ ՉԵ՛Ն ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ

1.

Նա գալիս է մի՛շտ էլ ճամբաներով անյա՛յտ—
չհարեզագրված,
Ինչպես չուրն անծրեւի կամ հալոցքի։

—Սերն է։

Հոլանդացիք ծովի՛ց, ամենազո՛ր ծովից
Հող են յափշտակում,
Խլում պատա՛ռ-պատա՛ռ, ճեխա՛ր-ճեխա՛ր։

—Սերն է։

Երբ վիթխարի ճաւը մօտենում է դանդաղ
Նաւարկելի գետի ցածր կամուրջներին,
Սրանք թեւերն իրենց վեր են տնկում,
Իսկոյն անծանօթ են լինում կարծես։

—Սերն է...

2.

Հետդ զրուցողին պատասխան ես տալիս՝
Խելօք, կարգին-սարքին մեքենայի ճման,
Մինչդեռ մտովդ, անվե՛րջ, նրա՛ հետ ես խօսում,
Ով հեռու է եզնից.
Լոկ անուանն է եզ մօտ,
Իբրեւ մի անծանագիր, որ... չի կնքուած։

—Սերն է։

Քաներակիդ զարկը կաթոցքի է ճման,

Ա՛յն կաթոցքի, որ (ճիշդ) քար է ծակում։
Անքնութիւնն անվերջ հիւսում է ցանց մի խիտ,
Որով ձո՛ւկ չեն որսում,
Խեղդում են մա՞րդ։

—Սէրն է։

Քնքշացել ես այնքա՞ն
Ու խոցելի՝ դարձել,
Կարծես թէ ապրում ես առանց մաշկի։

—Սէրն է։

Երկու աչքեր, անվե՞րջ, հետապնդում են քեզ,
Երկու աչքեր, ասես մի զոյգ դրոշմ,
Իրենց անջնջելի տիպն են դնում
Կեանքի՛դ. խմած ջրի՛դ, ողջ աշխարհի՛
Եւ մինչեւ իսկ արեան գնդիկների՛դ վրայ,—
Երկու աչքեր՝
Դրո՛շմ,
Կնի՛ք,
Խարա՞ն...

—Սէրն է ...

## ՀՊԱՏԱԿԻ ԽՈՒՎՈՒՔԻՆԸ

Ասում են, թէ մի բան կայ լոկ,
Որ անձնապէս ու մեն-մենակ են սովորում՝
Գիտութիւնը տառապանքի...

Ու կսկիծն է տիրակալի հովեր առնում։

Ա՜խ, տէ՛ր Կսկիծ, հարկաւոր չէ՜,
Բաւական է, տէ՛ր, ողորմեա՜ ։
Այս դժւարին գիտութեան մէջ
Համոզել եմ ես շա՜տ վաղուց,

Ու չլինէր թէ ինձնածին բարութիւնը,
Կարող էի ի՜նչս դառնալ
Ուսուցչապետն ա՛յն գիտութեան,
Որ անձնապէս ու մեն-մենակ են սովորում։
Ա՜խ, տէ՛ր Կսկիծ,
Այսմանն արդեն բաւակա՜ն է,
Է՛լ աւելին հարկաւոր չէ՜, տէ՜ր, ողորմեա՜ ...
Ջե՜մ ուրանում.
Ես fո նախկին ու մշտական հպատակն եմ։
Ուրեմն այլեւս ինչի՞ համար
Այժը փորձել հպատակի հլու մէջից։
Ինչի համա՜ր, տէ՛ր, ողորմեա՜ ...
Եւ չափազանց զգո՜յշ եմ ես,
Նոյնիսկ վախկո՛տ.
Անջատումից եմ վախենում,
Երկիւղում եմ տւայտանքից չվտարուող,
Կարօտի սեւ արիւնումից եմ սարսափում...
Ա՜խ, տէ՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենազօր
Մի պահ անսա հեզ ու հլու հպատակդ.

—Դժուա՜ր բան է մարդ լինելը,
Դժուար է, տե՛ր։
Ամբողջ կեանքում
Ես եղել եմ ազնիւ, ինչպէս... խաղալիքը։
Ուրեմն ի՞նձ էլ պէտք է չարդել
Խաղալիքի նման։ Ինչո՞ւ։
Հարկաւոր չէ՜, տե՛ր, ողորմեա՜...

Ջէ՞ որ նոյնիսկ աւերուելուց յետոյ
Վանքը վանք է կոչւում
Եւ կամուրջը՝ կամուրջ կրկին։
Ուրեմն ինչո՞ւ զուր ուժ փորձել։
Ջէ՞ որ, տե՛ր իմ, փորձը մէկի
Միւսի համար շատ յաճախ է փորձանք դառնում։
Հարկաւոր չէ՜, տե՜ր, ողորմեա՜...

Կրկի՞ն ասեմ,
Որ չափազա՜նց զգոյշ եմ ես,
Նոյնիսկ վախկո՜տ։
Վախենում եմ
Մինչեւ անգամ... հայելու մէջ ինձ նայելուց.
Կարեկցանքից վատթար բան է միշտ յարուցում
Իմ... ժպիտը։
Ա՜խ, տ՛էր կսկիծ,
Քո բարձունքից ամենազօր
Մի պահ անցա հեզ ու հլու հպատակիդ.
—Անցանների՜-ահե՛ղ բան է,
Երբ խղճում է մարդ ինքն իրեն։
Առաւել քան բաւական է հէնց այսքանը,
Իսկ աւելին հարկաւոր չէ՜,
Տե՛ր, ողորմեա՜...
. . . . . .

Երբ կսկիծն է դառնում արդեն անտանելի.
Ասում ենք, թէ մօտենում է նրա վերջը:
Չո՛ւր ենք ասում։
Սո՛ւտ ենք ասում։
Ձի՞շդ կ'ասէինք,
Եթէ իրո՛ք մենք անձնապէս
Ու մեն-մենակ սովորէինք
Գիտութիւնը տառապանքի։
Բայց մենք, կարծեմ, միասի՛ն ենք այդ սովորում
Մի վիթխարի լսարանում,
Որտեղ...սէրն է դասախօսում... մնջախաղով՝
Խուլ-համրերի համար կարծես։

Եւ չի՞ օգնի «տէր-ողորմեա»ն։
Մնում է, որ դու ի՛նձ սիրես,
Ես ի՛ն սիրեմ,
Մենք թէ՛ իրար, թէ՛ մեզ սիրենք՝
Ընդդէմ այս խուլ տառապանքի,
Կոյր կսկիծի,
Համբր ցաւի.
Սիրենք իրար... յաւիտենից յաւիտեա՜նքս,
Եւ թող նոյնիսկ չգտնի գոնէ մէ՛կը,
Որ բարութեամբ «ամէ՜ն» ասի։

Ո՛չ «ողորմեա»,
Ո՛չ էլ «ամէն»։
Բաւակա՜ն է։
Հարկաւո՛ր չի...

## ԴՈՒ ՄԻ ՀԱՐՑՐՈՒ

Դու մի՛ հարցրու. «Սիրո՞ւմ ես ինձ»։

Ինչպես կոյրը իր ձեռնափայտն է միշտ յիշում,
Դու էլ յիշի՛ր,
Որ երբ ի զուր հարց չեն տալիս՝
Սուտ պատասխան չե՞ն սպասում։
Եւ դու բնաւ իմ այս խօսքից մի՛ վշտանայ
Այլ մտածիր,
Թէ ջրհորի մութ խորութեան չափման համար
Իր սեպհական մանկանն ո՞վ է ջրհոր նետում։

Դու մի՛ հարցրու, իսկ ես ասեմ
Քո ուզածից շա՜տ աւելին։

Եւ ասում եմ ե՛ս՝ միօրեա՛յ հաւատացեալ,
Իսկ դու լսի՛ր, իմ ցորօրեա՛յ աստւածուհի։
Պաշտամունքի մի ծէ՜ս պիտի արւի այսօր,
Խոստովանքը էլ ո՞ւմ է պէտք։

Դու՝ անծանօթ մի ցոր աշխարհի,
Ես՝ մի հմուտ աշխարհագէտ,
Որ վա՛տ գիտեմ, շա՜տ վատ գիտեմ
Բազմախոսում տեղացիը fո։
Ու խօսում է մէջս կրկին
Մոլի ոգին հետազօտման.
Ուզում եմ fեզ անգիր անել,
Մտովd գծել fարտեզը fո,—
Հարց ու փորձը էլ ո՞ւմ է պէտք։
Եւ առաւել լաւ չէ՞ արդեօք,
Որ մարդու ո՜տքը սայթաքի,
Քան թէ լեզո՛ւն։
Ուրեմն արի ոչ թէ խօսենք,

Այլ մտովին քայլենք առաջ
Այս անծանօթ ճանապարհով,
Մինչեւ հասնենք հանգրւանի՝
Հեքիաթական ինչ-որ մի տեղ,
Ուր չկա՜յ տէր ու տիրական՝ մեզնից բացի,
Ուր մենք պիտի լինենք թըւաս՝ ջրի՛ նման,
Եւ լինենք կոյր՝ կրակի՛ պէս,
Ուր՝ հակառակ մեր իմացած հին օրէնքի՝
Մարմինները ջերմութիւնից չե՛ն լայնանում,
Այլ կծկըւո՜ւմ,
Եւ լուծւում են բոլոր հարցերն՝ աղի՛ նման,
Դառնալով համ մեր բերանում,
Մեր լարաքափ ջղերի մէջ,
Շփոթահար մեր դէմքերին…

Այնժամ գուցէ բնազդաբար ե՛ս քեզ հարցնեմ.
«Սիրո՞ւմ ես ինձ»։
Ե՛ս քեզ հարցնեմ՝
Պատասխանիդ չսպասելով,
Այլ օգնելով, որ ստանաս
Նախկին տեսքդ աստւածուհու,
Նախկին տեսքդ ա՛յն աշխարհի։
Որ դեռ չունէր գծւած քարտէզ։
Եւ իմ հարցին ի պատասխան
Այնժամ գուցէ ինքդ ինձ ասես.
«Ասում են, թէ դուք օգնում էք լոկ հանւելիս։
Իսկ դու օգնում ես հագնըւել։
Դու ուրի՛շ ես։
Սիրո՜ւմ եմ քեզ»…

## ՍԻՐՈՅ ՓՈԽԱՐԷՆ

Դու մի՛ լինիր այսման բարի,
Բարութեանըդ
Ես կարող եմ լոկ մէ՛կ բանով փոխհատուցել՝
Իմ անարժէ՜ք շփոթութեամբ
Եւ թերեւս ա՛յն թախիծով,
Որ տարօրեն շատ է նման
Անվերջ մեռնող ու յարութիւն անվերջ առնող
Հին դիցերին...

Չէի՞ ուզի,
Շա՜տ կ'ուզէի
Առաջւայ պէս հրնւել գեղջուկ այս կանաչով,
Որ հիմա fո
Չապանակող կողի տակ է զապանակում,
Եւ բարբարոս երգը լսել այն առւակի,
Որ հիմա fո
Մերկ ոտների կաղապարն է ուզում հանել։

Չէի՞ ուզի,
Շա՜տ կ'ուզէի
Մէ՛կ անգամ էլ
Չճանաչել ո՜չ մի արգելք ու խոչընդոտ,
Դանդա՜ղ գնալ-շա՛պ հասնել
Մեր մարդկային հայրենիքը սկզբնական,
Այսինքը՝ իմ ափով ապրել fո ափի մէջ,
Ինձ կապել ու շաղկապել fեզ
Այնպէ՛ս
Որ մենք երկուսովքս մէկտեղ դառնանք
Անմահական՝ խաչքարի՝ պէս,
Չէի՞ ուզի,
Շա՜տ կ'ուզէի։

Բայց, սիրելի՛ս, չի յոգնում նա՛
Ով գնում է շատ հեռաւո՛ր հանդիպումի։
Իսկ ես հիմա
Զբօսնում եմ միայն ի՛մ իսկ արւարձանում
Եւ զբօսնում
Ձեռքերովըս փորագրած մակնիշները ընթերցելով,
Ու քերծելով շատ աւելորդ գրութիւններ,
Ու քերծելով առանց մուրճի եւ տաշիչի՝
Եղունգներո՛վ իմ սեպհական…
Եւ ի զո՛ւր ես քո բարութեամբ,
Քո այս ծածուկ-յայտնի սիրով
Ջանում ապրել իմ կալուածքի մի անկիւնում։
Ու ես հիմա
Այս ասում եմ ո՛չ լսելու համար արդէն,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման,
Ո՛չ էլ իմ իսկ արդարացման։
Եթէ կ'ուզես ճիշտն իմանալ՝
Ասելիս էլ բա՛ն չեմ ասում, ամենեւի՛ն,
Այլ պարզապէս զբաղմունքս եմ շարունակում՝
Իմ սեպհական կալուածքի մէջ
Յոգնածօրէն զբօսնելով,
Ե՛ւըս մի նոր
Գրութիւն եմ աւելացնում ջնջածիս տեղ.
«Չի յոգնում նա՛,
Ով գնում է շատ հեռաւո՛ր հանդիպումի»։

Իսկ դու… իսկ դու շա՛տ ես մօտիկ։
Ու ես… ու ես շա՛տ եմ յոգնած…

## ՏԱՔՍԻՆԵՐԻ ՀԱՆԳՐԻԱՆՈՒՄ

Երբ լուսաբացն է լրտեսում ապակիները մեր խաւար,
Ու կիսամութն է խուզարկում անկիւնները մեր տների,
Դու երեւի արթնանում ես՝
Արեւի հետ։

Մէգն է մեկնում արձակուրդի։
Հաւաքաբար համու ձեռքով
Աւելւում է գիշերայինն երազների կտորտանքը։
Ժամանում է օրը՝ իբրեւ վերաքննիչ։
Տարագրուած տագնապներն են վերադառնում
Ու ծեծում են արդարութեան փակ դռները…

Իսկ դու ձեր փակ դրան ետեւ
Ի՞նչ իմանաս ի՞նչ ես անում։
Դու երեւի նախ եւ առաջ լուացւում ես,
Որ… թարմանայ ողջ աշխարհը…
Յետոյ մազերդ ես յարդարում, հաւանաբար,
Որ շփումից քո մազերի ու քո սանրի
Առաջանայ ելեկտրական հոսանք մի մեղմ
Եւ դրանից… բոլոր մարդիկ զգան սարսուռ
Ու հանելի փշաքաղուեն ամբողջ մաշկով…
Յետոյ գուցէ սուրճ ես խմում,
Քո աչքերի՛ գոյնն ունեցող
Ու ճո՛յնքան էլ այրող-տաք սուրճ,
Որ… աշխարհի երակներով անվերջ շրջի
Հոտը սրճի…
Յետոյ արդէն փոխում ես դու զգեստը քո
Ու դուրս ելնում,
Որ… երբ անցնի ամբողջ մի դար,
Դարավերջին
Ինձ հանդիպես տախտակների հանգրուանում

Եւ աչքերիդ անմե՛ղ-անմե՛ղ մեղմեղանքով
Ուշանալուդ համար, շիկնա՛ծ, չքմեղանաս՝
Շշնջալով «չնեղանա՛ս»։

Չե՛մ նեղանում։
Քշի՛ր, վարո՛րդ։
Ո՞ւր։
Չգիտե՛մ։
Քշի՛ր, վարո՛րդ։
Արեգակը՝
Շնիկի՞ պես, թե՞ բալիկի,
Տնից եկել եւ ինչ-որ տեղ մոլորուել է։
Գնանք գտնենք ու ետ բերենք։
Քշի՛ր, վարո՛րդ…

Ապրելու կէսն էլ պատուով մեռնելն է:
Ա՛խ, երանի՜ թէ ես այնպէ՛ս մեռնեմ,
Որ դու... ինձ ազատ:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Այն օրն են միայն բանաստեղծ դառնում,
Երբ հասկանում են,
Յանկարծ ըմբռնում,
Որ իրենց գործը այն շիշն է միայն,
Որ ծով է նետում նաւորդը մեռնող՝
Փրկութիւն հայցող տողով մի խանի,
Եւ ժամանակի ծովը խմահան
Շիշն այդ երբեւէ ծովափ կը հանի՞...

# ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Բոլորի պես՝
Նրանք նոյնպես
Անկարող են ապրել առանց թթուածընի:
Սակայն նրանք
Ամեն վայրկեան նա՛խ այրում են անթթուածին,
Յետո՛յ միայն հրդեհւում են՝ քարածխի պես։

Նրանց լացը չի կտրում
Ամե՛ն տեսակ քաղցրաւենիք ստանալով։
Թէ լալիս են՝
Ընդերկրեայ անցուղո՛ւ պես։

Նրանք նաեւ ծիծաղում են,
Ու ծիծաղը
Զրնգում է մաքրահնչուն դրամի՛ պես,
Եւ դրանից աշխարհն իսկ է հարստանում.
Բայց ո՛չ իրենք։

Թէ քրտնում են՝ ո՛չ ամօթից,
Այլ միմիայն... ապակո՛ւ պես՝
Իրենց ներսի՛ տաքութիւնից,
Երբ որ... սաստիկ ցուրտ է դրսո՛ւմ։

Ու թէ նրանք սուտ են ասում,
Ապա՝ շա՛տ-շա՛տ՝ որսորդի՛ պես,
Ո՛չ աւելի։

Իսկ թէ ուրիշ կերպ են ասում՝
Այդ իրե՛նք չեն,
Այլ ծպտըւած ճարպըկորդիք,
Որ գործում են միայն նրանց անձնագրով։

Բոլորի պես՝
Նրանք ճոյճպէս
Անկարող են ապրել առանց հաց ու ջրի,
Սակայն նրանք
Չեն էլ կարող ապրել մի՛այն հաց ու ջրով…

Անկեղծ ասած՝
Նրանց, իրօք, չնախանձել չի՛ կարելի,
Բայց լինում են եւ այնպիսի՛ ժամանակներ,
Երբ որ նրանց… պէտք է խղճա՛լ։

# ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԲԱԽՏԸ

Թէկուզ եւ ձեռքդ գրչից էլ զրկեն,
Դու, միեւնո՛յնն է, պիտի՛ nr երգես։
Թո՛ղ չտան ոչ մի լիազորութիւն,
Դու, մէ՛կ է, սուտը պիտի՛ nr հերքես։

Քեզ կոյր են կոչում,
Բայց տեսնում ես այն,
Ինչ nr շատերը չե՛ն կարող տեսնել։
Քեզ կաղ են կարծում,
Բայց այնտե՛ղ ես դու,
Ուր ճրագիդ երբե՛ք չեն կարող հասնել։

Բախտի ճամբէքը տարբեր են լինում,
Նա ամեն մէկին տարբեր է սիրում
(Շատ անգամ նոյնիսկ ատելութիւնը
Շուտ տւած սիրոյ պատկեր է կրում)։

Յաչողութիւնը թո՛ղ երես թեքի,
Յաջողութիւնը թո՛ղ ճեզնից տայ խոյս...
Թո՛ղ ճրագիդ լինեն յաչող nրսի շուն,
Իսկ դու կը մնաս ճախորդ հետախո՛յզ։

Թո՛ղ ճրագիդ լինեն յայնսի թարգմանիչ,
Իսկ դու ուզում ես մնալ վերծանո՛ղ։
Թո՛ղ ճրագիդ լինեն անցաւ մանկաբարձ,
Իսկ դու մնում ես կարեվէր ծնո՛ղ։

Թո՛ղ ճրագիդ լինեն դարի մուննետիկ,
Իսկ դու մնում ես դարի գաղտնարա՛ճ,

Նրանք՝ թեկուզ եւ ծառայեցրնող,
Դո՛ւ՝ ժողովրդի իսկական ծառա՞ն...

...Բախտի ճամբեէը տարբեր են լինում,
Բախտն ամեն մեկին սիրում է տարբեր։
Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած,
Իսկ դու՝ որ ճեզնով երբեւէ հարբեն...

## ԵՐԵՍ ՈՒ ԱՍՏԱՌ

Ուռենիները ձրա՛ համար են,
Որպեսզի... ցոյց տան չրին ճանապարհ։

Եւ ծուխը, ճո՛յնպես, ձրա՛ համար է,
Որպեսզի... ցոյց տայ ուղղութիւն քամուն։

Ծղրիդներն, աճո՛ւռս, ձրա՛ համար են,
Որպեսզի... մամլեն մութն իրիկնայիս
Իրենց ձւագի ճո՛յն ծայնաճիտով։

Եւ արտոյտները ձրա՛ համար են,
Որպեսզի... իրենց երգով չորացնեն
Շաղն ու եղեամը վաղ առաւօտայ։

Իսկ ուր աշունն էլ ձրա՛ համար է,
Որպեսզի...
...Դանդաղ-դանդաղ լայնացնի տարածութի՛ւնը՝
Տերեւաթափո՛վ...

Բանաստեղծնե՞րը։
Նրա համար չե՞ն,
Որպեսզի... այսպէ՛ս
Ամե՛ն բան շրջեն աստառի վրայ...

## ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏ

Ճառագայթային այս ախտը բնաւ ևո՞ր չէ, բարեկա՛մ.
Նա ևորածի՛ն չէ,
Այլ առևւազըև ութ հազար եւ ութ հարիւր տարեկան։

Այդ ախտով էին տակաւին հիւանդ
Հին հելլենացիք, հնդիկներ հին։
Եւ Հոմերոսի կուրութիւնն իրօք այդ ախտից էր հէնց։
Եւ այդ նոյն ախտով գերեզման իջան
Ջե՛ր Նարեկացին, Շեքսպիրը մե՛ր,
Ու բոլո՛ր նրանք, ովքեր թոք ունեն՝
Մեր մոլորակի կիսագնդերի մեծութեան չափով
Կամ այնքա՛ն մեծ սիրտ,
Որ գրաւում է տեղն էլ թոքերի...

Այս ախտով մարդիկ չե՛ն վարակւում, չէ՞,
Այլ վարակած են ծնւում մայրերից։

Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,
Ովքեր եօթ հազար եօթ գոյն են տեսնում ծիածանի մէջ,
Ովքեր լսում են
Մոլեկուլների խելայեղ վազքի համաձայնագը
Ա՛յն մուրճերի մէջ կամ կացիններ,
Որոնք միևչեւ իսկ զնգոց չեն հանում,
Այլ համր են ու լուռ՝ կուռերի նման...

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր նայում են սեւուկ գոմէշին,
Իբրեւ մի խայլող սեւ դաշնամուրի,
Որ նւագում է լոկ իրե՛նց համար։

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր ապառաժ-անտառ խարի մէջ

Տեսնում են Յոռում, տեսնում Զուարթնոց,
Ժայռի զանգւածում տեսնում Աջանտա, Էլլորա, Գեղարդ,
Անգոյն կտաւին՝ Սրբազան ընթրիք ու Մագթաղինէ,
Եւ ամեն անցնող երիտասարդի հոգու խորքերում՝
Մի ննջող Համլէտ, արթուն Օթելլոյ...

Ճառագայթային այս հիւանդութեամբ տանջւում են
Նրա՛նք,

Լոկ նրա՛նք,
Ովքեր մենակութեան մէջ
Միանգամից են ողջ մարդկութեան հետ նստում զրոյցի.
Լոկ նրա՛նք,
Ովքեր այս Երկրագնդի պտոյտն զգում են կրունկո՛վ իրենց
Եւ արմըտիքի անուշն զգում են իրենց ափերո՛վ,
Երբ մինչեւ իսկ իրենց ափերը պահում են օդում.
Լոկ նրա՛նք,
Որոնց չեն կարողանում ո՛չ մի կերպ սիրել
Բոլո՛ր դարերի արքաներն ամեն
Եւ կործանում են նրանց ո՛չ միայն աքսորով, բանտում,
Այլ նաեւ նրանց պալատ բերելով
Ու... սուտ սիրելով...

Ճառագայթային այս ախտը բնաւ նո՛ր չէ, բարեկա՛մ...

## ՀԻՄՆ ՔԱՐԱՆՋԱԻԻ

Մենք դուրս ենք եկել մութ քարանձաւից
Միլիո՛ն ու միլիո՛ն տարիներ առաջ։

Մենք դուրս ենք գալիս նո՛յն քարանձաւից
Ամե՜ն ակնթարթ։

Նո՛յն քարանձաւն է մեզ հետապնդում
Մեր ներսի՜ց արդեն։

Ու մեր երգածի կէսից աւելին
Նո՛յն քարանձաւի արձագանգն է հնչում։

Մնացած կէսով մենք հիմն ենք երգում
Նո՛յն քարանձաւի՝

Անէծքանման խօսքերով այն կոյր,
Որոնց իմաստն ենք հասկանում այնքան,

Որքան պառաւը՝ իր հմայական խառնակ խօսքերը,
Որքան երեխան՝ իր խառնիճաղանճ ուտասելուկը…

## ԾԱՐԱՒ

Նոյնիսկ ե՛ս էլ գիտեմ ճառել
Ու խրատել գիտեմ, անշո՜ւշտ:
Սակայն պատիւ ու փառք նրա՛ն,
Ով կարող է հոգի վառել,
Հուրհրատել մէկ վայրկեանում
Երկու անսուտ գոյականով
Եւ անխարդախ բայով երկու:

Զոյգ թւերը ե՛ս էլ գիտեմ:
Բայց փառք նրա՛նց,
Ովքեր տիրում են կենտերին,
Տիրում այնպէ՛ս,
Որ հեշտութեամբ բաժանում են զոյգի վրայ
Ու քառորդում զոյգ ստանում
Առանց մի կենտ մնացորդի:

Մկանն ի՞նչ է. բոլո՛րն ունեն:
Փառք ջղերի՛ն,
Որ լարում են թեթեւ քամուց,
Ովկիանոսի եւ երկնքի առեւտըրից,
Կանանց երբէք չկրկնող ուղեծըրից.
Մինչեւ անգամ քաղաքային բառարանից՝
Ա՛յն լւացքից,
Որ չի փչում այբուբենի կարգ ու սարքով.
Հետք չթողնող ա՛յն այրուածքից,
Որ կոչւում է յիշողութիւն.
Ա՛յն ասեղի կաղ քայլուածքից,
Որ մաքրութեանն է շուլալում հոգին մարդու՝
Անւանելով իրեն գրիչ,
Մաքրութիւնը՝ թուղթ սպիտակ:

Գրելն ի՞նչ է. ե՛ս էլ գիտեմ։
Փառք ու յարգանք ստեղծողի՞ն,
Որ գալիս է եւ ազատում
Մեզ... մեզանից.
Մեզ... մեզանից հատում — գատում,
Ապա բերում կրկին զօդում,
Մեզ միացնում նախ... մեզ, յետոյ... Անյայտի հետ։

Բոլո՞ր այժմ կարդալ գիտեն,
Ուրեմըն փառք... կարդացածը հասկացողի՞ն...



## ԾԵՐԱՆՈՒՄ ԵՆՔ

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբօր պէս,
Նկատում ենք մատղատներին,
Որոնք մեզ չեն նկատում.
Ամեն մի նոր ծանօթութիւն չի վերջանում էլ սիրով,
Ոչ էլ երգով մի անառուեստ, բայց պոռթկուն ու
կրակուած...

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Մեր ապստամբ մազերն արդեն կա՛մ պատժել են մահով,
Կա՛մ իբրեւանց իբրեւ սանրի խեղճ հպատակն են դարձել.
Մեր խռովկան մատներն արդեն դարձել են հնազ ու լսկան,
Իսկ դաւադիր մեր ոտքերը՝ ընտանեսէր—տնասէր...

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՛ս.—
Մէ՛կ օր խմում
Եւ երկո՛ւ օր արդեն խումար ենք ընկնում,
Մէ՛կ ժամ ֆայլում
Եւ երկո՛ւ ժամ խօսում դրա օգուտից
Կամ վնասից,
Եւ ըստ որում խօսում այնպէ՛ս լրջօրէն,
Կարծես մի մեծ գիտ ենք արել
Կամ հերթում ենք մի հին գիտ.
Եւ «բուժել» կամ «հիւանդութիւն» բառերն արդեն օրեցօր
Հոլովւում են ու խոնարհւում աւելի շատ եւ նոյնիսկ
Առաւել ֆիչ դժգոհութեամբ,
Քան թէ թախուն պարծանքով...

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՞ս·—
Թափառելու ժամ չի մնում,
Չենք հասցրնում ձանձրանալ·
Քիչ ենք թախծում մենք անտիր,
Շատ ենք տխրում առիթով·
Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,
Շատ ենք խորհում, քիչ ճնում,
Որովհետեւ «անճնութիւն» բառը դարձել է սոսինձ
Եւ ուզում է մեր հրհրած ջղերն իրար կպցրնել···

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելի՞ս,
Ծերանում ենք, սակայն կարծես
Դարձեա՛լ խելքի չենք գալիս·—
Դեռ հիմա՞ էլ զարմանում ենք,
Դեռ կարող ենք զարմանալ·
Ժամացոյցի սլաքները ես ենք տալիս մտովին,
Ի՞նչ է թէ մեր արդէն չարածն իբրեւ անենք աշխարհում·
Անկարելի յաղթանակի ելք ենք ճարում ինչ-որ կերպ·
Երբեմն էլի այս աշխարհն ենք դեռ չափչփում յուսալից
Դոն-Կիխոտի ոտքեր կոչուած նո՛յն կարկինով ծայրամաշ·
Իսկ երբ մէկը խոր ճնի մէջ մեր երազն է կոխկրտում,
Առաջա՛յ պէս··· առաջա՛յ պէս վեր ենք ցատկում
ճչալով···

Ծերանում ենք, Պարո՛յր Սեւակ,
Սակայն··· խելքի չե՞նք գալիս···

## ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՐՔԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ամեն սերունդ
Նախ եւ առաջ մտածում է լուութեան մէջ,
Իսկ երբ խօսել է սկսում՝
Բարկացնում է աւագներին
Եւ բարկացնում անկեղծօրէ՛ն,
Որովհետեւ… կրսերը՝ մի՛շտ անհասկացող,
Իսկ աւագը… հասկացող է,

Աւա՛գ Աստուած,
Մի՞թէ իրօք համաձիւռ են ու համազօր
Հասկացողն ու կասկածողը…

Ամեն սերունդ
Նախ եւ առաջ մահանում է կասկածելով։

# ԳԻՐՔ ՄԱՆԱՎՈՐԴԱՅ

# ԱՆԽՈՐԱԳԻՐ

(Պ. Սեւակի առաջին տպագիր բանաստեղծութիւնը)

...Ես նոր մի պօետ, անյայտ տակաւին,
Խոհերի անտես մակոյկին նստած՝
Չգիտեմ արդեօ՞ք կ՚ինի՞ ճամի,
Որ առաջ մղի իմ առագաստը,
Թէ ինչ պիսի շապիկն իմ՝ կայմին
Առագաստ չինեմ, նոր լինեմ վստահ,
Որ երգն իմ նորեկ, նաւը իմ գանձի
Պիտի ընթանայ օվկեաններն ի վեր
Եւ փոթորկածուփ ծովերում անծիր,
Որպէս գալիփի անմարմին նւէր,
Պիտի շնչով իր անանձնապատկան
Վառուի որպէս վէս, արբազան պատգամ...

Մեր երկրի վրայ կախուել են ահեղ
Օրեր՝ մառ ու մութ եւ դաժան կարի
Ցանկալով մահուան թոյնով վրդովել
Հանգիստը երկրի մեր չնաշխարհիկ...
Եւ ելել ենք մենք մեր այգաբացով,
Մեր ուժով համակ, վաստակով արդար,
Չնչելու չարիքն այդ արիւնացոլք,
Կոտրելով վերջին այդ կեռը խարդախ,
Վերջին տէրերին այն ժանտաբարոյ
Եւ իշխաններին բոլոր այն արբշիռ
Խեղդելու իրենց իսկ արնակաոս
Յատուցման ծովում — անտես, անկշիռ...
Այդ ժամն է հասել, գնում եմ ես էլ
Դէպի մարտնչող մեր այն բազմագունդը,
Ուր մահը անվախ սրտեր է տեսել,
Ուր ոտնանում է յաղթութեան հունդը...

Գիտեմ, որ մահը շուայլ է այնտեղ
Իր դառնապատիր գգուանքների մէջ,
Եւ տեղութեամբ մի ակնթարթ է
Շատ կարելի է գտնել մահուամբ վերջ...
Ուրեմն գուցատի՞ հերոսութիւնն իմ,
Եւ գոյութիւնն իմ դառնայ մի առա՞նցք,—
Վախկոտութեան հին մազութով իւղուած...
Ուրեմն դալկացա՞յ մահուան պաղ շնչից
Արհամարհանքն իմ՝ սին մահուան հանդէպ,
Եւ մոլեգնակամ վրնջող իմ ձին
Դառնայ նապաստակ—վախկոտ ու անդէ՞մ...
Օ՜, ո՛չ... թող լինեմ Կապլան էսերական—
Իմ առաջնորդի կեանքի դէմ դաւող,
Եթէ առկայ է երգիս շեփորին
Այսօր կեղծիքի շպար կամ օխիդ,
Եթէ անապակ երգիս սափորին
Կաթում է անչինչ, պղտորող մի շիթ...

Գնում եմ այնտեղ եւ սարսում չունեմ
Ես մահուան հանդէպ— մոլի եւ անգութ...
Իմ անվախութեան արտերն անում են
Իրար յաջորդող օրերի հանգոյն:
Գուցատիր, ով մա՛հ... Ջարագոյժ ագռաւ,
Դու աներեւոյթ, անտես բորենի,
Անգոյութեան հուր—անհիւթ, անկրակ,
Դու թունոտ անչար, տեսով ցորենի...
Դու, որ անտես ես, դու, որ անհկաս,
Դու, որ անծեւ ես չար կասկածի պէս,
Խանդի պէս սնուող—անստինք, անկաթ,
Վրէժի նման անվրէպ այնպէս...
Դու, որ կասկածի, վրէժի, խանդի,

Նման շարժում ես անկաս, անկանգ,
Սակայն նրանց պես, կաս հնուց անտի
Որպես արտերի փորձութեան փականք։
Գունատ իր, ուրեմն, դալկացիր, սողայ
Խլուրդի նման կամ ինչպես սողուն,
Եւ իմ(օ՜, ո՛չ, մեր) շնչից դողդողայ,
Մալարիայից են ինչպես դողդողում...
Դու, որ գոյութեան բիւր հազար կանթեղ
Մարել ես դաժան fո սառը շնչից,
Դու, որ եղել ես յաղթական, fանն թէ
Քո որդին—կեանքը՝ fո հանդէպ չնչին,
Արդ պիտի փոխեմք հին դերերը մեմք
Ներդաշնակութեամբ օրինաժնիչ,
Եւ պիտի դողաս ինձանից, ով նենգ,
Ինչպես կանթեղը սառն ածխածնից,

Քանզի ես ահա գալիս եմ fո դէմ
Հոգուս մէջ ծիծաղ, բաfոսեան խնչոյք,
Մի վակխանալիա, մի ուրախ հանդէս,
Մի աստւածային խրախճահաճոյք...
Քանզի ես ահա գալիս եմ fո դէմ
Գիտցած լինելով ինչո՞ւ եմ հագնում
Քո fղանցքը սեւ եւ իրանապիրկ,
Ինչո՞ւ եմ այսման շատ վաղ հաւաfում
Դեռ նոր բաց արած ծիրանահագի
Առագաստը իմ, այս ուրախ կեանքում...
Գնում եմ ես էլ ցանեմ մի հատիկ
Այն գալիլեահունձ լայն մարգագետնում,
Որ չըդառնայ մեր աստղը մահատիպ,
Ժանտաժանտ, դժնի ափսարհի մթնում,
Որ անծիր երկնում մեր բազմաստեղ

Օտար մի թռչուն խենթ չսաւառնի,
Որ կարմիր ոգուն մեր չըպատւաստեն
Ոչ մի գոսական ճիւղ, ոստ եղեւնի,
Որ կապուտաչեայ ջրերում մեր ջինջ,
Օվկիանոսներում անգամ սառցանիստ
Ոչ մի խորք մակոյկ, առագաստ ոչ մի
Չըլողայ, այնտեղ չգտնի հանգիստ,
Որ հայրենիքիս արդարավաստակ
Հողը մի օտար ոտք չըտրորի,
Որ այնտեղ մարդը՝ հոգով անկաշկանդ
Գալիքի հազար յոյսեր օրօրի,
Որ ցուցամատը մեծ առաջնորդի
Նորից ու նորից մնայ ուղենիշ,
Որ միշտ ժպիտով ճանապարհորդի
Մեզ դէպի կարմիր յաղթութեան Ֆինիշ...

22—23. VII. 41

*Նաւչալու*

*
* *

Լինում է—չի լինում,—ինչպես հեքիաթներում—
(Ա՛յն, որ տատըս էր պատմում ամեն գիշեր),—
Լինում է—չի լինում՝ մեր տան մոս ու հեռու
Մի գեղեցիկ աղջիկ՝ վարսերը սեւ։

Լինում է—չի լինում... Միակ որդին մեր տան
(Նման հեքիաթների կրսեր որդուն)
Սիրո՛ւմ, ա՛յն է սիրում այդ թովիչ աղջկան,
Սիրում է—չի սիրում աղջիկը թուխ...

Յեսոյ, ամեն գիշեր, երբ մութն է թանձրանում,
Տղան թափառում է այգում ամայի,
Ուր ծառերի միջից լուսինն է բարձրանում
Եւ թախծո՛ւմ նրա հետ, նրա՛ համար։
Լինում է—չի լինում...խորհրդաւոր լռում,
Վերջանում է սիրոյ հեքիաթն այստեղ...
—Եղել է—չի եղել,—ինչպես հեքիաթներում,—
—Եղե՞լ է, չի՞ եղել,—ես չըգիտե՛մ...

14. V. 46
*Երեւան*

## Ա՜խ, ՀԱԽԱՍՏԱՅԻՐ ԳՈՆԷ ԱՍՏՎԱԾՆ

Մէկ «հա»-ես ասում, մէկ ասում ես «չէ»-
Ու չեմ հասկանում՝ ո՞ր խօսքիդ կառչեմ,
Ու չեմ հասկանում՝ գլուխըս առած
Ո՞ր սեւ—ացտակը գնամ ու կորչեմ։

Ա՜խ, հաւատայի՛ր գոնէ աստղծուն,
Որ վրադ ազդէր առածը ծանօթ·
—Աստուած «հա»-ն օրհնել,
Օրհնել է եւ «չէ»-ն,
Բայց ացիծել է մէկտեղ «հա ու չէ»-ն...

(1956)

## ԿՈՄԻՏԱՍԻ ԴԻՄԱՆԿԱՐԻ ԱՌՋԵԻ

Ֆո աչե՛րը…
Այս աչերը՝
Վանայ ծովի մութ յատակ,
Նարեկացու հոգու պես խոր ու անտակ։
Այս աչերը՝
Բուրգի ակնաս ու դղեակի լուսամուտ,
Սեւանի պես երերածուփ,
Արաքսի պես հոսանուտ։
Այս աչերը՝
Դեռ կենդանի ճահճատակ,
Այս աչերը՝
Մարմին առած պաղատանք։

Այս աչերը՝
Պոռթկուն երա՛զ, դժուար կարո՛տ,
Ծանր ե՛լք,
Մորմոքուն վե՛րք,
Ծովացած խե՛լք,
Ծորուն ե՛րգ…

Ու բերա՛նը…
Անբառ-անխօս այս բերանին նայելիս
Մեր տանջարանն ես վերյիշում,
Անիկ՝ թափուր գահերից,
Եվ ծիւրումն է կարծես հոսում
Կերոնների, ջահերի,
Ու սարսափն է կարծես խօսում
Կորուստների, ահերի։

Մեր կարոտի՛, մորմոքների՛, մահերի՛,
Ուրախութեան, սիրոյ, յոյսի՝
Ամե՛ն տեսակ պահերի

Վառած խօսքն է այս բերանին միշտ թառել,
Այս բերանն է վաղակատա՛ր,
անկատա՛ր
եւ ապառնի՛՝
Ամե՛ն տեսակ բայերի
խոնարհումը յոյս-հաւատով կատարել…

Իսկ ճակա՛տը…

Քո ճակատը
Մագաղաթի հին պատառիկ է ասես,
Մարմարոնեայ մի ափ բեկոր-յուշարձան,
կնճիռներդ՝ հնադարեան հին խաղեր՝
Քեզնից առաջ-ետքնից յետոյ անվերծան։

Քո ճակա՛տը…
Սրբի ճակատ եւ հերոսի ասպարէզ,
Հարսանեփատան ուրախ տաճիճ,
Ուր հնչում են նազպարեր։
Քո ճակա՛տը՝
Քրտնող մշակ ու գիտունի զինարան,
Մասունճիների խորունկ խորան
Եւ ճգնողի մենարան։
Քո ճակա՛տը՝
Համբուրելի սուրբ խաչքար,
Թոնրի տակ խունկ
Եւ գեղջուկի թեղած կալ…

Եւ ակա՛նջը…

Քո ակա՛նջը՝
Մեղեդու դէմ՝ դրունքաց,

Աղմուկի դեմ՝ միշտ կայուն·
Մեր ճուճուճար ծաղկի պես
Բացող—փակող՝ զգայուն…

Քո ակա՜նջը՝
Կախարդական ծայնամաղ,
Եւ դրանով դու մեր հոգին,
Մեր դարերը մաղեցիր,
Թեփ-ժխորը անջատելով թողեցիր,
Իսկ մեղեդին՝
Նմո՜ւշ-նմո՜ւշ, մասնրնցի՜ր,
Քո տաք յոյզով ցօղեցիր,
Անտակ յոյսով հողեցիր,
Որ մենք բաղենք մեկին տաս։

Քո ակա՜նջը, Կոմիտա՛ս,
Քո ակա՛նջը՝
Պատարագող եկեղեցի՜ արբազան,
Քո ակա՛նջը՝
Շեղ խեցի՜ ծայնալուր…
Ինչ վսեմ էր ու գեղեցիկ հայաբար,
Թէ չարերը խոր թաղեցիր միչեւիսկ,
Աստծու նման դու պեղեցիր մեր հոգում,
Դու պեղեցիր ու գեղեցիր աշխարհում…
Անթեղեցիր դու մեր հուրը ցիրուցան,
Կանթեղեցիր մեր կրակը մթան մէջ…
Ինչ խեղեցին օտարները դարէդար՝
Դարմանեցիր ու թեղեցիր հրաշքով…
Թէ նեղեցին ու շեղեցին մեր ուղուց՝
Ուղիղ ճամփի դո՛ւ մղեցիր մեզ անվերջ…
Դո՛ւ դարաւոր երգի ցանքը բաղեցիր,

Մեր ծով բերբը դո՛ւ թեղեցիր մեր ursում
Ու թխեցիր՝ հա՜ց դարձրիր հոգեւոր…

Քո ակա՜նջը ,Կոմիտա՛ս,
Քո ականջը — մագնիսի պէս —
Եղանակ էր հաւաքում,
Ինչ ականջդդ հաւաքում՝
Մատներդ էին նւագում,
Քո մատնե՜րը…

Քո մատնե՛րը՝
Դարմանի մէջ սաւսուռ ցորեն չոկչկող,
Կարճատես ու թոյլ աչքերից
Վարագոյր ու փառ պոկող,
Մթնած մտքի ու փակ հոգու դուռ թակող,
Տնաւէրից ու պանդուխտից ողոքող,
Սիրած եարից սիրած եարից
Զատողի դէմ բողոքող,
Ցաւ ու կսկիծ ամոքող,
Սէր ու կարոտ նւագող,
Բեկուած տողեր,
Վճիտ ցօղեր,
Սրտի դաղեր
Ու դողեր,
Գեղգեղանքի թրթիռներ,
Ելեւէջի հրթիռներ,—
Հոսուն բոցեր
Ու տաք մոխիր հաւաքող…

Քո մատները, Կոմիտա՛ս,
Վառուող ծոցից՝ զովարար,

Խորունկ խոցին՝ դեղատուր,
Լաց ու կոծին՝ սփոփանք,
Մանկաց ճօճին՝ օրորում։

Քո մատների զարկի տակ
Մեր սրտերը՝ պաղ ստեղ,
Մեր սրտերը՝ աննիտակ,
Քո մատները՝ տաղաստեղծ։

Քո մատները՝ երգահան,
Տասնահատո՛ր երգարան...

12. 15, IX. 57
*Մոսկւա*

## ԱՄԵՆՔԸ ԻՐԵՆՑ ԲԱԽՏԻՑ ԵՆ ԴԺԳՈՀ

Ամենքը իրենց
Բախտից են դժգոհ
Եւ ոչ թէ խելքից։

Իսկ ես, տէ՛ր աստուած,
Կրակն եմ ընկել
Իմ խելքի ձեռքից։

Խելք ունենայի՝
Վաղուց էի ես
Կարգին մարդ դարձել—

Ես կարող էի
Սենեակ տալ վարձով,
Եւ ոչ թէ վարձել։

Խելք ունենայի՝
Ինչ հարկաւոր է,
Ես այն կանէի.

Եթէ հաս է պէտք՝
Բարակըս որն է,
Հաս կմանէի։

Խելք ունենայի՝
Ինչ հարկաւոր է,
Ես այն կերգէի,

Տեղն ընկած տեղը
Տեղի կտայի,
Ինձ կբերէի,

Ու կլինեի
Ոչ դեմ, ոչ էլ թեր,
Այլ ոսկե միջին։

Գլուխը fարը։
Թող էժան լիներ,
Միայն... շատերին
Գեղեցիկ թւար։

Հերն էլ անիծած։
Թող ներկւած լինի,
Միայն թէ դուր գայ,
Խաբւենն-հաւանենն։

Գրողի ծոցը։
Թող nr unւs լինի,
Միայն թէ կոյր-կոյր
Պաշտեն-դաւանենն...

...Ում էլ հարցրնես՝
Խելքից չէ դժգոհ,
Այլ միայն բախտից։

Անաստւած աստւած,
Ինչու ես տւել
Անխելքի բախտ ինձ...

8· V. 58
*Մոսկւա*

## ՀԱՅԱՍՏԱՆ

Այստեղ ամե՜ն ինչ ներկած է այնպես
Վառվռո՛ւն, ներհա՛կ ու թա՜ւ գոյներով,
Ասես պարզունակ նկար է մանկան։

Սակայն,
Աստա՜ծ իմ,
Նո՛յն այդ աշխարհում
Որքա՜ն բարդութիւն ու խրթին բան կայ…

18. IV. 59
*Մոսկվա*

## ՀՈՂԸ ՀԱՅԵԼԻ

Ջեզ հող թւացող այս հողը համայն
Կարծես ինձ համար
Դարձել է հիմա
Ամալգամից զուրկ—ևո՛ր մի հայելի,
Որին նայելիս
Տեսնում եմ այնտեղ
Գլխիվայր շրջված—շուռ եկած աճուռն—
Եւ ամեն մի ծառ
Մի ծառ չէ կարծես,
Այլ ծառ է երկո՛ւ.
Ծառ կոչւած մի գունդ հողին է բազմած,
Իսկ արմատների կազմած այլ մի գունդ՝
Հողի մէջ սուզւած—
Նոյնիսկ՝ն ճիւղաւոր,
Որոնց ճիւղ ունի նոյն իմիջ ծառը...

Ու պարզ է թւում ամեն ինչ հիմա։.
Մի՛ հարց է, որ դեռ պարզ չէ ինձ համար.
—Այս արմատներն են
Խոռ ու ծառերի անդրադարձումը,
Թէ՞ արմատների անդրադարձումն են
Խոռ ու ծառերը...

1. V. 59
*Մոսկվա*

## ՊԱՏՐԱՆՔ

Ուտելուց առաջ նայում եմ մի պահ
*(Խորհուրդ եմ տալիս, որ դու էլ նայես).*

Մէջտեղից կիսաած խնձորի վրայ,
Ինչպէս որ Երկրի կիսագրնդերից,
Լեռնաշղթաներ կան իւրատեսակ
Քարափներ ու վիհ,
Ծովեր ու ծոցեր
Եւ, դժբախտաբար, սահմանագրծեր...

14. X. 59
*Չանախչի*

## ԵՐԿՈՒ ՍԻՐՈՅ ԱՐԱՆՔՈՒՄ

Մի անինքնասէր տգեղ կնոջ պես
Սիրահարուել է ինձ տխրութիւնը,
Որին չեմ սիրում,
Եւ այդ պատճառով
Նա իր հագուստն ու անունն է փոխում—
Մերթ՝ կոչւում թախիծ,
Մերթ՝ կարոտ,
Մերթ՝ վիշտ,
Ցաւ կամ տրտմութիւն։
Հետապնդում է
Ու չի հասկանում,
Որ մենք չենք սիրում հետապնդողին,
Որ մենք սիրում ենք ու գերւում նրան,
Ում դուր չենք գալիս։
Ես էլ իմ հերթին
Իմ ամբողջ կեանքում
Հետապնդում եմ ուրիշին՝
Նրա՛ն,
Որ նոյնպես, դիտմամբ,
Անունն է փոխում—
Այն յոյսով գուցէ,
Թէ մոլորուելով՝
Հետքն իր կըկորցնեմ—
Մէկ խնդութիւն է անւանում իրեն,
Մէկ՝ ուրախութիւն։
Կայտառութիւն է
Կամ պայծառութիւն։
Հետապնդում եմ
Ու չե՛մ դադարի,
Մինչեւ նա, անո՛ւժ,

Մինչեւ նա, տրւա՛ծ,
Ինձ չասի·
«Քոնն եմ»։

Վկան՝
Ա՛յն կանայք,
Որոնց ոչ անունն ու ոչ էլ հասցեն
Նշել չեմ կարող...

19. XII. 59
*Թիֆլիս*

## ՈՒ ԵԹԷ ՀԱՅՐ ԵՄ...

Ու եթե հայր եմ ամենից առաջ,
Ինչպե՞ս չխօսեմ զաւակներիս հետ,
Նրա՛նց հետ,
Ովքեր եկել են արդէն,
Առաւել՝ նրա՛նց,
Ովքեր պիտի գան։

Յոգնած խրատից,
Քարոզից զզուած՝
Ես յարգալից եմ նայում կտակին,
Թերևս—ո՛վ գիտի—լով այն պատճառով,
Որ դա աւում է կեանքում մէ՛կ անգամ,
Ինչպէս ես՝ հիմա։

Եւ այն, ինչ որ ես ուզում եմ ասել,
Գիտեմ շա՛տ վաղուց,
Եւ այնքա՛ն վաղուց,
Ինչքան շաբաթայ օրերը գիտեմ
Կամ ամիսների անունը։
Սակայն
Այսօր եմ ուզում եւ պիտի ասեմ,
Քանզի յոյս ունեմ, թէ այսօր դուք ինձ
Կարող էք լսել թեկուզ եւ այնպէս,
Ինչպէս լսում են անձրեւի ձայնը,
Քամու հոխնդը,
Աղմուկն անտառի—
Ուզած թէ չուզած,
Կամայ ակամայ...

19. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

1.

Այս անեղ դարը ինքը ինձ ծնեց
Եւ...քանի՛ անգամ կործանել ջանաց,
Բայց—կեցցե՛մ թող ես
Ու թող նա՛ կեցցէ—
Չկարողացաւ կործանել։
Ջանաց

Իր ա՛յն աչքաբաց բիների ձեռքով,
Որ նրա աչքի խուղն էին կերել
Եւ ուզում էին ինձ՝ հարազատիս,
Խորթ ցոյց տալ նրան...

19. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

2.

Ա՜խ, այդ բիճերը,
Որ ծեր են ծնել…

Չաւա՛կըս,
Հիմա ես նրանց առաջ
Նոյնիսկ, ազնի՜ւ խօսք, ինձ վատ եմ զգում։
Ինձ վատ եմ զգում,
Որ չարացել եմ ես նրանց վրայ,
Որ թշնամի եմ համարել նոյնիսկ,
Միջնեւիսկ ատել։

Սխալւել եմ ես։
Հիմա նրանցից
Շնորհակալ եմ, անկեղծ եմ ասում։
Շնորհակա՜լ եմ։
Չէ՞ որ ինձ համար
Լաւ է, որ նրանք կան ու կլինեն։
Չէ՞ որ հենց նրանց ծերութեան Ցոնին
Չահելութիւնն է շեշտում-ընդգծում։
Լաւ է, որ կեանքում յաղթել են նրանք։
Լաւ է, նոյնիսկ էլ արդարացի է։
Ախար ամեն մէկն ունի իրաւունք
Գոնէ մի՜ անգամ իր կեանքում յաղթելու։
Հերթը նրանցն է—
Թող յաղթեն այսօր,
Բայց չէ՞ որ վաղը դու ես յաղթելու
Կամ ես նմանը։

Եւ ճիշտ են, ճիշտ են բոլո՛րն ափսոսում—
Քսո՛ւն, տխմա՛րը, խե՛ղճը, սրիկա՛ն։

Կեանքում ամե՜ն մարդ,
Կեանքում ամե՜ն ինչ
Ունի իրաւունք
Արդարացնելու իր գոյութիւնը։

Եւ որտեղի՞ց բերէ,
Թէ պարարտանիւթ չպիտի լինի։
Ի՞նչ ապաքինում,
Թէ չի եղել ցաւ,
Թէ ախտ չի եղել։
Ի՞նչ վերածնունդ,
Եթէ չի եղել մահացու դադար։

Երջանկութիւնն էլ չէ՞ որ հէնց այն է,
Որ չկար երէկ եւ այսօր հասաւ...

19. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

3.

Երբ բարկացած եմ՝
Նրանց վանում եմ,
Բայց ինչպե՞ս պիտի վանեն ինձանից,
Եթե ես հիմա այնտեղ եմ գնում,
Որտեղ գալու են եւ բոլոր ճրա՛գբ—
Իրե՞նց ոսխերով,
Թե՞ որդիների, թոռան ոսխերով,
Մի՞թե նոյնը չէ։

19. XII .59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

4.

Գնում եմ—
Հպա՛րտ
Եւ ինքնավստա՜հ,
Սակայն կայ մի տեղ,
Որտեղ —ֆա՛յ գիտեմ —
Խեղճանալու եմ ես ինքըս մի օր,
Հենց որ ֆո գլխին ինձ դարձնեն մահակ,
Խեղճանալու եմ—
Եւ ո՛ւր էր գոնե ուժեղի կողմից։

Խեղճանալու եմ... խեղճերի ձեռով։

Եւ գիտե՞ս՝ ինչպէ՛ս։

19. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

5.

Ուժեղից յեսոյ մահակ են սարքում։
Ուժեղն ի՞նչ անի—խեղճերն են սարքում։
Մահակ են սարքում՝ ուժեղի գլխին,
Բայց այն ուժեղի, որ նոր է եկել։

Դու, հարազա՜տս, որ գալու ես դեռ,
Պատսպարի՛ր հորդ,
Որ չխեղճանայ խեղճերի կողմից։

Եւ դա կարող ես անել շա՛տ դիւրին։

Հէնց որ ինձանից խարազան շինեն՝
Մէջք ու թիկունքիդ,
Հէնց որ ֆո գլխին ինձ դարձնեն մահակ,
Հէնց որ խուփ դարձնեն ֆո բերնին,
Գիտցի՛ր,
Որ դո՜ւ ես կեանքում իմ հարազատը,
Որ իմը դո՛ւ ես,
Հէնց դո՛ւ ես ու կաս,
Ու եթէ հայրդ ապրելիս լինէր,
Կեանքում կլինէր ինձ հետ միասին՝
Ընդդէմ խեղճերի,
Որ իմ անունով
Հիմա չանում են բերանդ փակել։

20. XII. 59
*Թիֆլիս*

6.

Դու ինձ խեղճերից պաշտպանի՜ր, տղա՛ս,
Պաշտպանիր դու ինձ՝
Ինձ չկրկնելով
Եւ չխայլելով իմ հետքով ծանօթ,
Ինձ — եթէ կուզես — ժխտելո՜վ անգամ։

Ինձ չկրկնելով — եւ միայն այդպէ՛ս,
Կխօսես դու իմ հարազատ ձայնով։

Սեփական շաւիղ բացելով միայն
Բանուկ կպահես իմ բացած ուղին։

Եւ ինձ ժխտելով՝
Ինձ կհաստատես։

20. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

7.

Եթէ ուզում ես հօրըդ հասկանալ
Ու լինել նրա հարազատ որդին՝
Մոռացի՛ր ընդմիշտ,
Թէ կայ քերթութիւն,
Թէ կայ դպրութիւն,
Գրականութիւն։

Կայ կեա՜նք,
Կայ լեզո՜ւ,
Եւ պիտի, տղա՛ս,
Նաեւ խօսելու ցանկութիւն լինի,
Բայց մի ցանկութի՛ւն,
Որ անխուսափ է՝
Ջուր խմելու պէս,
Անառարկելի՝
Որպէս հրաման,
Անխուսափելի՝
Ինչպէս լինում է
Մազի բուսնումը,
Աճը եղունգի։

20. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

8.

Այն, ինչ կոչւում է գրականութիւն,
Դեսպանատո՞ւն չէ,
Որ զգա՛ս—խոհե՛ս—մտածե՛ս մի բան
Եւ այլ բան ասես։

Իսկ դու դեսպա՛ն չես,
Այլ պատգամաւո՞ր։

Ու եթէ նոյնիսկ դեսպան ես՝
Ապա
Դեսպան ես… կեանքի՛—
Որքան այսօրւայ,
Առաւել վաղւա՛յ…

20· XII· 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

9.

Եթե ուզում ես հասկանալ դու ինձ՝
Ներս մտիր աննատն եւ ականջ արա։
Որտե՞ղ ծայներ կան՝ բոլո՞րը տարբեր։
Եւ բազմահազար ծայնատեռերից
Նոյնիսկ գեթ մեկին բնաւ չի տանջում
Ինչպե՛ս ծայնելը—

Նրանք կարող են լոկ այսպես ծայնել,
Եւ ոչ այլապես…

20. XII. 59
*Թիֆլիս*

## ԻՄ ԿՏԱԿԸ

10.

Գիտե՛մ՝
Ես էլ եմ գնալու շուտով,
Ուր որ է, այո, գնալու եմ ես,
Բայց չե՞մ կորչելու։

Դառնալու եմ ձեր… առողջութիւնը։

20. XII. 59
*Թիֆլիս*

## ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ...

Մենք փիչ ենք, սակայն մեզ հայ են ասում...
Մենք մեզ ո՛չ մեկից չենք գերադասում։
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մե՛նք, միայի մե՞նք Ասարաս ունենք,
Եւ որ այստեղ է՝ բարձրիկ Սեւանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում։
Պարզապես Դաւիթն այստեղ է կուռել։
Պարզապես Նարեկն այստեղ է գրել։
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ծուկ,
Մարդ սարսել կաւից,
Ուսուցմա՛ն համար եւ աշակերտել
Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն,
Վսեմի՛ն,
Լաւի՛ն...

Մենք փիչ ենք, սակայն մեզ հայ են ասում։

Մենք մեզ ո՛չ մեկից չենք գերադասում։
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել,—
Պարզապես մենք շատ ենք արիւն հեղել։
Պարզապես մենք մեր դարաւոր կեանքում
Երբ շատ ենք եղել,
Ու եղել կանգուն,
Դարձեա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի։
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի։
Դարեր են եկել ու դարեր անցել,
Ոչ մեկի վրայ մենք չենք բռնացել։
Եթէ գերել ենք՝
Լոկ մեր աչքերով։

Եթէ տիրել ենք՝
Լոկ մեր գրերով.
Եթէ իշխել ենք՝
Ու եթէ ճնշել՝
Ջիրերո՛վ միայն...
Պարզապէս մահն էր մեզ սիրահարել,
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրել,
Իսկ երբ, ստիպուած, մեր հողն ենք թողել,
Ո՛ւր էլ որ հասել, որտե՛ղ էլ եղել՝
Անչինչ հետեր ենք ամէնուր թողել
Չանացել ենք միշտ ամենքի համար...
Շինել ենք կամուրջ,
Կապել ենք կամար,
Ամենուր հերկել,
Հասցրել բերքեր,
Ամենքին տալ մի՛տ, առած, երգեր,
Պատսպանել նրանց հոգեւոր ցրից,—
Ամենուր թողել մեր աչքից՝ ցոլանք
Մեր հոգուց՝ մասունք,
Եւ ճշմար՝ ուրից...

Մենք քիչ ենք, իրօք,—բայց հայ ենք կոչւում
Եւ քաջութիւնից չենք էլ ընկճւում,
Քանի որ կեանքում լաւ է քիչ լինել,
Քան թէ շատութեամբ կեանք տնօրինել.
Քանի որ լաւ է լինել եւ սակաւ,
Քան թէ շատութեամբ լինել տիրակալ.
Լաւ է լինել քիչ,
Քան թէ կեղեքիչ...
Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչւում ենք Հայ,
Գիտենք դեռ չանցած վէրքերից տնքալ,

Բայց ևոր խնդութեամբ ցնծալ ու հրճւել.
Գիտենք թշնամու կողը մխրճւել
Ու բարեկամին դառնալ աջակից,
Դուրս գալ մեզ արած բարութեան տակից՝
Մէկի փոխարէն տա՛նք հատուցելով։
Յօգուս արդարի եւ արեգակի
Քւէարկել կեանքով, ոչ միայն ձեռով...
Իսկ երբ ցանկանք մեզ բոնի վառել՝
Մենք գիտենք մխա՜լ եւ... կրակ մարել.
Իսկ երբ պէտք է խաւարը ցրել՝
Գիտենք մոխրանալ որպէս վառ կերոն։
Եւ գիտենք նաեւ մեզ կրթոս սիրել,
Բայց ուրիշներին միշտ էլ յարգելով։

Մենք մեզ ոչ մէկից չենք գերադասում,
Բայց մե՜զ էլ գիտենք.
Մեզ Հա՛յ ենք ասում։
Եւ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...
Կա՛նք։
Պիտի լինե՛նք։
Ու դեռ... շատանա՜նք։

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱԽԸ

Ես ի՛նձ համար չեմ վախենում.
Կուզե՞ք՝ վա՛ղն էլ ընկնեմ — մեռնեմ։

Վախենում եմ ջրի՛ համար
Եւ ջրային խճանկար ա՛յն քարերի,
Որոնք ինչպես բիբերի շուրջ,
Ասես դառնում սպիտակուց
Ու ցոլանք են տալիս ջրին։
Վախենում եմ նրա՛նց համար.
Վախենում եմ,
Որ մի գուցէ հետըս նաեւ իրե՛նց տանեմ...

Վախենում եմ նաեւ հողի՛, հողի՛ համար՝
Մենախօսող ա՛յն մեծագոյն ողբերգակի,
Ում «Լինել թէ չլինելը» այսօր արդէն բարձր է հնչում
Մինչեւ անգամ թեթեւսոլիկ քամո՛ւ բերնով,
Որ վարակւած ու վարակիչ ամպ կարող է քշել—բերել,
Մշտածիծաղ — զնգուն ձայնով եւ անձրեւի՛,
Որ կարող է անմեղօրէն օրհա՛ս փռել՝
Մանուկների երակներում արիւնը ջուր դարձնելով։

Քանի ես կամ՝
Թւում է, թէ հողը դեռ չի՛ կործանւելու,
Թէ չէ՝ կուզե՞ք... այս վարկեանիս ընկնեմ—մեռնեմ...

Վախենում եմ, որ գնալիս հետս աստղերի ցոլքը տանեմ
Եւ աչքերի գիշերական ու ծովական խորքը տանեմ,
Կաքաւների «կղա — ն», երգի «լօ-լօ» — ն տանեմ,
Հեռախօսի կարօտ գրող «ալլօ» — ն տանեմ,
Մարդու հոգի կտցահարող աղջկական քելքը տանեմ,
Քարանձաւի եւ փակուղու ելքը տանեմ,
Տանեմ մարդու զէ՛նքը միակ՝

Խե՛լքը ճրա,
Ու ճա մնայ աճզէ՛ճ — աճզօ՛r
Այս սասաճուող հողի վրայ՝
Մենախօսող ա՛յճ մեծագոյճ ողբերգակի,
Ում «Լինել թէ չլինելը» լսո՛ղ է պէտ,
Գոճէ լսո՛ղ, լսո՞ւմ էf ինձ, գոճէ լսո՛ղ...

Վախենում եմ սրա՛ համար, թէ չէ՛ կուզէ՞f
Ձեր աչfի դէմ ըճկճեմ — մեռճեմ այս վայրկեաճիս...

22. X. 62
*Երևան*

## ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ

Լոկ իրե՛ց յատուկ բիւր ացուցներից
Գալիս է բոյրը հին-հին դարերի,
Անցին fարերի,
Պարտէզի, ոգի ու խոնարհութեան,
Երկնի, հողի ու խոնարհութեան,
Միևչդեռ փէշերից՝
Բոյրը թարմ հացի,
Հոտը խնձորի կամ սերկեւիլի.
Որ fուն են առնում նրանց փոթերի ու դարսերի մէջ՝
Հայրական տնից բերած անդուկում...

Ու մեր նաւերը նախ նրանց տաfուկ շնչով են եփում:
Իսկ եթէ նրանց գլխաւորերից դեղ — դարման սարfւեր՝
Անպարկեշտութիւն կոչած ախտը հին կբուժւեր իսպառ...

Բարեխառն գոտուց հեռու ապրելով՝
Մենք միշտ բարեխառն օդ ենք ներշնչում մեր տների մէջ
Շնորհիւ... նրանց հաւատարմութեան,
Եւ ամեն անգամ նրանք մտնում են անկողինն իրենց,
Ինչպէս մտնում են արբացած տանտար,
Իսկ եթէ նրանց այդ նոյն բանն ասես,
Կխաչակնքեն երկիւղածօրէն՝
Այդ համարելով արբապղծութիւն...

Ու երիտասարդ նրանց ձեռքերը նուրբ են առաւել,
Քան իրենց ուրի թաղանթը նոյնիսկ,
Միևչդեռ մայրական ու մամիկական ձեռքերը նրանց
Գնալով անվերջ փոխւում են — փոխո՜ւմ
Ու նմանւում են... երկրի կեղեւի՛ն.
Սարե՜ր կան այնտեղ, ձորե՜ր, անդունդնե՜ր՝
Կոշտուկի՛ տեսով,

Կնճիռի՛ տեսով,
Տեսով խորտմի՜...

Խորացի նման լեցուն են նրանք տաք մասունքներով,
Որ միշտ կարող են գալիք դուրս բերել ինն ամիսը մեկ
Ու կոչել «զաւակ» կամ «խաչ», ինչ նրանք
Սիրով են կրում բովանդակ կեանքում...

Անցնելով փոշոտ ճանապարհները աւի եւ փախի՝
Բոբիկ ոտերին կծկել են նրանք
Իրենց հայրենի գեղակն ու աոուն,
Ցաւից մշուշած իրենց աչքերում
Տարել են իրենց ծուխը ծխանի
Եւ իրենց յոգնած շալակին աոել
Ոչ միայն մանչին կամ մի մագաղաթ,
Այլ մի բովանդակ... բնիկ հայրենի՛ք,
Մի ծա՜նր, ծանր՜, ծանր՜ հայրենիք՝
Իրենց կանացի թիկունքին կպած
Ա՛յն կուզի նման կամ ա՛յն սապատի,
Որ շտկում է լոկ գերեզմանո՜ւմ...
Ինչե՜ր չեն տեսել նրանք այս վերջին հազարամեակում...

Յաճախ են նրանք իրենց պատսպաոել
Տաք խաչերկաթով
Կամ եոման կաթով,
Նրանց հայրենի անխիղճ ու բարի քարափներն անտակ
Ու կամուրջները չար ու ողորմած
Մեկ անգամ չէ, որ նրանց փրկել են անպատութիւնից,
Որպէսզի ապրած դժոխքից յետոյ
Մարտիրոսացած մտնեն դռներից ա՛յն Արքայութեան,
Որ եթէ չկայ ու չի էլ եղել,

Ապա անպատճառ ստեղծուեր պիտի
Հենց սրա՜նց համար։

Իսկ եթէ մահը եղել է անգութ
Ու ժամանակին չի տարել նրանց
Ու եթէ նրանք ընկել են հարեմ՝
Առեւանգիչի, լկողի համար ծնել են նրանք
Միայն... ապուշնե՜ր եւ կամ... դահիճնե՜ր...

28. XII. 62
*Երեւան*

## ՄԷԿԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՈՒ ԿԱՏԱԿԵՐԳ
## ԵՐԵՔ ԱՂՋԿԱՅ ՎՐԱՅ

Ծերանում ենք, Պարոյր Սեւակ,
Ծերանում ենք, սիրելիս...
Պ. ՍԵՒԱԿ

Երեք աղջիկ քայլ են են քայլում փողոցով.
Երեք աղջիկ փայլ են փայլում փողոցով.
Քայլո՛ւմ—փայլո՛ւմ, չե՛ն էլ նայում ոչ մեկին,
Բայց եւ այնպես տեսնում են պարզ ու մեկին,
Որ բոլո՛րն են իրենց նայում դողոցով.

Երեք աղջիկ ծիծաղում են անառիթ
Ու թւում են... ու թւում են անառիկ.
Տեսնես՝ ո՞վ է նրանց անուն յօրինել.
Երկուսինը՝ ի՞նչ ուզում էր թող լինէր,
Միայն մեկին... մեկին լինէր Քնարի՛կ.

Երեք աղջիկ դաս են սերտում մեկուսի.
Տեսնես՝ ո՞վ է փարւում նրանց մերկ ուսին.
Մեկին ինչ—որ մեկը սիրեր, մինչդեռ ես,
Ես սիրէի գոնէ... գոնէ երկուսին.

Երեք աչիկ գուցէ ասեն ինձ «քեռի»՝
Նայելով իմ ճերմակացող քունքերին.
Իսկ ես ինչպէ՞ս իմ հայեացքով չգրեմ
Բիբերի մեջ նրանց ծիծղուն աչքերի.
«Մեկիդ մերժման ցաւը մի կերպ կկրեմ,
Իսկ երկուսի՛դ, գեթ երկուսի՛դ... կսիրե՛մ».

Նրանք՝ դալա՛ր, իսկ ես՝ ահա ա՛յս տարիքին.
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին՝ ի՛մ պես,
Միւսին՝ ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նմա՛ն.

Երեք աղջիկ իրար բնա՜ւ չեն նանաչում,
Ես դրանից, անկեղծ ասած, չե՛մ ամաչում,
Որովհետեւ ես չեմ խաբում եւ ո՛չ մեկին.
Ինձ՛ երեքը, իսկ ես սիրում եմ երեքին՝
Մեկին՝ ի՛մ պես,
Միւսին՝ ի՛նձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նման։

Երեք աղջիկ երջանիկ են, ես՝ առաւե՜լ։
Ո՛չ մի անգամ ո՛չ մեկն ինձնից չի՛ խռովել,
Տառապանքից չի՛ պառաւել
Ու կարօտից չի՛ խորովւել,
Որովհետեւ նոյնիսկ հիմա՝ այս տարիքին,
Երեք աղջիկ ինձ են սիրում, ես՝ երեքին.
Մեկին՝ եմ պես,
Միւսին՝ ինձ պես։
Ու երրորդին էլ՝ ինձ նման։

Երեք աղջիկ թէ հանդիպեն մի օր իրար,
Պիտի խօսե՜ն—խօսե՜ն իրենց սիրուց իրաւ,
Ու չիմանան, որ սիրում են մեկին՝
Նրա՛ն,
Ով սիրել է իրենց մեկտեղ.
Մեկին՝ իմ պես,
Մեկին՝ ինձ պես,
Իսկ երրորդին էլ՝ ինձ նման...

3. XI .63
*Երեւան*

## ՊԻՏԻ ...

Ա՜խ այս անվերջ «պիտի»—ն
Վերջ ունենայ՞ պիտի...

«Պիտի... այսպես անեմ,
Պիտի... այնպես անեմ,
Պիտի... այսպես լինի,
Պիտի... այնպես լինի,
Պիտի... պիտի... պիտի»...

Այսպես «պիտի»—ն պիտի
Նստի գահի վրայ,
Իսկ մենք մնանք ոտի,
Երկրպագենք նրան...

3. XI. 63
*Երևան*

Մի՛... Չի՛...

Մի՛ ացիր (այս),
Մի՛ ացիր (այն),
Մի՛... մի՛... մի՛... մի՛...

Չի՛ կարելի (այս բանն անել),
Չի՛ կարելի (այն բանն անել),
Չի՛... չի՛... չի՛... չի՛...

Այս «մի»—ն ու «չի»—ն աչից—ձախից,
Իբրեւ երկու փականգծեր,
Անլուծելի խնդրի նման
Մեր ողջ կեանքն են մէջտեղ գցել։
Եւ այս խնդիրն ո՞վ կլուծի...

26. XI. 63
*Երեւան*

## ՀԱՅՐԵՆԻՔ

Քեզնով երդւելիս
Չեոխըս դնում եմ իմ արտի վրայ՝
Սեղմելո՛ւ նման,
Որ... յանկարծակի չպայթի դողից...

Ինծնով երդւելիս
Ափըս դնում եմ fո մի ափ հողից,
Ինչպես իմ նախնիք՝ Սուրբ Գրիից իրենց...

Եւ զո՞ւր, իզուր են մեզ ուսուցանել,
Թէ իւղոs մասով Սուրբ Գիրf չեն թերթում,
Ա՜խ, ի՛մ ժողովուրդ, Գի՜rf ժողովողի,
Սուրբ Գիրf... ծամո՜ւմ են... իւղոs բերանո՜վ՝
Քո լաւաշիդ պէս,
Նշխարիդ նման...

Եւ աչից նայում՝
Տեսնում եմ հրդեհ,
Ձախից եմ նայում՝
Տեսնում եմ մոխիր։
Ի՜նչ է. fե՞զ տւեց կրակը կրթել
Ու դաստիարակել մի ամբողջ նախիր...

Ճակատագրի բերումով դաժան
Ճակատդ հիմա՝ փոfրի՜ց էլ փոfրիկ,
Միևչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից մե՜ծ։
Իսկ ո՞վ է դրա ըմբերցողն, ո՞ւր է...

## ՀԱՆԵԼՈՒԿ ԱՌԱՋԻՆ

—Իսկ այդ ի՞նչն է,
Որ երբ հասաւ՝
Փախցրնում է մեր հունն աչքից։

Պապիկն իսկոյն հագն իր հագաց
Ու երբ պրծաւ բարեյաջող,
Իսկոյն ասաց.
—Ծերուի՛նը։

Պատերազմի երես տեսած
Հայրիկն ասաց.
—Գերուի՛նը։

Մայրիկն ասաց.
—Մեռուի՛նը։
Ու կրկնեց.
—Մեռուի՛նը։

Փոքրիկ տղան
Փոքրիկ ափը զարկեց ափին
Ու ծայնիկն իր միացնելով
Չնգուն ծափին՝
Չասա՛ց... գոռա՛ց.
—Չմեռ Պապի՛ն

Իսկ աղջիկը արբունքահաս՝
Վառած ծեռով
Յարդարելով իր վարսերը՝
Ոչի՛նչ չասաց,
Բայց մտածեց.
—Պա՞րզ չէ, սե՛րը...

## ՀԱՆԵԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԴ

—Այդ ո՞ր կենդանին է, որ չգիտի լողալ,
Իսկ թե փորձեց՝
Սուզում—խեղդլում է։

Շա՜տ-շատերը իրենց չարչարեցին
Իզո՛ւր,
Մտածեցի՜ն երկար, միտ արեցին
Իզո՛ւր,
Մինչեւ որ պատահած կենդանաբանն ասաց·
—Այդ կենդանին ուղտն է։
Իսկ ես գոռացի·
—Ո՛չ,
Այդ կենդանին... ե՛ս եմ,
Որ չգիտեմ կեանքի սահանքներում լողալ,
Հետն էլ ճաեւ... սողալ...

2. III. 67
*Արզնի*

## ԵՐԵՒԱՆ-ԷՐԵԲՈՒՆԻ

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դւին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարեր կարոտ, մեր քարեր նազանք,

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, ըո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երեւան։

Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ։
Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կը կորչի,
Առանց քեզ՝ մեր տաք տենչն էլ կը սառչի։

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, ըո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երեւան։

Կեանքում ամեն սէր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,
Տաք է սէրը մեր՝ հեկ քարերիդ պէս,
Հին է սէրը մեր՝ ծիգ դարերիդ պէս։

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, ըո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երեւան։

## ՍԱՐԴԱՐԱԲԱՏ

Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գնում հնար։
Այսպես ծագեց արեգակեց
Սարդարաբաթի մարտը մեծ։

Չանգե՛ր, ղօղանջէք,
Սրբազան քաջերին կանչէք
Այս արդար պատից։
Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչէք
Սարդարաբաթից։

Աւարայրից չանք առանք,
Այստեղ մի պահ կանգ առանք,
Որ շունչ առած՝ շունչներս տանք
Սարդարաբաթի պատի տակ։

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,
Մենք չհանգանք՝ դեռ կը գանք
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք։



ԱՐՁԱԿ

Իսկ ինչո՞ւ այս վերնագիրը. «Թումանեանի հետ»։

Այն լուրջ պատճառով, որ Թումանեանը հէնց նա է, ում հետ ենք մենք ամենքս կամայ թե ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ։

Հետն ենք ամբողջ կեանքներում՝ տակաւին գրաճանաչ չդարձած և մինչև մահուան վայրկ։

Հետն ենք առաւել, քան որևէ մեկ այլ գրողի։

Ես գիտակցաբար եմ գործածում «գրող» բառը փոխանակ «բանաստեղծ»-ի՝ այն նկատառմամբ, որ ամեն բանաստեղծ դեռ գրող չէ, ինչպէս որ ամեն կին դեռ մայր չէ։

Իսկ Թումանեանը ոչ միայն բանաստեղծ է, այլև արձակագիր։

Աւելի՛ն. Թումանեանը մեր ա՛յն միակ բանաստեղծն է, որ գրել է համարեա թէ գրական բոլոր ժանրերով ու տեսակներով, ըստ որում ոչ թէ սոսկ գրելու փաստով (այդպիսի ուրիշ անուններ կարող ենք յիշել), այլ այն իրողութեամբ, որ ամենուրեք հանդէս է եկել իբրև դասական, իբրև օրինակելի, իբրև չափանիշ։

Ե՛ւս աւելին. Թումանեանը, որ գերազանցապէս գրել է չափածոյ, իր չափածոյի մէջ էլ մնում է արձակագիր (այս բառի գերդրական իմաստով)։

Ինքնե՛րդ մտածէք. չէ՞ որ «Անուշ»-ը կարող էր գրուել արձակ, ինչպէս որ «Գիքորն» էլ՝ չափածոյ։ Տարբերութիւնը կլինէր երևութական և ոչ էական։ Եւ այս՝ թերևս այն ստացառով, որ Թումանեանն իր թէ արձակ և թէ չափածոյ երկերում միշտ էլ թաքնւած «դրամատուրգ» է (իր իսկ խոստովանութեամբ)։

Ահա թէ ինչու, իմ ըմբռնումով, «բանաստեղծ» բառը Թումանեանի համար քիչ է և նեղ։ Շատ աւելի յարմար ու վայելուչ է «գրողը»։

Եւ Թումանեանն է այն հազւագիւտ բանաստեղծը, որ եթէ ոչ մի տող արձակ էլ գրած չլինէր, դարձեալ պիտի կոչ-

*ւէր գրող՝ այնքա՛ն լեցուն է նրա պոէզիան պատմողական տարրերով, հոգեբանական վերլուծումներով, կերպարային ու տիպային կերտուածքներով։*

*Եւ ամեն ազգ ունենում է այսպիսի միայն մե՛կ բանաստեղծ։*

*Եւ այս միայն մե՛կ բանաստեղծն է, ում հետ լինում է ամբողջ ազգը ամբողջ կեանքում՝ դեռ գրաճանաչ չդարձած և մինչև մահուան մահիճ։*

*Այս պատճառով էլ՝ «Թումանեանի հետ»։*

*Թումանեանապիտուքիւնը իր ծննդեան օրերից պերազատուքիւնը տւել է Թումանեան—էպիկին։ Եթէ խօսքը այսքանով վերջանար, աւելացնելու բան չէր մնայ։ Բայց մէկ անգամ չէ, որ յայտնւել է նաև այն կարծիքը, թէ Թումանեանը լիրիկ չէ։*

*Այստեղ է սխալը։*

*Թումանեանը նաև քնարերգակ է, բարեբախտաբար, և, իմ անձնական կարծիքով, հեռաւոր ապագայի տաք ու պաղի մէջ իր քնարական գոհարները անհամեմատ ժանգազերծ կմնան, ուստի և կատանան առաւել հնչեղութիւն, քան այժմ։*

*Բայց չեմ կարող չաւելացնել, որ Թումանեանը, իբրև քնարերգու, անզուգական չէ, այլ մէկն է սակաւաթիւներից, նրա քնարական արժէքների դիմաց նոյն քանակի ու որակի արժէքներ կարող ենք դնել Պեշիկթաշլեանից ու Դուրեանից, Իսահակեանից ու Վարուժանից, Մեծարենցից ու Թէքէեանից, Տէրեանից ու Զարենցից։*

*Թումանեանի անզուգականութիւնը այլ տեղ է։*

*Իհարկէ, ամեն մի ճշմարիտ արուեստագէտ էլ որոշեալ չափով անզուգական է։ Այդ է նրա ծննդեան նախապայմանը։ Բայց եթէ անզուգականութիւն բառին տանք ոչ թէ nրոենալ, այլ բացարձակ կիրառութիւն, ապա համարձակւում եմ ասելու, որ մեր նոր գրականութեան մեծերից ոչ մէկի գործունէութեանը այնքան չի վայելում անզուգական բառը, որքան Թումանեանինը։*

*Ժամանակը, որ անզուգական նշանակում է իր գոյգը*

չունեցող, և շարունակենք այս «վտանգաւոր» միտքը ըստ մեր գրականութեան լայնքի ու երկայնքի։

Դէպի ետ գնալով՝ անզուգական կարող ենք անուանել միայն Նարեկացուն և կարծեցեալ Գուչակին (միջազգային միջավայրում) ու Սայեաթ-Նովային (միայն ազգային միջավայրում)։ Նոր ժամանակներում՝ միայն Թումանեանին (դարձեալ ազգային միջավայրում)։

Իսկ ինչո՞ւ միայն Թումանեանին։

Մեզ համար, իհարկէ, ազգային մեծ դժբախտութիւն էր, որ տարբեր պատճառներով մեզանից անժամանակ հեռացան այնպիսի վիթխարի տաղանդներ, որպիսիք էին Դուրեանն ու Մեծարենցը, Սիամանթոն ու Վարուժանը, Տէրեանն ու Զարենցը։

Բայց եկէք մեզ թոյլ տանք մտովին ենթադրելու, թէ մեր այս կամ այն մեծը չի եղել բնաւ։ Ումից էլ մեզ զրկենք մտովին՝ կորուստը կլինի մեծ, բայց հաստուցելի։ Նրա բաց տեղը այսպէս թէ այնպէս կլրացնեն մեր միւս մեծերը՝ ամեն մէկը իր տաղանդի այն կողմով, որ նման է կորուսեալի այս կամ այն կողմին։

Եւ ահա մի վայրկեան երևակայեցէք, թէ չի եղել... Թումանեանը։

Նրա տեղը կմնար... Թափուր, ինչպէս, որ թափուր կմնար տեղը մէկ էլ... Աբովեանի։

Միա՛յն սրանց։

Չէնց այս է, որ նշանակում է... անզուգական։

Մէկ, որ յիշել ենք Աբովեանին, չենք կարող զուգորդաբար չմտածել, որ աստծու սիրելի Թումանեանն ունէր և մի պատժւածութիւն, որ իրենը չէր, այլ իր ազգինը։

Այն, ինչ արեց Թումանեանը, պիտի արւէր գոնէ 100 տարի առաջ (Աբովեանի օրերին՝ Թումանեանական մակարդակով)։ Այս դէպքում բոլորովին այլ ընթացք ու շարունակութիւն կունենար մեր նոր գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը։

Բայց Թումանեանը չէր, որ չշտապեց. ազգն էր, որ չէր կարող չուշանալ՝ պատմական իր այն վիճակի պատճառով,

որ գիտենք բոլորս, ուստի և ծաւալւելու հարկ չկայ։

Իր պորտից վեր չէր կարող թռչել նա՛և Թումանեանը, մանաւա՛նդ Թումանեանը, որ իբրև վիթխարի անհատականութիւն, չէր կարող բարձր չլինել և իսկապէս էլ բարձր էր իր ժողովրդից, բարձր էր իր պորտից վեր։ Բայց իր պորտով այնպէս էր կապւած նոյն այդ ժողովրդին, ինչպէս մանուկն արգանդում. այդ պորտը երբէք չկտրեց ու մշտապէս մնաց անող ու զորացնող մի խողովակ, որ հազարգիւտների սեփականութիւնն է։

Պորտից վեր բարձր լինել իր ժողովրդից և միաժամանակ իր պորտը երբէք չկտրել նոյն ժողովրդից — ահա մի դէպք, որ սակաւ է լինում, ինչպէս գիտատղերի վերադարձը։

Այդ դէպքում է, որ բախտ սւսւածը երկւորեակւում է ճակատագիր սւսւածին։

Եւ Թումանեանի «ուշացածութիւնը» նկատի առնելով, չենք կարող չասել, որ Թումանեանի (աւելի ճիշտ՝ մեր ազգային բանաստեղծութեան) բախտը այնքան էլ չբանեց, բայց ճակատագի՛րը...

Ըստ որում չմոռանանք, որ ճակատագիրն էլ հէնց այն է, որ անջնջելի է մնում ոչ միայն ապրող, այլև արդեն մեռածմաշկաթափ գանգի վրայ...

Ո՞րն է Թումանեանի ճակատագիրը։

Այլ կերպ ասած՝ ինչո՞վ է նա անզուգական։

Երրորդ հարցադրմամբ՝ ինչո՞վ է նա դարձել այն բանաստեղծը, որի նմանը միայն մէկ հատ է լինում ամեն ազգի մէջ։

Ինչպէս ամեն անհատ, այնպէս էլ ամեն ազգ ունենում է իր կենսագրութիւնը։ Իւ եթէ ամեն անհատի կենսագրութիւն չէ, որ գրւում է, ապա ամեն ազգի կենսագրութիւն գրւում է անպայման՝ վաղ թէ ուշ։

Եւ ահա Թումանեանի ճակատին էր գրւած՝ լինել հայ ժողովրդի ետմիջնադարեան պատմութեան կենսագիրը։

Այստեղ է Թումանեանի անհամեմատելի մեծութիւնը, այստեղ է նա անզուգական, այստեղ է նա միակ, ուստի և

անփոխարինելի։

Եւ իսկապէս էլ հայ ժողովրդի ետմիջնադարեան ամբողջ կեանքն ու կենցաղը, նիստն ու կացը, կեցուվթիւնն ու կեցուածքը, հոգեբանուվթիւնն ու հոգեխառնուվթիւնը արտացոլուած կամ արտայայտուած են Թումանեանի քաղմաժանր ստեղծագործուվթեամբ։

Բոլորս գիտենք Բալզակին տուած Ինգելսի կուռ ու կըտրուկ գնահատականը (Ֆրանսիական հասարակուվթեան կեանքի մասին Բալզակի երկերից իմանում ենք «շատ աւելին..., քան այդ շրջանի բոլոր մասնագետների, պատմաբանների, տնտեսագետների, վիճակագիրների գրքերից՝ միասին առած»)։

Մի՞թէ նոյնը չենք կարող ասել Թումանեանի մասին, Չէ՞ որ «Ազգագրական հանդէս»-ի բոլոր համարները, բանագիտական, հայրենագիտական, պատմագիտական և այլ «...գիտական» ողջ պատկառելի գրականուվթիւնը միասին առած չեն կարող հայ ժողովրդի անցած կեանքի մասին տալ այն աղուո պատկերացումը, որ վառ պատկերել է Թումանեանը։

Ակամայ չէ՞ք յիշում Խաչանիի ազանչելի քառեակը՝ Թումանեանի թարգմանուվթեամբ.

Ասում են՝ թե հազար տարին մի անգամ
Մի փրկիչ է ափխարհ գալիս,—մի պատգամ.
Մին, երբ եկաւ, ծընուած չէինք մենք մորից,
Մին էլ, երբ գայ, մեռած կըլնենք ցաւերից։

Նա էր, որ եկաւ փրկելու մեր հազար տարուայ կեան ու չկան՝ արձանագրելով ու յաւերժացնելով, Ըստ այսմ՝ նա դարագլուխ չսկսեց, այլ դարագլուխ փակեց. մինչև 20-րդ դարի մեր ժողովրգական կեանքի համագումարն արեց, հանրագումարն ստացաւ, անխօս յուշելով աստուածաշնչեան Դաւիթ — «Ժողովող»-ի ազանչելի խօսքը. «Պակասեալն ոչ կարասցէ ի թիւ անուանել»—«Այն, որ պակաս է, չի կարող համրուել»...

Թումանեանն է, որ «երբ եկաւ, ծընուած չէինք մենք

մօրից»։

Մէկ էլ, ե՞րբ պիտի գայ մի նոր Թումանեան՝ իր նոր համագումարով ու հանրապումարով։

Անկասկած է, որ դոնէ մենք այդ ժամանակ «մեռած կըլնենք... ցաւերի՞ց» արդեօք, թէ սպասումից, — կարևոր չէ...

Այսպիսին է նա։

Ըստ որում նա կարող էր լինել նաև անանուն, նաև անթւագիր, ինչպէս որ անանուն և անթւագիր ևն լինում էպոսները, վարքագրութիւն-ժամանակագրութիւնները։

Եւ մեր չարաբախտ ժողովրդի բարեբախտութիւնն է, որ այս անգամ գործ ունենք մի կենսագիր-վարքագիր-ժամանակագրի և նրա ստեղծած մի «էպոս»-ի հետ, որոնք ունեն և՛ անուն, և՛ թւագրութիւն։

Այդ անունն է Թումանեան։

Եւ նա ծնւել է 100 տարի առաջ։

# ԻՆՉ-Ը, ԻՆՉՊԷՍ-Ը ԵՒ ՈՐՊԷՍ-Ը

**— Ե՞րբ եւ ինչպէ՞ս էք սկսել բանաստեղծութիւններ գրել, Ի՞նչը մղեց բանաստեղծութիւն գրելուն, Ե՞րբ են տպագրել Ձեր առաջին գործերը, որտե՞ղ, ի՞նչ հանգամանքներում,**

*— Բանաստեղծութիւններ սկսել եմ գրել մանկական հասակիցս, 11 տարեկանից, քնաւ որեւէ իմաստ չդնելով նրանց մէջ, Տարօրինակ ձեւով իմ առաջին ոտանաւորը գրել եմ Տուրգենեւի «Առաջին սէր» պատմուածքը կարդալուց յետոյ: Շատ անբացատրելի բան է. ի՞նչ եմ հասկացել այդ պատմուածքից, ինչպէ՞ս է ստացւել, չեմ յիշում, միայն գիտեմ, որ նրա ազդեցութեան տակ եմ գրել իմ առաջին ոտանաւորը:*

*Յետոյ գրել եմ, ինպէս ընդունւած էր ժամանակին, ըստ օրացոյցի՝ յունւարի մէկ, մարտի ութ, մայիսի մէկ, նոյեմբերի եօթ, բայց ոչ ոք չի իմացել, որ ոտանաւոր եմ գրել և ոչ մէկին իմ գրածը ցոյց չեմ տւել, ոտանաւոր գրելը համարելով իմ՝ իբրև անհատի ամենաթաքուն, ամենասրբազան, ամենաքրմական արարողութիւնը: Եւ ինձ թւում է, ով չունի այդ զգացումը, նա կամ գրամոլ է, կամ կիսագրող:*

*Եօթ-ութերորդ դասարանում ես որոշեցի մի չտեսնւած գործ կատարել՝ հայ ժողովրդի պատմութիւնը չափածոյ շարադրել, և սկսեցի լրջօրէն գրել: Դպրոցից յետոյ համալսարան ընդունւեցի, որ այդ «ազգային սխրագործութիւնը» իրագործեմ: Բայց, ինչպէս և պէտք էր սպասել, դրանից ոչինչ չստացւեց և գրածս այրեցի:*

*Գիւղում գիտէի Եղիշէ Չարենցի անունը, Սուրխաթեանի դասագրքից գիտէի Չարենցի մասին, որ «հայ դրականութեան ողնաշարն է»՝ Խանջեանի խօսքով ասած, իսկ Սուրխաթեանի խօսքերն էլ անգիր գիտէի. «Չարենցի հորիզոնը համաշխարհն է, մոտիւները միջազգային»: Ուատի շատ ցաւեցի, երբ իմացայ, որ Չարենցի գրքերը հանելու են գրադա-*

*բանից, և «Գիրք ճանապարհի» մի օրինակը գողացայ ու տուն տարա։ Մինչև լոյս կարդացի գիրքը, չհաւատացի ո՛չ Խանջեանին, ո՛չ Սուրխաթեանին, որովհետև Զարենցը, ըստ իմ ճաշակի, քնաւ բանաստեղծ չէր։ Երբ համալսարան եկայ, այս անգամ նորից յոյժ գաղտնի, որ իսկապէս մի կեանք արժէր, կարդացի Զարենց, կարդացի և հաւատացայ, որ ինչպէս ես, այնպէս էլ նրանք, ում բանաստեղծ եմ համարել, բանաստեղծ չեն։ Դրանից յետոյ վճռականապէս համոզուեցի, որ բանաստեղծ չեմ և սկսեցի զբաղուել բանասիրութեամբ, գիտակցաբար չգրելով ոչ մի տող։*

*Երևի Զարենցն ինձ սպանել էր, յետոյ յարութիւն տալու թաքուն մտադրութեամբ։*

*Երկու տարի ոչինչ չգրելուց յետոյ, անկախ իմ կամքից, պարզապէս քնազդօրէն, ես նորից սկսեցի ոտանաւորներ գրել և տեսայ, որ բոլորովին ուրիշ որակի են։ Եւ իմ առաջին լուրջ փորձերը գալիս են Զարենցից, ապա՝ Սիամանթօից ու Վ.արուժանից, որոնց, բնականաբար, նոր էի կարդում։ Գրական այս փորձերին էլ ոչ ոք տեղեակ չէր, բացի մէկերկու շատ մտերիմ մարդկանցից։ Այդպէս իմ գրական առաջին փորձերը, իմ կամքից անկախ և հակառակ իմ կամքի, ընկան Ռուբէն Զարեանի ձեռքը, որ այն ժամանակ «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագիրն էր, և նա տպագրեց երեք բանաստեղծութիւն 1942 թուականին, մեր կեանքի ամենածանր տարում։*

—Դուք ասացիք, որ նախապես որեւէ իմաստ չէիք դնում Ձեր ոտանաւորների մէջ, գրում էիք հենց այնպես, եւ դա հասկանալի է, երբ նկատի ենք ունենում տարիքը. 11—12 տարեկան երեխան ի՞նչ իմաստ պիտի դնէր իր գրածների մէջ, բայց հետագայում եւ ընդհանրապե՞ս ի՞նչը Ձեզ մղեց բանաստեղծութեան եւ ինչի՞ էք ձգտում պոէզիայում։

*—Պոէզիան մարդկային ինքնարտայայտութեան ձևերից մէկն է, մարդկային խօսակցութեան ձևերից մէկը, այն խօսակցութեան, որ մարդուն տարբերում է կենդանուց, կենդանիներն էլ դա ունեն, որ արտայայտւում է ճչոցով, մռայունով, բառաչով, մի յատկանիշ, որ որոշակի երևում է նաև երեխայի մէջ։ Դա բնազդականն է, ենթագիտակցականը։*

երեխան լաց է լինում այն պատճառով, որ ասելիք ունի՝ կամ ջուր է ուզում, կամ հաց, կամ այլ բան։ Իսկ հասուն մարդու համար (մանաւանդ ոտանաւորով, այսինքն՝ անորոշ, ոչ բնական ձևով) խօսք ասելը ենթադրում է միայն մեծ ասելիքի պահանջ։ Եթէ չկայ այդ մեծ, ընդհանուրի համար կարևոր ասելիքը, բանաստեղծութիւնը դառնում է մկան կերած մի ընկոյզ, երբ ընկոյզի միջուկը չկայ, մնացել է միայն փուչ կեղևը։

Լև Տոլստոյը մի առիթով ասել է, որ ասելիք ունեցողի համար ոտանաւորով խօսելը նման է այն մարդուն, որ աթօր է անում պարելով, փոխանակ մաճը քռնելու, Տոլստոյի այս խօսքը շատ անգամ է օգտագործւած ոտանաւորի դէմ, որ ճիշտ չէ։ Բանն այն է, որ Տոլստոյը դա ասել է այն բանից յետոյ, երբ երեք անգամ փորձել է իր «Կոզակներ» վիպակը իբրև պօէմ գրել և եկել է այն եզրակացութեան, որ նիւթը չի տեղաւորւում ոտանաւորի մէջ, Տոլստոյը հասկացել է, որ ինքը բանաստեղծ չի, Բայց դրանից առաջ հասկացել է, որ գրողը նրա համար է, որ իր ասելիքը ասի։ Ուրեմն՝ Տոլստոյի խօսքը ոչ թէ ոտանաւորի դէմ է, այլ ասելիքի օգտին։

Իսկ ի՞նչ ասել է ասելիք բանաստեղծի համար։ Ասելիք ունեն բանւորը, գիտնականը, երեխան, Ո՞րն է տարբերութիւնը, ինձ թւում է, բանաստեղծի և գիտնականի գործը տրամագծօրէն տարբեր են ու հակառակ, Եթէ նրանք՝ գիտնականները, ուզում են ԱՇԽԱՐՀԸ ԲԱՑԱՏՐԵԼ, բանաստեղծն ուզում է ԱՇԽԱՐՀԸ ԳՆԱՀԱՏԵԼ։ Իսկ գնահատելու մի չափ ու կշիռ կայ՝ ճշմարտութիւնը, որ չի կարող լինել յաւերժական, և, փառք աստծոյ, յաւերժական չէ. թէ չէ կեանքը վաղուց մեռած կլինէր, Ճշմարտութիւնը չի եղել ու չի կարող լինել ո՛չ պաշտօնական, ո՛չ կանխորոշեալ, ո՛չ քարացած։ Այո՛, բանաստեղծը ճշմարտութիւն որոնող է, և դա վաղուց է ասւած, բայց և աւելին, ո՛չ միայն որոնող, որ կրաւորականութիւն է ենթադրում, այլև դարբնող, որ կեանքին նիւթաբերում է պարտադրում։ Առանց դրա բանաստեղծ ո՛չ եղել է, ո՛չ էլ կինի. վկայ համաշխարհային գրականութիւնը,

**—Ինչպէ՞ս է Ձեր մէջ ծնունդ առնում բանաստեղծութիւնը. Ինչպէ՞ս էք գրում բանաստեղծութիւնը՝ միանգամից, թէ մաս առ մաս։**

*—Գոնէ ինձ համար բանաստեղծութեան ծնունդը նման է աստղերի ծնունդին. ինչպէս աստղերը, բանաստեղծութիւնը առաջանում է միգամածութիւնից։ Ուստի և անորոշ միգամածութեան մասին որոշակի որևէ բան ասելը կլինի անհեթեթութիւն. ՈՏԱՆԱՒՈՐԸ միգամածութեան հետ կապ չունի, ամեն ինչ այնտեղ որոշակի է, ամեն ինչ պլանաւոր-ւած ու յայտնի, և հէնց այդ պատճառով էլ ոտանաւորները ո՛չ լոյս են տալիս, ո՛չ էլ յարատեւում. Բայց եթէ խօսքը իսկական ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ մասին է, ապա նա չի կա-րող չծագել հոգեկան մի հրաշեղուկ, քաօսային վիճակից, որով և ստեղծւել է մեր երկրագունդը. Նախապէս ոչ ոք Մա-սիսի մակետ չի սարքել։ Բայց ինչպէս աշխարհաստեղծու-թեան մէջ, այնպէս էլ բանաստեղծի սեղանի շուրջ այդ մի-գամածութիւն, անորոշութիւնը տևում է անորոշ ժամանակ. կարող է պատահել միգամածութիւնից նոր աստղ ծնւի երեք ժամւայ ընթացքում՝ իր որոշակի մեծութեամբ, լոյսի որոշա-կի գոյնով, իր որոշակի ուղեծրով և, ընդհակառակը, կարող է դա կատարւել տասնհինգից-քսան տարի յետոյ. Ես շատ բանաստեղծութիւններ ունեմ, որոնք ձև ու կերպարանք են ստացել իրենց առաջին տողերի ծնունդից տասնհինգ-քսան տարի յետոյ։*

*Առանձնապէս ինձ համար մեծ նշանակութիւն ունի բա-նաստեղծութեան վերնագիրը։ Մեծ մասամբ վերնագիր եմ յղանում, յետոյ դրա տակ՝ բանաստեղծութիւն. Ես չեմ կա-րող բանաստեղծութիւն գրել մէջտեղից կամ վերջից։ Եթէ առաջին տողերը պատրաստ չեն կամ դուր չեն գալիս ինձ, բանաստեղծութիւնը շարունակել չեմ կարող։ Մանաւանդ նաև այն պատճառով, որ ինչպէս իմ հմուտ ընթերցողները նկատած պիտի լինեն, գոնէ իմ յաջողւած բանաստեղծու-թիւնների մէջ առաջին տնից յետոյ, ոչ ոք չի կարող են-թադրել, թէ երկրորդ տունը ինչպիսի՞ն պիտի լինի, առաւել ևս՛ այդ ամենը ինչո՛վ պիտի վերջանայ։*

**— Ի՞նչ հանգամանքներում էք ամենից աւելի լաւ աշ-**

**խատում, օրուայ ո՞ր ժամերին էիք գրում։**

—Մենակութեան մէջ։ Եթէ երկու-երեք օր մենակ մնամ, ապա յաջորդ օրն անպայման կգրեմ։ Բայց, աւա՛ղ, վերջին ժամանակներս ամիսներ են անցնում, և երկու-երեք օր մենակ մնալու հնարաւորութիւն չի ստեղծւում։ Եւ միթէ այս ասելուց յետոյ պարզ չէ, որ իմ աշխատանքային լաւագոյն ժամերը դարձեալ մնում են կէսգիշերային ժամերը, երբ կարելի է մենակ մնալ, իր հետ լինել։

**— Իսկ ի՞նչ կասէիք «Անլռելի զանգակատուն» պօէմի ծնունդի մասին։ Որո՞նք են եղել այն առաջին տողերը, որոնցով դուք սկսել էիք այդ պօէմը։**

—Քիչ առաջ խօսեցինք «Կօզակների» գրման պատմութիւնից։ Տոլստոյը երկու-երեք անգամ այդ գործը գրել է չափածոյ, յետոյ գրել է այն, ինչ մեզ արդէն յայտնի է։ «Զանգակատան» ստեղծագործական պատմութիւնը և՛ նման է «Կօզակների» պատմութեանը, և՛ դրա ժխտումն է։ Նման է, քանի որ իմ ողջ կեանքում ես մտքիս մէջ գրել եմ «Զանգակատունը», ԳՐԵԼ ԵՄ զանազան «ՁԵՒԵՐՈՎ»՝ իբրև վէպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրութիւն, իբրև յօդուածների շարք, իբրև ողբերգութիւն կամ դրամայ. ես գիտէի, որ դա մի օր պիտի գրուի։ Եւ հակառակ «Կօզակների», «Զանգակատուն» պօէմը գրուեց միանգամից, զարմանալի հեշտութեամբ ու արագութեամբ։ Վերադառնալով քիչ առաջուայ պատկերիս, կարելի է ասել, որ միգամածութիւնը վաղուց պատրաստ էր, բայց ուղեծիր չկար, որով պիտի պտտուէր այս նոր «մոլորակը»։ Իսկ դա կատարուեց Մոսկուայում, մի սարսափելի սառնամանիքային օր։ Նոր էի վերջացրել իմ «Մարդը ափի մէջ» ժողովածուն և հարիւրաւոր ծխախոտներ ծխելուց յետոյ դուրս էի եկել սառնամանիքի մէջ մի բաժակ գարեջուր խմելու։ Եւ աղմկոտ, կեղտոտ, ցուրտ, ծխաշատ գարեջրատանը, հեռաւոր Մոսկուայում, յանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասեան երգը։ Ինձ համար ամեն ինչ պարզուեց մի վայրկեանում. պարզուեց նախ՝ վերնագիրը՝ «Կոմիտասեան համանուագ», յետոյ՝ «Հայոց երգարան», յետոյ՝ «Զարմանալի զանգակատուն», յետոյ՝ «Անլռելի զանգակատուն», ապա նաև կառուցուածքը՝ ըստ կոմիտասեան երգերի, այ-

*ինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կեանքը ըստ նրա համապատասխան երգերի. եթէ որբ է՝ «Անտունի», եթէ պանդուխտ է՝ «Կռունկ», եթէ սիրոյ մասին է՝ «Սոնա եար»: Եւ քանի որ գործը մտայղացուած էր իբրև համանուագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա, ուրեմն պիտի ունենար իր հանդիսաւոր սկիզբը: Այդ պատճառով էլ գարեջրատնից տուն հասնելով նոյն օրը գրեցի պօէմի այն մասերը, որոնք յետոյ պօէմի կառուցուածքի թելադրանքով սկզբից տեղափոխուեցին վերջ.*

**Դու վարդապե՞տ,**

**Դու Ամենայն Հայոց երգի վեհափառն ես...**

*(եւ շա՛րունակութիւնը մինչեւ վերջ)*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ էջ

Այս հրատարակութեան առիթով 5
Կենսագրական գծեր 7

## ՍԻՐՈՅ ՃԱՆԱՊԱՐՀ—

Ընկածները 13
Դու fո խաղողի ճման ես եղել 15
Երեւանին 16

## ՆՈՐԻՑ ՔԵՋ ՀԵՏ

Հայաստան 25
Մor ձեռները 27
Ջեմ ուտացել 29

ՈՒԹԵԱԿՆԵՐ 30

## ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԷՋ

### ՆՈՑՆ ՀԱՍՑԷՈՎ

Դու 39
Առաջին սէրը 41
Լուսնահար կաroտ 42
Գլխապտոյտ 44
Պատահաբար են պատահում կեանքում 47

### ԹՌՈՒՑԻԿ ԵՐԳԵՐ

Աւետus 48
Վարf մեծաց 49
Բանաստեղծի կեանքը 51
Միայնակ ծառը 53
Ոսկին վերսին ոսկի է մնում 54
Միանգամից 56

### ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԷՋ

Իբրեւ սկիզբ 57
Խոստովանում եմ 58
Մեռնել 61

Երգել 62
Ասում եմ 67
Չեմ յարգում 69
Վիճում եմ 71
Սարսռում եմ 74
Գժւում եմ 75
Դիմում եմ պահանջելու պէս 76
Հաւատում եմ 80
Աղաչում եմ 83
Երկմտելով հաստատում եմ 85
Մի պահ մեծամտում եմ 86

ԱԿԱՆՋԴ ԲԵՐ ԱՍԵՄ

Ոեսիճ չեմ թուղթ եմ 87
Համրիչ եմ դարձել 88
Հաւատոյ հանգանակ 89

ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ

Երգ եռաձայն 90
Մայրենի լեզու 95
Խօսք հաւատիքի 99

## ՊՕԷՄՆԵՐ

Ուշացած իմ սէր 109
Երգ երգոց 139
Եւ այր մի՝ Մատեոց անուն 159

## ԵՂԻՑԻ ԼՈՅՍ

Նորօրեայ աղօթք 191
Առաւօս լուսոյ 193
Լոյս զարթ 195

ԴԻՄԱԿՆԵՐ

Միտճանիճ 198
Խեղկատակը 199
Դիմակահանդէսի գլխաւորը 200

ԴԱՐԱԿԷՍԻ ՊԱՐԳԵԻՆԵՐԸ
Աւխարհ... աւխարհ... 204
Սխալ խօսք սխալի մասին 205
Անուռուցիւն 208

ՈՂՋՈՅՆԻ ՔՄԱՅՔՆԵՐ
Բարեւ 212

ՆՈՐԻՑ ՉԵ՛Ն ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ
Սէրը 217
Հպատակի խոովութիւնը 219
Դու մի հարցրու 222
Սիրոյ փոխարէն 224
Տախտակների հանգրւանում 226

ԱՍՏԾՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ
Բանաստեղծի ծնունդը 229
Բանաստեղծները 230
Բանաստեղծի բախտը 232
Երես ու ասատո 234
Ձառագայթային ախտ 235
Հիմն հարանձաւի 237
Ծարաւ 238
Ծերանում եմք 241
Սերունդների հերթափոխութիւնը 243

## ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

Անխորագիր 247
Լինում է չի լինում 251
Ա՛խ, հաւատայիր գոնէ ասծուն 252
Կոմիտասի դիմանկարի առաջ 253
Ամենքը իրենց բախտից են դժգոհ 258
Հայասատան 260
Հողը հայելի 261
Պատրանք 262
Երկու սիրոյ արանքում 263

Ու եթէ հայր եմ 265
Իմ կտակը 1 266
Իմ կտակը 2 267
Իմ կտակը 3—4 279
Իմ կտակը 5 270
Իմ կտակը 6 271
Իմ կտակը 7 272
Իմ կտակը 8 273
Իմ կտակը 9—10 274
Քիչ եմ, բայց հայ եմ... 275
Բանաստեղծի վախը 278
Հայուհիները 280

Մէկի կողմից երկու կատակերգ
Երեք աղչկայ վրայ 283
Պիտի... 285
Մի՛... Չի՛... 286
Հայրենիք 287
Հանելուկ առաջին 288
Հանելուկ երկրորդ 289
Երեւան — Էրէբունի 290
Սարդարաբատ 291

## ԱՐՁԱԿ

Թումանեանի հետ 295
Ինչ-ը, ինչպես-ը եւ որպես-ը 301

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 307

Ստանալու համար դիմել՝
«ՆԱՅԻՐԻ» գրատուն
Բեհրան, պողոտայ էնղելաբ,
Ֆալէջ, թիւ 1022
Հեռախօս 677578

